ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ

XXXIII (2)

ԵՐԵՎԱՆ • 2020

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST

VOLUME XXXIII, PART 2

YEREVAN
"Daso print" PUBLISHING HOUSE
2020

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

ТОМ XXXIII, ЧАСТЬ 2

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «Дасо принт »
2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱ 26

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

ՀԱՏՈՐ XXXIII, ՊՐԱԿ 2

ԵՐԵՎԱՆ
«Դասո պրինտ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Ժողովածուն հրատարակվում է 1960 թ.-ից

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռոբերտ Ղազարյան (գլխավոր խմբագիր) - պ.գ.թ., **Ռուսլան Ցականյան** (պատասխանատու քարտուղար) - պ.գ.թ., **Ռուբեն Սաֆրաստյան** - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, **Նիկոլայ Հովհաննիսյան** - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, **Վահան Բայբուրդյան** - պ.գ.դ., **Արամ Քոսյան** - պ.գ.դ., **Ազատ Բոզոյան** - պ.գ.դ., **Ալեքսան Հակոբյան** - պ.գ.դ., **Գոռ Մարգարյան** - պ.գ.թ., **Լիլիթ Հարությունյան** - պ.գ.թ., **Քրիստինե Մելքոնյան** - պ.գ.թ.:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Ժալգաս Ադիլբաեվ - պ.գ.թ., Մոնղոլիայում Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպան (Ղազախստան), zhal.adil@mail.ru: **Յակովոս Ակցօղլու** - պ.գ.թ., Թրակիայի Դեմոկրիտոսի համալսարան (Հունաստան), izak@cyta.gr: **Իզաբել Օժե** - պ.գ.դ., Մոնպելյեի համալսարան (Ֆրանսիա), isabelle.auge@univ-montp3.fr: **Ջուզեպպե Չեչերե** - բ.գ.թ., Բոլոնիայի համալսարան (Իտալիա), giuseppe.cecere3@unibo.it: **Մարիամ Չխարտիշվիլի** - պ.գ.դ., Թբիլիսիի պետ.համալսարան (Վրաստան), mariam.chkhartishvili@tsu.ge: **Վլադիմիր Դմիտրիև** - պ.գ.թ., Պսկովի պետ.համալսարան (Ռուսաստան), dva_psk@mail.ru: **Հրաչ Մարտիրոսյան** - բ.գ.թ., Լեյդենի համալսարան (Նիդերլանդներ), hrch.martirosyan@gmail.com: **Աննա Շիրինյան** - բ.գ.թ., Բոլոնիայի համալսարան (Իտալիա), anna.sirinian@unibo.it:

Խմբագրական խորհրդի հասցե՝ Մ. Բաղրամյան պող. 24/4, ք. Երևան, 0019, ՀՀ **Հեռ.** (+374 10) 58 33 82, (+374 10) 56 52 11

Էլ. փոստ՝ journal@orient.sci.am

Կայքէջ՝ http://www.orientcpnme.am

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ. XXXIII/2 / - Եր.: «Դասո պրինտ» հրատ., 2020.- 310 էջ :

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի հերթական (XXXIII/2) հատորը հոբելյանական է: Այն ընդգրկում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հին և միջին դարերի պատմության, նոր և նորագույն ժամանակների, ինչպես նաև աղբյուրագիտության և բանասիրության հարցերի վերաբերյալ հետազոտություններ: Զգալի տեղ է հատկացված տարածաշրջանի քաղաքական զարգացումների, միջազգային հարաբերությունների և այլ հիմնախնդիրների լուսաբանմանը: Նախատեսվում է արևելագետների, հայագետների, միջազգայնագետների համար:

ISSN 1829-1422 © ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2020

Published by the decision of the Scientific Council of the Institute of Oriental Studies of NAS RA

The periodical has been published since 1960

EDITORIAL BOARD:
Robert Ghazaryan (Editor-in-Chief) - Ph.D; **Ruslan Tsakanyan** (Executive Secretary) - Ph.D; **Ruben Safrastyan** - Doctor of Sciences, Full Member (academician) of the NAS RA; **Nikolay Hovhannisyan** - Doctor of Sciences, Corresponding Member of NAS RA; **Vahan Bayburdyan** - Doctor of Sciences; **Aram Kosyan** - Doctor of Sciences; **Azat Bozoyan** - Doctor of Sciences; **Alexan Hakobyan** - Doctor of Sciences; **Gor Margaryan** - Ph.D; **Lilit Harutyunyan** - Ph.D; **Kristine Melkonyan** - Ph.D

FOREIGN MEMBERS OF THE EDITORIAL BOARD:
Zhalgas Adilbayev - Ph.D., Ambassador Extraordinary and Plenipotentiary Republic of Kazakhstan in Mongolia (Kazakhstan), zhal.adil@mail.ru; **Iakovos Aktsoglu** - Ph.D., Democritus University of Thrace (Hellas), izak@cyta.gr; **Isabelle Augé** - Doctor of Sciences, University of Montpellier (France), isabelle.auge@univ-montp3.fr; **Giuseppe Cecere** - Ph.D, Bologna University (Italy), giuseppe.cecere3@unibo.it; **Mariam Chkhartishvili** - Doctor of Sciences, Tbilisi State University (Georgia), mariam.chkhartishvili@tsu.ge; **Vladimir Dmitriev** - Ph.D, Pskov State University (Russia), dva_psk@mail.ru; **Hrach Martirosyan** - Ph.D, Leiden University (Netherlands), hrch.martirosyan@gmail.com; **Anna Sirinian** - Ph.D, Bologna University (Italy), anna.sirinian@unibo.it.

Editorial Office: Marshal Baghramyan Ave. 24/4, Yerevan 0019, Armenia
Tel. (+374 10) 58 33 82, (+374 10) 56 52 11
E-mail: journal@orient.sci.am **http://www.orientcpnme.am**

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST. XXXIII/2 / - Yerevan: «Daso print» Publishing house, 2020. 310 p.:

The current publication of the "The Countries and Peoples of the Near and Middle East" is an anniversary release. It includes researches on the ancient, medieval, modern and contemporary history of the countries of the Near and Middle East history, as well as issues of source studies and philology. A considerable part is devoted to the ongoing developments and processes in the Eurasian region. The periodical may be of interest to orientalists, specialists in the field of Armenology and International Relations.

ISSN 1829-1422
© Institute of Oriental Studies of NAS RA, 2020.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ——— 12

ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ——— 15

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԲՈՍՖՈՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 35-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ——— 20

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ
ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՂ ՀՈԼՈՑԵՆՈՒՄ ——— 58
ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ
ԻՐԱՆԻ ՍՊԱՀԲԵՏԸ ԵՐՐՈՐԴ ԴԱՐԻ ՍԱՍԱՆՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ——— 77
ԳՈՌ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԱԿ
ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ) ——— 103

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ
ՍՏԵՊԱՆ ԲՈՒՌՆԱՇԵՎԻ «ՎՐԱՍՏԱՆԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՔԱՐԹԼԻԻ ԵՎ ԿԱԽԵԹԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ——— 117
ՀԱՅԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԿՈՆՎՈՐՑԻՈՒՄԻ ՀԵՏ (1954 Թ.) ——— 140

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ (1990-2015 ԹԹ.) ——— 161

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ——— 181

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔԱՂՐԹԱԿԱՆՔ - ԱՐԱԲՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ - 207

«ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ» (1960-2020 ԹԹ.) ——— 229

ՀԱՎԵԼՈՒՄ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ——— 300

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ——— 302

СОДЕРЖАНИЕ

ОТ РЕДАКЦИИ ——— 12

ОТ СЕКТОРА ——— 15

НИКОЛАЙ ОГАНЕСЯН
ОТ БОСФОРА ДО ТИХОГО ОКЕАНА (РАЗМЫШЛЕНИЯ ПО ПОВОДУ 35-ЛЕТИЯ ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ НАН РА) ——— 20

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

АРАМ КОСЯН
ПРИРОДНО-КЛИМАТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ В ПЕРИОД РАННЕГО ГОЛОЦЕНА ——— 58

АРТУР МЕЛИКЯН
СПАХБЕТ ИРАНА В САСАНИДСКОЙ ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМЕ ТРЕТЕГО ВЕКА – 77

ГОР МАРГАРЯН
СВЕДЕНИЯ АРМЯНСКИХ ИСТОЧНИКОВ О РАСПАДЕ ИМПЕРИИ АК КОЮНЛУ (КРАТКИЙ ОБЗОР) —— 103

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

ГОАР МХИТАРЯН
ТРУД С. БУРНАШЕВА «КАРТИНА ГРУЗИИ ИЛИ ОПИСАНИЕ ПОЛИТИЧЕСКОГО СОСТОЯНИЯ ЦАРСТВ КАРТАЛИНСКОГО И КАХЕТИНСКОГО» - ПЕРВОИСТОЧНИК ИСТОРИИ ВОСТОЧНОЙ ГРУЗИИ - 117

АЙК СОГОМОНЯН
СОГЛАШЕНИЕ ИРАНА С МЕЖДУНАРОДНЫМ НЕФТЯНЫМ КОНСОРЦИУМОМ (1954) ——— 140

САРКИС ГРИГОРЯН
ИСЛАМСКИЙ КРАЙНИЙ РАДИКАЛИЗМ В КАВКАЗСКОМ РЕГИОНЕ РОССИИ (1990-2015 ГГ.) — 161

АРАКС ПАШАЯН

ПОЗИЦИЯ ОРГАНИЗАЦИИ ИСЛАМСКОГО СОТРУДНИЧЕСТВА ПО НАГОРНО-КАРАБАХСКОМУ КОНФЛИКТУ ——— 181

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ

АЙКАЗ ГЕВОРГЯН
КАГИРДАКАНК - УПОМИНАНИЕ ОДНОГО ЭТНОНИМА АРАБОВ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ ——— 207

«СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА» (1960-2020 гг.) ——— 229

ДОПОЛНЕНИЕ ОТ РЕДАКЦИИ ——— 300

РУКОВОДСТВО ДЛЯ АВТОРОВ ---------- 302

CONTENTS

FROM EDITORIAL BOARD ——— 12

FROM SECTOR ——— 15

NIKOLAY HOVHANNISYAN
FROM BOSPORUS TO PACIFIC OCEAN: A MEDITATION OF THE 35TH ANNIVERSARY OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA ——— 20

HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

ARAM KOSYAN
NATURAL AND CLIMATIC SITUATION IN THE ARMENIAN HIGHLAND DURING EARLY HOLOCENE - 58

Arthur Meliqyan
THE ĒRĀN–SPĀHBED IN THE THIRTH CENTURY SASANIAN STATE SYSTEM ——— 77

GOR MARGARYAN
LES SOURCES ARMÉNIENNES SUR L'EFFONDREMENT DE L'ÉTAT DES AQ QOYUNLUS (BREF APERÇU) —— 103

MODERN AND CONTEMPORARY HISTORY

GOHAR MKHITARYAN
THE HISTORY OF EASTERN GEORGIA ACCORDING TO STEPAN BURNASHEV'S WORK "THE PICTURE OF GEORGIA OR THE DESCRIPTION OF THE POLITICAL SITUATION OF THE KINGDOMS OF KARTLI-KAKHETI"

HAYK SOGHOMONYAN
IRAN'S AGREEMENT WITH THE INTERNATIONAL OIL CONSORTIUM (1954) ——— 140

SARGIS GRIGORYAN
ISLAMIC EXTREMISM IN THE CAUCASIAN REGION OF RUSSIA (1990-2015) ——— 161

ARAKS PASHAYAN

POSITION OF THE ORGANISATION OF ISLAMIC COOPERATIONON NAGORNO-KARABAKH CONFLICT 181

SOURCE STUDY AND PHILOLOGY

HAYKAZ GEVORGYAN
K'AIRT'AKANK' - ATTESTATION OF ONE ETHNONYM REFFERING TO THE ARABS IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY ——— 207

"THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST" (1960-2020) ——— 229

ADDITION FROM EDITORIAL BOARD ——— 300

AUTHOR'S GUIDE ——— 302

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

2020 թ. լրանում է հայկական արևելագիտական մտքի կարևորագույն արգասիքներից մեկի՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուի 60-ամյակը:

Ժողովածուն իր գիտական կյանքն է սկսել դեռևս 1960 թ., երբ դեռ չէր կազմավորվել Արևելագիտության ինստիտուտը և գործում էր միայն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորը (1958 թ.-ից): Ժողովածուի առաջին երկու հատորները կոչվում էին Արևելագիտական ժողովածու, միայն երրորդ հատորը լույս ընծայվեց նոր՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» անվամբ և կարճ ժամանակամիջոցում դարձավ Հայաստանի կարևորագույն արևելագիտական ժողովածուներից մեկը: Արդեն հրատարակվել է 34 հատոր:

Ժողովածուի ստեղծման ակունքներում են կանգնած և խմբագրական աշխատանքները տարբեր տարիներին ղեկավարել են Հայաստանում և արտերկրում հայտնի արևելագետներ՝ Հ. Գ. Ինճիկյանը, Հ. Մ. Եգանյանը, Ե. Ղ. Սարգսյանը, Գ.Խ. Սարգսյանը, Ն. Հ. Հովհաննիսյանը, Ռ.Ա. Սաֆրաստյանը:

Մատենաշարի հրատարակությունը ժամանակավորապես ընդհատվեց Հայաստանի Հանրապետության համար բավականին ծանր 1990-ական թթ. սկզբներին, սակայն 1996 թ. Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ն.

Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ վերսկսվեց ժողովածուի ընդհատված հրատարակությունը:

Ժողովածուում լույս տեսնող հոդվածները միշտ եղել են արդիական, ունեցել են գիտական կարևոր նշանակություն: 60 տարիների ընթացքում հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով Մերձավոր և Միջին Արևելքի պատմության հին շրջանի, միջնադարի, նոր և նորագույն ժամանակաշրջանի, ինչպես նաև արևելյան աղբյուրագիտության, բանասիրության, լեզվաբանության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր հոդվածներ են լույս ընծայվել Ժողովածուում: Մատենաշարի հատորներում արծարծված խնդիրները և հոդվածների գիտական բարձր մակարդակը նրան ապահովել են արժանի հեղինակություն ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտերկրում: Տպագրվել են ոչ միայն հայաստանյան արևելագետների, այլ նաև արտերկրի արևելագետների աշխատությունները:

2019 թ.-ից մատենաշարը տպագրվում է տարեկան երկու հատորով: Ժողովածուի խմբագրական աշխատանքներում ընդգրկված են նաև արտասահմանյան հայտնի գիտնականներ:

Ժողովածուն իր առջև խնդիր է դրել դառնալ միջազգային մակարդակի պարբերական, որպեսզի օտարալեզու ընթերցողներին հասանելի դառնա հայ արևելագիտական մտքի արգասիքները:

Մատենաշարը, ըստ էության, նաև հայ արևելագիտության տարեգրությունն է, արժեքավոր գիտական հուշարձան, հայ արևելագիտական մտքի զարգացման բարձր մակարդակի խոսուն վկայությունը:

Ներկա XXXIII/2 հատորը, շարունակելով իր նախորդների լավագույն ավանդույթները, ունի մի

կարևոր առանձնահատկություն: Այստեղ տեղ է գտել նաև նախորդ տարիներին հրատարակված բոլոր աշխատությունների ցանկը ըստ տարիների:

ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ*

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն ժողովածուի մեջ ամփոփված են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորի աշխատակիցների գիտական հոդվածները:

Հայտնի է, որ հայ և արևելյան շատ ժողովուրդների պատմությունն ու կուլտուրան սերտորեն կապված են իրար հետ: Այս կապերի ակունքները գալիս են դարերի խորքից և իրենց արտացոլումն են գտել դեռևս V դարի մեր մատենագիրներ՝ Ագաթանգեղոսի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, VII դարի հուշարձան «Աշխարհացույցի» հեղինակ Անանիա Շիրակացու և հետագա դարերի մյուս հայ պատմագիրների երկերում:

XIX դարի սկզբներից Ռուսաստանի արևելագիտության գլխավոր օջախներից մեկն էր Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, որը արևելագետների մի ամբողջ սերունդ է դաստիարակել: Լազարյան ճեմարանի անվան հետ են կապված հայ անվանի արևելագետներ Ստեփանոս Նազարյանի, Մկրտիչ Էմինի, Քերովբե Պատկանյանի, Գրիգոր Խալաթյանի և շատ ուրիշների անունները, որոնք մյուս հայ գիտնականների հետ միասին արժեքավոր մենագրություններ են ստեղծել արևելյան

* Առաջին հատորի խմբագրական խորհրդի «Սեկտորի կողմից» վերտառությամբ հայերեն և ռուսերեն տեքստերը ներկայացնում ենք առանց փոփոխությունների և խմբագրման: Տե՛ս Արևելագիտական ժողովածու, Հ. I, Երևան 1960, էջ 5-8:

ժողովուրդների պատմության, լեզվի և գրականության վերաբերյալ:

Արևելագիտության հիմնական ճյուղերից մեկի՝ քրդագիտության բնագավառում ևս մեծ ներդրում ունեն հայ հեղինակները: Քրդագիտության զարգացմանը նպաստել են հայ մեծանուն լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, իսկ հետագայում Ս. Եղիազարյանը, Ս. Հայկունին, Ա. Խաչատրյանը և այլ հայ քրդագետներ:

Սովետական իշխանության տարիներին Արևելքի ժողովուրդների հին և միջին դարերի պատմության ու կուլտուրայի, Հայաստանի և հարևան երկրների պատմական կապերի շուրջ հայ գիտնականները հրատարակել են մի շարք կարևոր ուսումնասիրություններ: Հիշատակության արժանի են ակադեմիկոսներ Հ. Մանանդյանի, Հր. Աճառյանի, Գր. Ղափանցյանի, Հ. Օրբելու, պրոֆ. Ռ. Աբրահամյանի և նրանց աշակերտների աշխատությունները:

Հայկական ՍՍՌ-ում զգալի գիտահետազոտական աշխատանքներ են ծավալվել նաև ուրարտագիտության, խեթագիտության և ասորագիտության բնագավառներում, հրապարակվել են Մատենադարանի եզակի արժեք ներկայացնող արևելյան առանձին ձեռագրեր, կազմվել են բառարաններ:

Վերջին տարիներս ռեսպուբլիկայում աճել են արևելագիտական նոր, երիտասարդ մասնագետներ, ստեղծվել են արևելագիտության նոր կենտրոններ:

1958 թ. հոկտեմբերից Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում կազմակերպված Արևելագիտության սեկտորը իր ջանքերը կենտրոնացնում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նոր և նորագույն շրջանի պատմության,

տնտեսության և կուլտուրայի առանձին ակտուալ խնդիրների գիտական մշակման վրա:

Սեկտորի գիտահետազոտական աշխատանքներում պատշաճ ուշադրություն է դարձվելու Սովետական Միության խաղաղասիրական արտաքին քաղաքականության, Արևելքի երկրների ազգային ազատագրական շարժումների և քաղաքական ու տնտեսական անկախության համար ժողովուրդների մղած պայքարի, ինչպես նաև ժամանակակից էտապում իմպերիալիզմի գաղութային քաղաքականության հարցերի լուսաբանմանը:

Սեկտորի գիտական պլաններում որոշակի տեղ են գրավելու քրդագիտության պրոբլեմները, Արևելքի երկրներում հայկական գաղութների պատմությունը, արևելյան տարբեր լեզուների բառարաններ կազմելը:

«Արևելագիտական ժողովածու»-ն պարունակում է հետազոտվող պրոբլեմների առանձին հարցերի վերաբերյալ հոդվածներ, որոնց հեղինակները հավակնություն չունեն քննվող հարցերի լուսաբանումը համարել սպառիչ:

Սեկտորը շնորհակալությամբ կընդունի իր առաջին ժողովածուի մասին եղած քննադատական դիտողություններն ու կարծիքները:

ОТ СЕКТОРА

В предлагаемом вниманию читателей сборнике помещены научные статьи сотрудников Сектора востоковедения Академии наук Армянской ССР.

Широко извстны исторические и культурные связи армян с народами Востока. Уходящие вглубь веков корни этих связей отражены уже в трудах историографов V века Агатангеоса, Езника Кохбаци, Егише, Мовсеса Хоренаци, автора памятника VII века «Ашхарацуйц» («География») Анания Ширакаци и других армянских историографов прошлого.

С начала XIX века один из главных очагов востоковедной науки России - Лазаревский институт восточных языков в Москве подготовил целую плеяду востоковедов. С этим Институтом связаны имена известных востоковедов-армян: Степаноса Назаряна, Мкртича Эмина, Керовбе Патканяна, Григора Халатяна, которые вместе с другими армянскими учеными создали ряд монографий по истории, языку и литературе народов Востока.

Развитию курдоведения - составной части востоковедной науки - способствавали известный армянский просветитель Хачатур Абовян, а позднее исследования С. Егиазарова, С. Айкуни, А. Хачатряна и других армянских курдологов.

В годы советской власти армянскими учеными были изданы ценные исследования по древней и средневековой истории и культуре народов Востока, а также по историческим связям Армении с сопредельными странами. Значительными из них являются труды академиков А. Манандяна, Г. Ачаряна, Г. Капанцяна, И. Орбели, проф. Р. Абрамяна и некоторых их учеников.

В Армянской ССР проделана значительная научно-исследовательская работа также в области урартологии, хеттологии и ассириологии; опубликованы уникальные восточные рукописи Матенадарана, изданы словари.

За последнее время в республике выросли новые кадры востоковедов, созданы центры востоковедной науки. Организованный в октябре 1958 г. Сектор востоковедения Академии наук Армянской ССР сосредоточит свои усилия на научной разработке отдельных актуальных проблем новой и новейшей истории, экономики и культуры стран Ближнего и Среднего Востока. В научно-исследовательской работе Сектора должное внимание будет уделено миролюбивой внешней политике Советского Союза, вопросам национально-освободительного движения и борьбы народов за политическую и экономическую независимость в странах Востока, а также анализу колониальной политики империализма на современном этапе.

В научных планах Сектора определенное место займет исследование проблем курдоведения, истории армянского колоний в странах Востока, составление словарей восточных языков, публикация источников.

Для выполнения намеченных задач Сектор объединит усилия востоковедов республики.

В «Востоковедческом сборнике» публикуются научные статьи, охватывающие некоторые вопросы исследуемых проблем. Авторы статьей не претендуют на всестороннее освещение этих вопросов.

Сектор с благодарностью примет критические замечания и отзывы о своем первом сборнике.

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԲՈՍՖՈՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ
Մտորումներ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի 35-ամյակի առթիվ*

Երբ 1943 թվականի դեկտեմբերին՝ երկրորդ համաշխարհային պատերազմի դժնդակ տարիներին, Խորհրդային Միության կառավարության որոշումով հիմնվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, ապա նրա կառույցներում չէր նախատեսված արևելագիտական առանձին կենտրոնի ստեղծում: Եվ դա այն դեպքում, երբ հայ արևելագիտության ձևավորման ակունքները հասնում են առնվազն հինգերորդ դար:

Սակայն արևելագիտությունն այդ «պարտության» դիմաց «ռևանշ» վերցրեց նրանով, որ նորաստեղծ ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց արևելագետ Հովսեփ Օրբելին: Մեծ գիտելիքների տեր և արտակարգ ներշնչող արտաքինով օժտված այդ պատկառելի անձնավորության նշանակումը պրեզիդենտի պաշտոնում պատահականություն չէր: Նա այդ ժամանակ միջազգային ճանաչում ունեցող թերևս ամենամեծ և հայտնի հայ գիտնականն էր, անառարկելի

---

* Հոդվածը տպագրվել է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուի 2006 թ. համարում (ՄՄԱԵԺ, XXV, Երևան, 2006, էջ 5-25): Այստեղ Ն. Հովհաննիսյանի մտորումներն են ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ստեղծման, անցած ճանապարհի և ապագայի տեսլականի առումով: Խոսք է գնում նաև ժողովածուի ստեղծման, անվանակոչման և այլնի մասին: Հոդվածը ներկայացվում է առանց խմբագրման և փոփոխությունների (խմբագրություն):

հեղինակություն հասարակական գիտությունների՝ այդ թվում և արևելագիտության ասպարեզում: Նա Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս էր, ղեկավարում էր Լենինգրադի աշխարհահռչակ էրմիտաժը, եղել էր մի շարք միջազգային կոնգրեսների կազմակերպիչ և ղեկավար: Իսկ հիտլերյան հանցագործների դեմ 1945 թ. Նյուրենբերգյան միջազգային դատարանում իր փայլուն մեղադրական ելույթով առաջացրել էր տարբեր երկրների գիտնականների, իրավաբանների, քաղաքական, պետական և հասարակական գործիչների հիացմունքն ու երախտագիտությունը:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի բարձր պարտականությունները նման համբավավոր և մեծավաստակ գիտնականին վստահելը մեծապես նպաստեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի հեղինակության բարձրացմանը և գիտությունների ակադեմիաների համակարգում նրան արժանի բարձր տեղ ապահովելուն:

Արևելագետ-հայագետ Հովսեփ Օրբելին Հայաստանի գիտությունների ակադեմիան գլխավորեց մինչև 1947 թ., երբ նա արդեն կատարել էր իր հիմնական խնդիրը՝ ոչ միայն ավարտել ակադեմիայի կազմակերչական ձևավորումը և կայացումը, այլև ամրապնդել նրա դիրքերը միջազգային գիտական համակարգում: Եվ նա հեռացավ՝ «Մավրն արեց իր գործը, մավրը հեռանում է»:

Տարիներն անցնում էին և քանի գնում, այնքան ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում հայկական գիտության կաճառում առանձին արևելագիտական կենտրոնի բացակայության բացասական

հետևանքները՝ մի կողմից, և նման կենտրոն ունենալու անհրաժեշտությունը՝ մյուս կողմից: Դրա անհրաժեշտությունն ավելի էր ընդգծվում, եթե նկատի ունենանք, որ խորհրդային արևելյան մի շարք հանրապետություններում արդեն ստեղծվել և գործում էին արևելագիտական կենտրոններ՝ անգամ արևելագիտական ինստիտուտներ: Եվ դա այն դեպքում, երբ նրանք իրենց արևելագիտական ավանդույթներով, գիտության այդ ճյուղի հնությամբ, սկզբնաղբյուրների առատությամբ ու բազմազանությամբ, գիտական նվաճումներով ակնհայտորեն զիջում էին հայ արևելագիտությանը, որը վաղուց իր արժեքավոր, ինքնուրույն և շքեղ բնակատեղին էր կառուցել գիտության համաշխարհային այդ ուղղության մեջ, որն անհնար էր շփոթել ուրիշ մեկի հետ:

Եվ վերջապես եկավ այդ պահը: 1958 թ.՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումից 15 տարի անց, որոշվեց գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծել ինքնուրույն արևելագիտական հաստատություն, որը կոչվեց «ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտոր»: Այդ որոշման տակ դրված էր ակադեմիայի պրեզիդենտ, համաշխարհային հռչակ ունեցող, հայկական ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնում արևելագետ Հովսեփ Օրբելու անմիջական հաջորդի՝ աստրոֆիզիկայի հիմնադիրներից մեկի՝ Վիկտոր Համբարձումյանի ստորագրությունը:

Թեև արևելագիտական նոր կենտրոնը պաշտոնապես կոչվում էր «Արևելագիտության սեկտոր», սակայն նա ինքնուրույն միավոր էր և ենթակա էր

անմիջապես ակադեմիայի նախագահությանը[1]: Այդուհանդերձ, հայ մտավորականության շրջանում եղան դժգոհության արտահայտություններ այն կապակցությամբ, որ միանգամից չստեղծվեց արևելագիտության ինստիտուտ, ինչպես հարևան Վրաստանամ և Ադրբեջանում: Դրա հիմնական «մեղավորներին» պետք է փնտրել Հայաստանի և ակադեմիայի ղեկավարության մեջ, որոնք, ինչպես հաճախ է լինում, անհասկանալի և անհարկի զգուշավորություն էին ցուցաբերել այդ հարցում՝ դրսևորելով որոշ անվստահություն տեղական մասնագետների նկատմամբ: Այդ կարգավիճակի պատճառով Հայաստանի ակադեմիայի Արևելագիտության սեկտորը շատ հաճախ համամիութենական զանագան հանդիպումների և միջոցառումների ժամանակ ռեյտինգային հարցերում հայտնվում էր ոչ նպաստավոր դրության մեջ:

---

[1] Մեր նպատակը չէ այստեղ հանգամանորեն անդրադառնալ կամ լուսաբանել հայ արևելագիտության և արևելագիտական կենտրոնի անցած ուղին և պատմությունը՝ իր մանրամասնություններով: Այդ հարցը բավականին հանգամանորեն լուսաբանված է Հ. Ինճիկյանի, Վ. Բայբուրդյանի, Գ. Սարգսյանի և այլոց աշխատություններում: Տես նաև՝ Н.О. Оганесян, Становление и развитие востоковедения в советской Армении- "Востоковедные центры в СССР /Азербайджан, Армения, Грузия, Украина/, Москва, Наука, 1988; «Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան 60 տարում», Երևան, 2003 և այլն: Մեր խնդիրն է ուրվագծել հայ արևելագիտության զարգացման հիմնական միտումները, առանձնացնել նրա զարգացման փուլերը, ցույց տալ այն դժվարությունները, որ կանգնած են եղել նրա ճանապարհին 1990-ականների վերջերին, նրա ճգնաժամից դուրս գալը և այն վերելքը, որ նա ապրեց XX դարի վերջերին-XXI դարի սկզբներին:

Սեկտորի կարգավիճակը հետագայում բարդություններ և դժվարություններ ստեղծեց նաև նրա ինստիտուտի վերակազմավորելու հարցում, որի համար պահանջվեց տաս տարուց էլ ավելի երկարատև ու համառ պայքար:

Ինչևէ, որոշումը կայացել էր և անհրաժեշտ էր ձեռնամուխ լինել նրա իրականացմանը:

Արևելագիտական կենտրոնի ստեղծումը պետք է համարել շրջադարձային փուլ հայ արևելագիտության զարգացման մեջ: Առաջին անգամ էր հայրենի երկրում ստեղծվում արևելագիտական ակադեմիական կենտրոն:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի ղեկավարությունը Արևելագիտության սեկտորի ղեկավարի՝ վարիչի, պաշտոնը վստահեց ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանին: Ընտրությունը կատարվել էր միանգամայն ճիշտ: Նա հայտնի պատմաբան էր և մի շարք աշխատությունների հեղինակ, որոնք հիմնականում նվիրված էին հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի, հայ-ռուսական հարաբերությունների և այլ հարցերի ուսումնասիրությանը: Սակայն նրա որոշ աշխատություններ ուղղակի առնչվում էին XIX դարում հայ-թուրքականհարաբերությունների լուսաբանությանը, որոնց մեջ առանձնանում է «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ: 1850-1870 թթ.» աշխատությանը, որի համար նրան շնորհվել էր պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Հետագայում ևս, երբ նա այլևս չէր աշխատում արևելագիտական կենտրոնում և հեռացել էր նրանից, Մ. Ներսիսյանը երբեք չհեռացավ արևելագիտությունից և կապերը չխզեց նրա հետ: Օսմանյան կայսրության,

Արևմտյան Հայաստանի, հայկական հարցի և ցեղասպանության խնդիրների լուսաբանությունը միշտ ուղեկցել են նրան՝ նրա գիտական ողջ գործունեության ընթացքում:

Մ. Ներսիսյանին Արևելագիտության սեկտորի վարիչ նշանակելու գործում իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ նա ուներ գիտակազմակերպչական աշխատանքի բավականին հարուստ փորձ: Տարբեր տարիների նա զբաղեցրել էր ակադեմիայի փոխպրեզիդենտի, Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի և այլ պաշտոններ: Այդ հանգամանքը հատկապես կարևոր է, երբ խոսքը գնում է գիտական նոր հաստատություն ստեղծելու մասին:

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանը սկսեց համարյա զրոյից՝ սեկտորի համար աշխատակիցներ հավաքագրելով ակադեմիայի տարբեր ինստիտուտներից, բարձրագույն ուսումնական հաստատություններից և այլ հիմնարկներից: Նրանք որպես կանոն պրոֆեսիոնալ արևելագետներ չէին, սակայն լինելով հայ ժողովրդի պատմության կամ մշակույթի մասնագետներ, իրենց աշխատանքի բերումով առնչվել էին նաև արևելագիտական հարցերին: Աշխատակիցների առաջին կազմում ներգրավվեցին նաև որոշ հայրենադարձներ, որոնց մոտ եթե կաղում էր կրթական-մասնագիտական կողմը, ապա դա փոխհատուցվում էր նրանց արևելյան և եվրոպական լեզուների իմացությամբ:

Մ. Ներսիսյանը Արևելագիտության սեկտորը գլխավորեց ոչ շատ երկար ժամանակ՝ մինչև 1959 թ. սեպտեմբերի 9-ը: Սակայն այդ ժամանակն էլ բավարար

եղավ ապացուցելու համար, որ արևելագիտությունը Հայաստանում ունի զարգանալու ամուր հիմքեր և մեծ հեռանկարներ: Դրանով փարատվեց թերահավատությունը Հայաստանում գիտության այդ կարևոր ճյուղի հնարավորությունների վերաբերյալ: Կարծում ենք, որ դա ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ամենակարևոր ծառայությունն էր հայ արևելագիտության հանդեպ:

1959 թ. սեպտեմբերին Արևելագիտության սեկտորի վարիչի պաշտոնում ակադեմիկոս Մ. Ներսիսյանին փոխարինելու եկավ պատմական գիտությունների թեկնածու Հովհաննես Ինճիկյանը: Նա Մոսկվայի փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտի շրջանավարտներից էր, երկար ժամանակ վարել էր պետական և կուսակցական բարձր պաշտոններ, այդ թվում եղել Հայաստանի կոմունիստական կուսակցության ԿԿ-ի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ: Զուգահեռաբար նա զբաղվել էր հայ պատմագիտության՝ այդ թվում և կոմունիստական կուսակցության պատմության հարցերի ուսումնասիրությամբ, որոնց մեջ ուշադրության է արժանի ականավոր բոլշևիկ Բոգդան Կնունյանցին նվիրված նրա մենագրական ուսումնասիրությունը, որի համար նա ստացել էր պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հ. Ինճիկյանը Արևելագիտության սեկտորը գլխավորեց 12 տարի՝ մինչև 1971 թ., որի ընթացքում մեծ փոփոխություններ կրեց սեկտորը: Եթե մինչ այդ սեկտորը մի տեսակ ամորֆ էր, չուներ ուղղությունների հստակ ստորաբաժանում, փոքրաթիվ էր և չէր կարող իր առջև դնել մասշտաբային խնդիրներ, ապա նա 12

տարիների ընթացքում աստիճանաբար հասունացավ, համալրվեց նոր աշխատակիցներով, որոնց մեջ արդեն առկա էին արևելագիտական պրոֆեսիոնալ կրթություն ստացածները: Դա հնարավորություն տվեց անցկացնել արևելագիտական ուղղությունների սահմանազատում և դասակարգում, ընտրություն կատարել ու գերակա ուղղություն համարել նրանք, որոնք առավել արդիական էին և ուղղակիորեն առնչվում էին նաև հայ ժողովրդի ու նրա պատմության հետ:

Այս փուլում սահմանվեց հայ արևելագիտության հետազոտությունների աշխարհագրական արեալը: Այդպիսին ճանաչվեց Մերձավոր ու Միջին Արևելքը և գլխավոր խնդիրը համարվեց այդ տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների պատմության, տնտեսության, մշակույթի, սկզբնաղբյուրների և միջազգային հարաբերությունների, ինչպես նաև հայ համայնքների ուսումնասիրությունը: Այդ շրջանակներում ավելի կոնկրետացվեցին անմիջական հետազոտության առարկա հանդիսացող ուղղությունները: Այդպիսին համարվեցին արաբագիտությունը, թուրքագիտությունը, իրանագիտությունը և քրդագիտությունը՝ իրենց ենթաբաժիններով ու բաղադրիչներով:

Ըստ այդմ, առաջին անգամ տեղի ունեցավ սեկտորի կառուցվածքային համակարգի ձևավորում: Ստեղծվեցին չորս գիտահետազոտական խմբեր՝ արաբագիտական (ղեկ. Ն. Հովհաննիսյան), թուրքագիտական (ղեկ. Ե. Սարգսյան), իրանագիտական (ղեկ. Հ. Եգանյան) և քրդագիտական (ղեկ. Հաջիե Ջնդի): Այս փուլում գերակշռողը նոր ու նորագույն շրջանների հարցերն ու ժամանակակից թեմաներն էին:

Սեկտորի ձևավորումից ընդամենը երկու տարի անց՝ 1960 թ., հայ արևելագետները պատրաստեցին և հրատարակեցին «Արևելագիտական ժողովածու»-ի առաջին հատորը, որը հանդիսացավ հայ արևելագիտության յուրատեսակ մանիֆեստը: Դրան հաջորդեցին այդ մատենաշարի այլ հատորներ, որը սկսած երրորդ հատորից՝ մեր առաջարկությամբ, կոչվեց «Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ»: Սկսեցին լույս տեսնել նաև աշխատակիցների մենագրական ուսումնասիրությունները և գիտական հոդվածները:

Այդ տարիներին արևելագիտության զարգացմանը նախկին Խորհրդային Միությունում, այդ թվում և Հայաստանում, նպաստում էր խորհրդային իշխանությունների քաղաքականությունը, որի կարևոր խնդիրներից մեկը Արևելքում հաստատված գաղութատիրության համակարգի վերացումն էր: Այդ հարցում նա զգում էր արևելագիտության օգնության կարիքը՝ տեսականորեն հիմնավորելու գաղութային համակարգի վերացման և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրներում ազգային անկախ պետությունների կազմավորման անհրաժեշտությունը: Եվ երբ արևելագետները թերանում էին այդ հարցում, ապա նրանք արժանանում էին խորհրդային իշխանության ղեկավարության հանդիմանությանը: Դրա վառ վկայությունն էր Խորհրդային Միության կառավարության նախագահի առաջին տեղակալ Անաստաս Միկոյանի ելույթը Մոսկվայում 1960 թ. կայացած արևելագետների համաշխարհային կոնգրեսում, որի ժամանակ նա հայտարարեց՝ «Արևելքը վաղուց արթնացել է, իսկ արևելագետները շարունակում

այդ կապակցությամբ դիմել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիային և Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեին: Ըստ այն ժամանակներում գոյություն ունեցող կարգի՝ հանրապետությունների ղեկավար մարմիններն իրավունք չունեին առանց Մոսկվայի համաձայնության որոշումներ ընդունել հանրապետություններում նոր ինստիտուտներ ստեղծելու վերաբերյալ: Սակայն Մոսկվան երկար ժամանակ մերժում էր Հայաստանից ստացված խնդրանքը, որը դժգոհությունների տեղիք էր տալիս Հայաստանի գիտական շրջաններում: Վերջապես Մոսկվան զիջեց և իր համաձայնությունը տվեց Արևելագիտության սեկտորը Արևելագիտության ինստիտուտի վերակազմավորելու հարցում:

Դրանից հետո Հայաստանի կառավարությունը՝ ՀՍՍՀ Մինիստրների Սովետը, 1971 թ. հունիսի 24-ին ընդունեց Նո. 378 որոշումը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայում Արևելագիտության ինստիտուտ հիմնելու մասին: Կառավարության այդ որոշման համաձայն ՀՀ ԳԱ նախագահությունը 1971 թ. հուլիսի 28-ին ընդունեց համապատասխան որոշում, որն ամրագրված է Նո.17 Արձանագրության մեջ:

1971 թ. հուլիսի 28-ը Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ծննդյան օրն է:

Բնականաբար, անհրաժեշտ էր առաջին հերթին լուծել նորաստեղծ ինստիտուտի տնօրենի հարցը, որը, ինչպես պարզվեց, այնքան էլ դյուրին գործ չէր: Այդ տեղին մի քանի հավակնորդներ կային՝ ինչպես ակադեմիայի ներսում, այնպես էլ նրանից դուրս:

Ակադեմիայի նախագահության ընտրությունը կանգ առավ պատմական գիտությունների դոկտոր Գագիկ Սարգսյանի թեկնածության վրա, որը հավանություն ստացավ նաև Հայաստանի կոմկուսի կենտկոմի կողմից: Եվ Գ. Սարգսյանը դարձավ Արևելագիտության ինստիտուտի՝ ԱԻ առաջին տնօրենը:

Գագիկ Սարգսյանն ավարտել էր Լենինգրադի համալսարանի պատմության ֆակուլտետը, իսկ այնուհետև ասպիրանտուրան: Նա 1967 թ. ստացել էր պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1986 թ. ընտրվել ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ: Զբաղեցրել էր տարբեր պաշտոններ, այդ թվում 1962-1966թթ. եղել պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ:

Գիտության բնագավառում կատարած առաջին քայլերից սկսած նրան մշտապես հետաքրքրել է երկու ուղղություն՝ հայագիտությունը և սեպագրագիտություն-ասուրագիտությունը: Եվ նա մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց իր գիտական այդ երկու նախասիրություններին:

Մինչև ԱԻ-ի տնօրեն նշանակվելը նա արդեն հրատարակել էր մի շարք ուշագրավ աշխատություններ, ինչպես «Տիգրանակերտ», «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը» և «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին», որոնք նրան մեծ ճանաչում էին բերել: Նա հեղինակն էր նաև ասուրագիտական բնույթի մի շարք հոդվածների:

Ինստիտուտի ստեղծումով նոր փուլ սկսվեց հայ արևելագիտության զարգացման բնագավառում: Նրա

զարգացումը ստացավ ավելի ամբողջական և խորքային բնույթ:

Սկզբնական շրջանում մեծ ուշադրություն դարձվեց կազմակերպչական-կառուցվածքային հարցերին: Սեկտորում գոյություն ունեցող արաբագիտական, թուրքագիտական, իրանագիտական և քրդագիտական գիտահետազոտական խմբերը դարձան Արաբական երկրների, Թուրքիայի, Իրանի և Քրդագիտության բաժիններ: Մտցվեց բաժնի վարիչի պաշտոն՝ որպես տվյալ գիտական ուղղության ղեկավար և պատասխանատու: Այդ բաժինների վարիչներ ընտրվեցին համապատասխանաբար Ն. Հովհաննիսյանը, Ե. Սարգսյանը, Հ. Եգանյանը և Հաջիե Ջնդին, որին շատ չանցած փոխարինեց Խ.Չատոևը[2]:

Սակայն սխալ կլիներ խմբերի վերակազմավորումը բաժինների դիտել որպես մեխանիկական փոփոխություն: Իրականում փոփոխությունը որակական բնույթի էր: Բաժինների ստեղծումով ավելի հստակ դարձան տվյալ գիտական ուղղության ուսումնասիրության սահմանները և հիմնախնդիրները: Բաժիններն ու նրանց ղեկավարներն ավելի լայն լիազորություններից էին օգտվում, քան թե գիտահետազոտական խմբերը, որոնց ղեկավարներն այդ պարտականությունները կատարում էին հասարակական կարգով:

---

[2] Հետագայում այդ բաժինների վարիչների պաշտոններում նշանակվեցին՝ համապատասխանաբար, Շ. Կարամանուկյանը, Ռ. Սահակյանը՝ ապա Ռ. Սաֆրաստյանը, Վ. Բայբուրդյանը, Շ. Միոյին՝ ապա Մ. Խամոյանը:

իմացության հարցում նրա բոլոր աշխատակիցները համապատասխանում են այդ պահանջներին, իսկ ոմանց մատչելի են անգամ հինգ և վեց լեզու:

1970-1980-ական թվականներին ԱԻ-ն մեծ վերելք էր ապրում և դարձել էր Խորհրդային Միության կարևոր արևելագիտական կենտրոններից մեկը: Դա արդյունք էր այն ճիշտ քաղաքականության, որ վարում էր նրա տնօրեն ակադեմիկոս Գ. Սարգսյանը՝ ինստիտուտի գիտական օղակների ղեկավարների ամենաակտիվ աջակցությամբ և օժանդակությամբ:

1991 թ. Հայաստանի Հանրապետությունը վերանվաճեց իր անկախությունը և թևակոխեց մի դարաշրջան, որը ստացավ «անցման շրջան» անվանումը: Տարաբախտաբար այդ «անցման շրջան» կոչվածը շատ ծանր նստեց երկրի վրա, որը նրան անկասելիորեն գլորում էր դեպի անդունդը: 1990-ական թվականներին հանրապետության տնտեսությունը կաթվածահար եղավ: Վրա հասավ անգրագետ և կիսագրագետ դուրս պրծուկների աստեղային ժամը, տեղի ունեցավ բարոյական նորմերի անկում, ժողովուրդի ճնշող մեծամասնությունը հանկարծ հայտնվեց աղքատության թագավորությունում, քանդվեցին քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային կառույցները, մոլեգնում էր ագահությունը և ընչաքաղցությունը, սկսվեց հայերի զանգվածային արտագաղթ Հայաստանից և երկրի հայաթափման մի նոր և վտանգավոր փուլ:

Առանձնապես ծանր պայմաններ ստեղծվեցին գիտության, նրա կառույցների և գիտական մտավորականության համար: Նրանց համար «անցման շրջանը» վերածվեց դժոխքի, մաքառումի և գոյատևման

շրջանի: Աներևակայելի ցածր աշխատավարձեր, գործնականորեն գիտության ֆինանսավորման դադարեցում, գիտական աշխատությունների հրատարակության իսպառ վերացում՝ այս էր 1990-ական թվականներին գիտության ոլորտում հաստատված «ռեժիմը», որին ոչ բոլորն էին, որ կարողացան դիմանալ:

Գիտական բոլոր ինստիտուտները և կենտրոնները հայտնվեցին կործանման եզրին: Դրանից չխուսափեց և չէր էլ կարող խուսափել ՀՀ գիտությունների ակադեմիան իր բոլոր ինստիտուտներով հանդերձ: Այդ ջրապտույտի տակ ընկավ նաև Արևելագիտության ինստիտուտը: 1990-ականները եղան Արևելագիտության ինստիտուտի գոյության ամենածանր տարիները:

Արևելագիտության ինստիտուտի կորուստները մեծ էին և տարատեսակ: Գիտաշխատողների մի ստվար խումբ հեռացավ հայրենիքից և ապաստանեց օտար երկրներում: Մի խումբ էլ՝ չդիմանալով ստեղծված անտանելի նյութական պայմաններին, հրաժեշտ տվեց այս կյանքին: Եվ, վերջապես, արևելագետների համեմատաբար մի հոծ զանգված հեռացավ ինստիտուտից և նոր գործատեղ գտավ ավելի ապահով ու լավ վարձատրվող իշխանական կառույցներում՝ պրեզիդենտի աշխատակազմում, պառլամենտում, արտաքին գործերի նախարարությունում և նրա արտասահմանյան ներկայացուցչություններում, և այլուր: Ինստիտուտի մոտ 75-ի հասնող գիտաշխատողներից մնացին ընդամենը 20-25-ը: Եղավ մի պահ, երբ մի շարք բաժիններում մնացել էր ընդամենը 2-3 գիտաշխատող, իսկ Արևելյան աղբյուրների բաժինն ընդհանրապես դադարեցրեց իր գոյությունը: Քայքայման և վերացման

եզրին հասած ինստիտուտում գիտական կյանքն առկայծում էր շնորհիվ մի երկտասնյակ «խելահեղ» նվիրյալների:

Ծանր, իսկապես շատ ծանր ժամանակներ էին:

Ահա այսպիսի իրադրության պայմաններում 1995 թ. տեղի ունեցավ փոփոխություն Արևելագիտության ինստիտուտի ղեկավարության մեջ:

ՀՀ ԳԱ նախագահությունը՝ պրեզիդենտ Վիկտոր Համաբարձումյանի նախաձեռնությամբ, ընդունել էր մի որոշում, ըստ որի չէր թույլատրվում վիցեպրեզիդենտներին և բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներին միաժամանակ զբաղեցնել ինստիտուտի տնօրենի պաշտոն, որը վաղուց գործում էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի համակարգում: Նրանց առջև դրվեց երկընտրանք՝ զբաղեցնել դրանցից մեկը՝ ըստ իրենց հայեցողության: Ակադեմիկոս Գ. Սարգսյանը 1994 թ. զբաղեցնում էր ՀՀ ԳԱ փոխպրեզիդենտի պաշտոնը, իսկ 1995 թվականից փոխպրեզիդենտի և Հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնները: Եվ նա, որ մոտ 24 տարի գլխավորում էր Արևելագիտության ինստիտուտը՝ նախընտրեց հրաժարվել Արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնից և մնալ, վիցեպրեզիդենտի ու բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոններում:

1995 թ. փետրվարին Արևելագիտության ինստիտուտի նոր տնօրեն ընտրվեց տողերիս հեղինակը[4]:

---

[4] Այդ ժամանակ ես արդեն 35 տարի է, ինչ աշխատում էի Արևելագիտության ինստիտուտում, մոտ 10 տարի (1961-1971 թթ.)

Ստանձնելով տնօրենի պարտականությունները գիտության գոյության ու զարգացման համար ոչ նպաստավոր այդ ժամանակաշրջանում, ես կանգնեցի մի շարք բարդ խնդիրների առջև և պետք է ընտրություն կատարեի ու որոշեի՝ թե ինչից սկսել:

Երկար մտորումներից հետո եկա այն եզրակացության, որ այդ ժամանակ ամենագլխավորը հայ արևելագետների գենոֆոնդի պահպանումն է և այդ հիմքի վրա ինստիտուտի վերածննդի ապահովումը: Դա այդ ժամանակահատվածի համար դարձավ ստրատեգիական խնդիր: Աներևակայելի ջանքերի գնով և գործնական քայլերի միջոցով աստիճանաբար հաջողվեց լուծել այդ խնդիրը: Ինստիտուտը և արևելագիտությունը դարձավ հրապուրիչ երիտասարդ կադրերի համար և մագնիսի պես նրանց իրեն էր ձգում: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հնարավոր դարձավ ոչ միայն պահել արևելագետների գենոֆոնդը, այլև ինստիտուտը համալրել երիտասարդ, մասնագիտական կրթություն ստացած և լեզուներին տիրապետող նոր խոստումնալից կադրերով: Եվ հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ այսօր

ղեկավարել էի արաբագիտության խումբը, 1971 թվականից եղել Արաբական երկրների բաժնի առաջին վարիչը, իսկ 1984-1985 թթ. ինստիտուտի տնօրենի տեղակալ՝ գիտական գծով, պատմական գիտությունների դոկտոր՝ 1968 թ, պրոֆեսոր՝ 1972 թ.: Տնօրեն ընտրվելու պահին 17 մենագրական ուսումնասիրությունների՝ այդ թվում արաբական երկրների նորագույն պատմությանը և ազգային-ազատագրական շարժումներին նվիրված յոթ հատորների, միջազգային հարաբերություններին և իսլամին նվիրված բազմաթիվ մենագրությունների հեղինակ էի, արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ:

Արևելագիտության ինստիտուտը և նրա բոլոր գիտական օղակները համալրված են երիտասարդ գիտական կադրերով: ԱԻ-ն թերևս միակ ինստիտուտն է ՀՀ ԳԱ համակարգում, որ երիտասարդ գիտական կադրերով համալրվելու խնդիր չունի:

Ինստիտուտ վերադարձան նաև նրա նախկին որոշ աշխատակիցներ: Եվ կարելի է ասել, որ սերնդափոխությունը ԱԻ-ում կատարվեց շատ սահուն կերպով՝ առանց ցնցումների կամ բախումների: Ավագ և երիտասարդ սերնդի գիտաշխատողների միջև հաստատվել են գործնական և քաղաքակիրթ ներդաշնակ հարաբերություններ, որի շրջանակներում երիտասարդ գիտաշխատողները խորը հարգանքով են վերաբերվում ավագ գիտնականների անձին ու վաստակին, իսկ վերջիններս հաճույքով իրենց փորձն ու գիտելիքներն են հաղորդում նրանց:

Ինստիտուտում սկսեց աշխուժանալ գիտական կյանքը՝ գիտական կոնֆերանսների, սիմպոզիումների և այլ բնույթի քննարկումների կազմակերպումը մտավ իր բնականոն հունի մեջ: Իրենց աշխատանքները վերսկսեցին երիտասարդ արևելագետների հանրապետական կոնֆերանսները, որոնք ընդհատվել էին 1990-ական թվականներին: 1995- 2006 թթ. կայացել է երիտասարդ արևելագետների հանրապետական 11 կոնֆերանս: 2006 թ. հունիսին տեղի ունեցավ երիտասարդ արևելագետների հանրապետական XXVIII կոնֆերանսը: Դա անփոխարինելի դպրոց է երիտասարդ կադրերի համար:

1996 թ. սկսվեց «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի վերահրատարակումը, որն այնուհետև վերածվեց

տարեգրքի: 2006 թ. լույս տեսավ այդ մատենաշարի XXV հատորը: Դա հայ իրականության մեջ իր նախադեպը չունեցող արժեքավոր գիտական հրատարակություն է, որը մեծ հեղինակություն է վայելում մասնագետների շրջանում: Նման մատենաշար գոյություն չուներ նախկին Խորհրդային Միությունում գործող և ոչ մի արևելագիտական կենտրոնում: Նման մատենաշար այսօր գոյություն չունի և ոչ մի տեղ:

Մեծ թափ առավ մենագրությունների, ժողովածուների և հոդվածների հրատարակությունները: Ինստիտուտը կարողացավ այդ հրատարակությունների համար ապահովել հովանավորներ՝ ինչպես անհատներ, այնպես էլ ֆոնդեր: Դրանց մեջ պետք է առանձնացնել «Արմեն և Բերսաբե Ջերեջյան Հիմնադրամը» (ԱՄՆ), որի ֆինանսական աջակցությամբ միայն 1997-2006 թթ. հրատարակվել է մոտ 60 մենագրական ուսումնասիրություն և ժողովածու: ԱԻ-ի աշխատակիցները, այդ թվում և երիտասարդ արևելագետները, գործնականում իրենց աշխատությունները հրատարակելու պրոբլեմ չունեն:

Այդ բոլորը հիմք տվեց XX դարի վերջերին արձանագրել, որ Արևելագիտության ինստիտուտի վերածնունդն արդեն կայացել է, նա վերելք է ապրում և թևակոխել է զարգացման մի նոր՝ ավելի բարձր փուլ: Մենք դա համարում ենք պատմական նվաճում:

Դրանում մեծ է ինստիտուտի ավագ սերնդի ներդրումը, որի աջակցությունը մենք՝ որպես տնօրեն, մշտապես վայելել ենք, և օգտվել նրանց բարի խորհուրդներից: Այդ առնչությամբ ցանկանում ենք երախտագիտությամբ նշել Ն. Հարությունյանի, Վ.

Բայբուրդյանի, Պ. Մուրադյանի, Շ. Մոյանի, Ա. Քոսյանի, Ն. Մկրտչյանի, Մ. Խաչիկյանի, Ա. Բոզոյանի, Պ. Չոբանյանի, Մ. Խամոյանի, Կ. Չաչանյանի Շ. Կարամանուկյանի, Ռ. Սաֆրաստյանի, Ա. Կոզմոյանի, Հ. Կորխմազյանի, Ա. Ստեփանյանի, Ան. Հովհաննիսյանի և այլոց անունները: Ես կցանկանայի նաև հիշել 1998 թ. այս կյանքին հրաժեշտ տված Գ. Սարգսյանին, որը տնօրենի պաշտոնից հեռանալուց հետո էլ մշտապես հետևում էր ինստիտուտի գիտական գործունեությանը և լավատեղյակ էր նրանում ընթացող պրոցեսներին: Նա մահվանից մի երեք ամիս առաջ եկավ ինստիտուտ և հանգամանալից զրույց ունեցավ ինձ հետ ինստիտուտի և նրա հեռանկարների մասին՝ չթաքցնելով իր հիացմունքն այն դրական փոփոխությունների առթիվ, որոնք տեղի էին ունենում այն ինստիտուտում, որը նա գլխավորել էր մոտ քառորդ դար: Ավարտելով իր խոսքը, նա բառացիորեն ասաց հետևյալը «Նիկոլայ, ես հիմա տեսնում եմ, որ ինստիտուտը, իրոք, վերելք է ապրում և ճիշտ են ասում, որ տեղի է ունեցել վերածնունդ: Այդ կապակցությամբ ես քեզ շնորհավորում եմ: Ես հիմա հանգիստ եմ ինստիտուտի և հայ արևելագիտության ապագայի հանդեպ»: Եվ նա իմ ձեռքը ամուր սեղմեց: Չեմ թաքցնում որ նրա, որի հետ մենք աշխատել էինք մոտ քառորդ դար և միասին ճաշակել ինստիտուտի լավ ու վատ օրերը, տված գնահատականն ինձ շատ ուրախացրեց, մանավանդ եթե նկատի առնենք, որ նա ընդհանրապես շատ ժլատ էր և զուսպ իր գնահատականների մեջ:

Այսպստվ՝ ԱԻ-ն, ինչպես նաև հայ արևելագիտական գենոֆոնդը ոչ միայն պահպանվեցին, այլև համալրվեցին և հետագա զարգացում ունեցան:

Երկրորդ կարևոր խնդիրը, որը հառնեց ԱԻ-ի և իմ՝ որպես ինստիտուտի ղեկավարի առջև, և որն առանցքային բնույթ ուներ, կապված էր այն իրողության հետ, որ Հայաստանը դարձել էր անկախ պետություն և դրան համապատասխան անհրաժեշտություն առաջացավ փոխել հայ արևելագիտության հայեցակարգը և ֆունկցիաները:

Խորհրդային Միության գոյության շրջանում նրա տարածքում գործող բոլոր արևելագիտական կենտրոնները՝ այդ թվում և ԱԻ-ն, սպասարկում էին Խորհրդային Միության արևելյան քաղաքականության պահանջները: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ խնդիրը վերացավ և նրան փոխարինելու եկավ նորը: Հայաստանը դարձել էր անկախ պետություն և որպես այդպիսին դարձել էր նոր ձևավորված անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածքի օրգանական մասը: Նա արդեն ուներ իր արևելյան քաղաքականությունը: Եվ հայ արևելագիտության խնդիրները համապատասխանաբար պետք է փոփոխության ենթարկվեին: Նա՝ պատկերավոր կերպով ասված, պետք է սպասարկեր Հայաստանի արևելյան քաղաքականությունը, մշակեր նոր մոտեցումներ, առաջարկներ, նոր հանձնարարականներ, լուծումներ և այլն: Տնօրենի կողմից մշակված հայեցակարգի համաձայն՝ հայ արևելագիտությունը, որը Խորհրդային Միության գոյության ժամանակ խորհրդային արևելագիտության մի մասն էր հանդիսանում, Խորհրդային Միության փլուզումից հետո դարձել էր, առաջին՝ ազգային գիտություն Արևելքի մասին՝ կազմելով համաշխարհային արևելագիտության

բաղկացուցիչ մասը, երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության համար ստրատեգիական նշանակություն ունեցող գիտություն, և, երրորդ, Հայաստանի համար կիրառական նշանակություն ունեցող գիտություն, որի արդյունքները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների և ազգային անվտանգության հայեցակարգի մշակման տեսանկյունից: Եվ այդ հայեցակարգը 1995 թ. սկած դրվեց ԱԻ-ի գիտական գործունեության հիմքում: Ինստիտուտի հետազոտական աշխատանքները հանգեցրին այն եզրակացությանը, որ Հայաստանը անկախության նվաճումից հետո դարձել է մերձավորարևելյան և անդրկովկասյան աշխարհաքաղաքական շրջանի քաղաքական, ռազմական, տնտեսական և տարածաշրջանային-կոմունիկացիոն կարևոր գործոն, որն անհնար է անտեսել կամ հաշվից դուրս նետել:

Արևելագիտության վերածումը ստրատեգիական նշանակություն ունեցող գիտության բարձրացրեց նրա նշանակությունը հասարակական գիտությունների համակարգում:

Հայ արևելագիտությունը՝ որպես ազգային գիտություն, սպասարկում է հայոց պետության ոչ միայն գիտական, այլև քաղաքական պահանջները: Այդ բնագավառին վերաբերող հայ արևելագետների ուսումնասիրությունները, ինչպես նշվեց, խիստ կարևոր նշանակություն ունեն Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության հայեցակարգի մշակման համար:

Հարկ է նշել նաև, որ այդ հայեցակարգի շրջանակներում գործնական համագործակցություն հաստատվեց Արևելագիտության ինստիտուտի և Հայաստանի արտաքին քաղաքականությունն իրականացնող մարմինների՝ Հանրապետության պրեզիդենտի աշխատակազմի, արտաքին գործերի նախարարության, Հայաստանի արտասահմանյան ներկայացուցչությունների, մասնավորապես Եգիպտոսում, Լիբանանում, Արաբական Սիացյալ Էմիրություններում, Չինաստանում, Հնդկաստանում և այլ երկրներում Հայաստանի դեսպանությունների հետ: Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ՝ որպես մասնագետ-փորձագետներ, արտաքին գործերի նախարարության կողմից հրավիրվում են զանազան հարցերի քննարկմանը: Իսկ ինստիտուտի տնօրենը՝ որպես պատվիրակության անդամ, հաճախ մասնակցում է Հայաստանի պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի արտասահմանյան պաշտոնական այցերին: Այդ առումով հիշատակության են արժանի պետական պաշտոնական այցելությունները Հնդկաստան՝ 2003 թ. և Չինաստան՝ 2004 թ.: Իսկ 2006 թ. փետրվարին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում՝ Եգիպտոսում Հայաստանի դեսպանության անմիջական աջակցությամբ տեղի ունեցավ հայ-եգիպտական գիտական համաժողով՝ նվիրված «Հայ-եգիպտական պատմաքաղաքական հարաբերություններին»: Դա առաջին դեպքն էր ինստիտուտի պատմության մեջ, երբ հայ-արաբական հարաբերություններին նվիրված գիտաժողով էր կազմակերպվում ուսումնասիրվող երկրում:

ԱԻ-ի համագործակցությունը հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացնող մարմինների հետ, որի հիմքերը դրվեցին 1990-ականների վերջերին և հետագա զարգացում ստացան XXI դարի սկզբներին, նոր երևույթ է, որը նախկինում բացակայում էր: Նա եկավ ապացուցելու հայ արևելագիտության ներուժն ու կարևորությունը, նրա աստրատեգիական բնույթի գիտական ուղղություն լինելը: Այդ առումով նա հանդիսանում է «պետություն-գիտություն» համագործակցության հիանալի օրինակ:

Նոր ժամանակները և նոր պահանջները հրամայական դարձրեցին փոփախություն մտցնել նաև մի այնպիսի սկզբունքային հարցում, ինչպիսին ինստիտուտի ուսումնասիրությունների արեալի հարցն է: Թե՝ սեկտորի հիմնադրման, և թե՝ ինստիտուտի կազմավորման ժամանակ գիտական և պետական ղեկավար մարմինների կողմից հայ արևելագիտական կենտրոնի գիտահետազոտական ուսումնասիրությունների տարածաշրջան էր հաստատված Մերձավոր և Միջին Արևելքը: Եվ նրանց հետազոտական աշխատանքի կենտրոնում գտնվում էր այդ արեալն ու նրա կազմի մեջ մտնող երկրները:

Անկախության նվաճումից հետո ընդլայնվեցին Հայաստանի արտաքին քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները նաև աշխարհի տարբեր երկրների հետ, որոնք չէին մտնում Մերձավոր և Միջին Արևելքի աշխարհագրական սահմանների մեջ: Հայաստանի համար կարևոր դարձան հարաբերությունների հաստատումն ու զարգացումն այնպիսի երկրների հետ՝ ինչպես Հնդկաստանը,

աշխարհաքաղաքական հարցերի, նրանց հետ Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունների, այդ երկրների հետ հայերի պատմամշակութային կապերի և հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը:

Բաժնի պարտականությունների մեջ է մտնում նաև ՀՀ կառավարության, արտաքին գործերի նախարարության և պետական այլ մարմինների համար վերլուծական համապատասխան նյութերի, առաջարկությունների և հանձնարարականների պատրաստումը:

Դրա շնորհիվ հայ արևելագիտության ուսումնասիրության արեալը խիստ ընդարձակվեց և այսօր այն ընդգրկում է մի վիթխարի տարածաշրջան՝ պատկերավոր ասված՝ Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս: Այդ տարածաշրջանի արևմտյան եզրը Թուրքիան է, իսկ արևելյանը՝ Ճապոնիան: Դրանով ևս մեկ լուրջ քայլ կատարվեց հայ արևելագիտությունն ավելի ամբողջական, բազմաշերտ և բազմաբնույթ դարձնելու ճանապարհին:

Շատ քիչ արևելագիտական կենտրոններ կան այսօր, որոնք ունեն նման ընդարձակ գիտական դաշտ:

Հայ արևելագիտական կենտրոնն իր գոյության համարյա 50 տարիների ընթացքում հրատարակել է մոտ 350 մենագրական աշխատություն և ժողովածու, ու մի քանի հազարի հասնող գիտական հոդված: Դրանց նշանակալի մասը համապատասխան օտար լեզուներով հրատարակվել է արտասահմանյան տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Կանադայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Վրաստանում,

Դանիայում, Հոլանդիայում, Լեհաստանում, Հնդկաստանում և այլուր: Ուշագրավ է, որ հայ արևելագետների աշխատությունները թարգմանվել և տպագրվել են նաև Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, այսինքն այն երկրներում, որոնց ժողովուրդներին են անմիջականորեն հասցեագրված նրանց ուսումնասիրությունները: Այդ աշխատությունները լույս են տեսել Արաբական Միացյալ Էմիրություններում, Եգիպտոսում, Թուրքիայում, Իրանում, Իրաքում, Լիբանանում, Սիրիայում, Քուվեյթում և այլուր: Դա վկայում է այն հետաքրքրության մասին, որ արտասահմանյան մասնագետները դրսևորում են հայ արևելագետների աշխատությունների նկատմամբ՝ մի կողմից, և այն հանգամանքի մասին, որ հայ արևելագետների աշխատություններն ավելի ու ավելի լայնորեն են ներգրավվում միջազգային ոլորտի մեջ՝ մյուս կողմից:

Վերջին տաս տարիներին բովանդակային փոփոխության ենթարկվեցին ԱԻ-ի գիտական համագործակցության ձևերը արտասահմանյան գիտական կենտրոնների հետ: Նախ, նշենք, որ խորհրդային տարիներին հանրապետությունների ինստիտուտները զրկված էին ըստ իրենց հայեցողության անմիջական գիտական կապեր հաստատել այս կամ այն արտասահմանյան գիտական կենտրոնի հետ: Այդ բոլորը գտնվում էր Մոսկվայի և նրա համապատասխան մարմինների հսկողության ներքո: Հայաստանի անկախումից հետո այդ արգելքը վերացվեց և նոր հնարավորություններ բացվեցին ինստիտուտների առջև: Բայց առաջացան նաև նոր դժվարություններ՝ կապված ինստիտուտների ֆինանսական և տնտեսական նվազ

հնարավորությունների հետ: Այդուհանդերձ, համագործակցության հնարավորություններն այժմ անհամեմատելի ավելի բարենպաստ են, քան երբևիցէ եղել են:

ԱԻ-ն՝ պահպանելով համագործակցության հին ձևերը՝ մասնագետների փոխադարձ այցելություն, գիտաժողովների մասնակցություն, գրքափոխանակություն և այլն, նախապատվությունը վերջին տարիներին տալիս է համագործակցության հաստատմանը պայմանագրային հիմքի վրա, որն ավելի հուսալի, կոնկրետ և արդյունավետ ձև է: ԱԻ-ն գիտական համագործակցության վերաբերյալ պայմանագրեր է ստորագրել Դամասկոսի արաբական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի (14.IV.2000 թ.), Չանդիգարի (Հնդկաստան) գիտահետազոտական կենտրոնի (16.V.2003 թ.), Դելիի Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի (31.X.2003 թ.), Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի (5.XII.2003 թ.), Մերձավոր Արևելքի ֆրանսիական ինստիտուտի (15.VII.2004 թ.), իսկ 2006 թ. մայիսի 16-ին՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի հետ: Այդ պայմանագրերը ոչ թե ձևական բնույթ են կրում, այլ գործող փաստաթղթեր են: ԱԻ-ն համագործակցում է նաև այլ գիտական կենտրոնների հետ:

Դամասկոսի վերոնշյալ ինստիտուտի հրավերով յուրաքանչյուր տարի ԱԻ-ի մի քանի երիտասարդ մասնագետներ մեկ ամիս ժամանակով մեկնում են Դամասկոս, գիտական աշխատանք կատարելու համար: Այդ ինստիտուտն իր վրա է վերցնում ԱԻ-ի

գիտաշխատողների բոլոր ծախսերը: ԱԻ-ն փոխադարձաբար և նույն հիմունքներով ընդունում է այդ ինստիտուտի աշխատակիցներին:

Ինստիտուտը ՀՀ արտաքին գործերի նախարարության, Հայաստանում Եգիպտոսի դեսպանության և Եգիպտոսում Հայաստանի դեսպանության աջակցությամբ վերջին շրջանում՝ յուրաքանչյուր տարի մոտ մեկ ամիս ժամանակով, Կահիրեի համալսարան է ուղարկում ինստիտուտի 10 գիտաշխատողների, որոնք այնտեղ լսում են դասախոսություններ և կատարում գիտական աշխատանքներ: Գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է եգիպտական կողմը:

Մի կարևոր փաստ ևս, երբ Չանդիգարի ինստիտուտի տնօրենի հետ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում ստորագրում էինք համագործակցության պայմանագիր, ապա հնդկական կողմի խնդրանքով պայմանագրում մտցվեց հատուկ կետ այն մասին, որ Հայաստանի Արևելագիտության ինստիտուտը պարտավորվում է օգնել Չանդիգարի Գիտական կենտրոնին՝ նրա կազմում Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոն ստեղծելու հարցում: Մենք սիրահոժար համաձայնվեցինք այդ առաջարկության հետ, որն ամրագրվեց այդ երկկողմ պայմանագրում: Մեր պարտականությունների մեջ մտնում էր օգնել հնդիկ գիտնականներին խորհուրդներով, անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ և այլն, որն ԱԻ-ն կատարեց մեծ պարտաճանաչությամբ: 2003 թ. նոյեմբերի 1-ին, Հայաստանի պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի Հնդկաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ,

որի ծրագրում նախատեսված էր նաև այցելություն Չանդիգար, տեղի ունեցավ Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոնի հանդիսավոր բացումը, որը կատարեց Հայաստանի Հանրապետության պրեզիդենտը: Պետք էր տեսնել, թե ներկաները՝ նահանգի ղեկավարությունը, գիտական կենտրոնի աշխատակիցները, մամուլի ներկայացուցիչները և այլք, որոնք ներկա էին այդ արարողությանը, ինչպիսի խանդավառությամբ ընդունեցին այդ կենտրոնի բացումը: Այդ պահին ես ինձ շատ հպարտ էի զգում:

Արտասահմանյան գիտական կենտրոնների հետ համագործակցության ծրագրերի էական մասն են կազմում նաև համատեղ աշխատությունների կատարումը և դրանց հրատարակումը: Երկար տարիներ այդպիսի համագործակցություն է իրականացվում Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտական ինստիտուտի և Սանկտ Պետերբուրգի համալսարանի հետ: Վերջերս այդ ոլորտի մեջ ներգրավվեց նաև Ճապոնիան: ԱԻ-ի Արևելյան Ասիայի համեմատաբար նորակազմ բաժնի աշխատակիցները և Հայաստանի այլ գիտական հաստատությունների մասնագետները Ճապոնիայի մասնագետների հետ համատեղ պատրաստեցին «Հայաստան-ճապոնիա» աշխատությունը, որը հայերեն և ճապոներեն լեզուներով լույս տեսավ Երևանում 2005 թ., և մեծ արձագանք գտավ Ճապոնիայում: Դա առաջին դեպքն էր պատմության մեջ, երբ Հայաստանում ճապոներեն լեզվով՝ ճապոնական իմստագրերով գիրք է հրատարակվում:

Յուրատեսակ համագործակցություն է հաստատվել ԱԻ-ի և ԱՄՆ-ի կոնգրեսի գրադարանի միջև: Կոնգրեսի գրադարանը ԱԻ-ն մտցրել է այն գիտական կարևոր կենտրոնների ցուցակում, որոնց նա ձրիաբար յուրաքանչյուր տարի մատակարարում է որոշակի քանակությամբ մասնագիտական գրականություն, իսկ ԱԻ-ն նրան է ուղարկում իր հրատարակությունները:

Այս բոլորը վկայում է այն մասին, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը ձեռք է բերել որոշակի միջազգային ճանաչում և նվաճել կարևոր բնագծեր:

Դա է հաստատում նաև այն փաստը, որ արտասահմանյան շատ գիտնականներ իրենց համար պատիվ են համարում իրենց դոկտորական ատենախոսությունները պաշտպանել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդում՝ «Համաշխարհային պատմություն» մասնագիտության գծով: Մեր գիտական խորհրդում են պաշտպանել և այդ գիտական աստիճանին են արժանացել արտասահմանյան մի շարք գիտնականներ ԱՄՆ-ից, Եգիպտոսից, Իսրայելից, Իտալիայից, Իրանից, Լիբանանից և Սիրիայից:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական բարձր հեղինակության մասին է խոսում նաև այն իրողությունը, որ 2000 թ. սեպտեմբերին Մոնրեալում, որտեղ ընթանում էր Արևելագետների համաշխարհային XXXVI կոնգրեսը, մեր հանրապետության Արևելագիտության ինստիտուտը միաձայն ընտրվեց Արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային

կազմակերպության անդամ, որը գործում է ՅՈՒՆԷՍԿՕ-ի հովանու ներքո: Նշենք, որ մինչ այդ նրա՝ այդ խստապահանջ միջազգային կազմակերպության անդամ էր ընդամենը 13 երկիր, այդ թվում արևելագիտության բնագավառում այնպիսի առաջատար և հեղինակություն ունեցող երկրներ, ինչպես ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Ճապոնիան, Հնդկաստանը, Հունգարիան և այլն:

Այսպիսով՝ հետադարձ հայացք ձգելով հայ արևելագիտության զարգացման ուղու և նրա նվաճումների վրա, այդ ուղին այլ կերպ, քան հաղթարշավ, չի կարելի գնահատել:

Սակայն աշխարհը արագորեն փոխվում է և նրա հետ փոխվում է նաև Արևելքը՝ լինի Հեռավոր, Մերձավոր, թե Միջին: Նա այլևս միջնադարյան պատկերացումներին համաձայն քարացած, անշարժ կամ դանդաղաշարժ Արևելքը չէ, այլ վերածվել է վերին աստիճանի դինամիկ և արագ զարգացող աշխարհամասի: Փոխվում է նաև նրա տեղը միջազգային համակարգում՝ նա կրավորականից վերածվում է ակտիվ գործոնի, և իր վճռական խոսքն է ասելու XXI դարում համաշխարհային քաղաքական եղանակի և տնտեսական համակարգի ձևավորման գործում: Հեռավոր Արևելքում բարձրանում են երկու այնպիսի գիգանտներ, ինչպես Չինաստանը և Հնդկաստանը, որոնց արագընթաց զարգացմանը ապշահար աշխարհը հետևում է շունչը պահած: Իր հետագա անակնկալները աշխարհին կմատուցի Ճապոնիան: Մեծ փոփոխություններ տեղի կունենան Մերձավոր և Միջին Արևելքում: Նա ոչ միայն չի կորցնի իր դիրքերը, այլև ավելի ծանրակշիռ խոսք կասի XXI

դարում՝ և անվերջ արյունալի բախումների կենտրոնից կվերածվի միջազգային հարաբերությունների նոր կարևոր կենտրոնի: Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս ձգվող տարածքը՝ շնորհիվ իր մարդկային և բնական անսպառ ռեսուրսների, մոդեռնիզացիայի և կատարելագործման, բացառիկ դերակատարում կունենա և կդառնա համաշխարհային քաղաքականության և տնտեսության ծանրության կենտրոններից մեկը: Եվ դա տեղի կունենա գլոբալիզացիայի դարաշրջանում՝ նրան հատուկ մարտահրավերներով հանդերձ:

Այդ փոփոխությունները նոր խնդիրներ կդնեն համաշխարհային գիտության և նրա անբաժան մասը կազմալ արևելագիտության առջև:

Եվ մենք, սիրելի ընթերցող, դույզն ինչ կասկած չունենք, որ ապագայում ևս՝ գլոբալիզացիայի և մարտահրավերների դարաշրջանում, հայ արևելագիտությունը կգտնվի խնդիրների բարձրության վրա և կկատարի ստրատեգիական ուղղության իր պատմական առաքելությունը:

NIKOLAY HOVHANNISYAN
FROM BOSPORUS TO PACIFIC OCEAN
A Meditation on the Occasion of the 35th Anniversary of the Institute of Oriental Studies of the Natioanal Academy of Sciences of Armenia

Establishment of the Institute of Oriental Studies, NAS Armenia, in 1971, was an ouistanding event in the scientific life of Armenia and turning point in the history of the Armenian Orientalistics. The main area of studies for the institute at that time was defined the Middle East and the attention of the

Armenian Orientalists was focused on the study of the Arab countries, Turkey, Iran , Kurdish problems, Christian East and Ancient East. The article deals with different stages of development of Orientalistics in Armenia, the main tasks, standing before the Institute in each stage, and us achievements. Since the establishment of the Armenian Orienatalistic center it was published about 350 monographs and several thousands of scientific articles by the Armenian rescarchers, some of which in abroad in English, Arabic, Russian, Turkish, Persian, Germany, France, Italian, Japanese etc.

A special period occupies in the history of Orientalistics in Armenia the 1990s, when Armenia restored its independence. It impacted directly on the character and functions of the Orientalistics. If in the Soviet period the Armenian Orientalistics consisted of a part of Soviet Orientalistics, which served mainly the political interests of the ex-Soviet Union, after its dissolution and declaration of independence of Rcpublic of Armenia, the Armenian Orientalistics turned into Armenian national science and its main task became to serve the interests and demands first of all Armenia, which historically and geographically belongs to the Middle Eastern region. The Armenian Orientalistics now is carrying out strategical functions for the independent Armenia.

In this period, when Armenia achieved its indepenece and started to develop interstate relations with the countries not only of the Middle East, but also of Central and Eastern Asia, as India, China and Japan, it became clear that it is time to enlarge the geographic frames of the scientific study area including in it together with Middle East also the study of the Eastern Asian countries. For that purpose in 2002 a new Department of Eastern Asia was established in the Institute. From that time on the area from Bosporus (Turkey) to Paciffic Ocean (Japan) became the main research field for the Institute of Oriental Studies of Armenia.

Upon the opinion of the author the Institute of Oriental Studies of Armenia is one of the distinguished centers in the field of Orientalistics and is playing significant role in the study

of fundamental problems of East from the ancient times to our days.

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՂ ՀՈԼՈՑԵՆՈՒՄ*

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ շրջակա միջավայր, հնակլիմայաբանություն, հոլոցեն, Վանա լիճ, Հայկական լեռնաշխարհ, Առաջավոր Ասիա:

Շրջակա միջավայրի կարևորագույն դերը մարդկային հասարակության պատմության ողջ ընթացքում գիտակցվել է շատ վաղուց, սակայն միայն անցյալ դարի վերջին երկու-երեք տասնամյակներից է սկսվել պատմագիտական խնդիրների լուծման գործում բնական գիտությունների ընձեռած հնարավորությունների ներառման գործընթացը: Եվ առաջին հերթին ասվածը վերաբերում է պատմական այնպիսի դարաշրջաններին, որոնց վերաբերյալ այլ աղբյուրները կամ բացակայում են կամ խիստ հակասական են:

Սույն հոդվածի առարկա պատմական փուլի տեսանկյունից արտակարգ կարևոր նշանակություն ունեն հնակլիմայաբանական, հնաերկրաբանական, հնաբուսաբանական և հնակենդանաբանական ուսումնասիրությունները: Դրանց ուղղությամբ իրականացված հետազոտությունների փվյալները, որոնք կուտակվել են վերջին տասնամյակների ընթացքում, թույլ են տալիս վերականգնելու երկրագնդի վերջին սառցակալման ավարտից հետո Առաջավոր Ասիայում և

* Հոդվածը ներկայացվել է 11.11.2020: Գրախոսվել է 17.11.2020:

Էգեյան ծովի ավազանում, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհում տիրող կլիմայական իրավիճակը, որն էլ իր հերթին կարող է ամուր հենք ստեղծել այստեղի վաղ հասարակությունների կենսակերպի, սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումների ուսումնասիրման համար:

Հենց այդպիսի ուսումնասիրությունների շնորհիվ ի հայտ են եկել արտակարգ կարևոր փվյալներ, որոնց լույսի տակ էականորեն կարող են փոփոխվել պատմագիտության մեջ արմատավորված պատկերացումները հատկապես ուշ խալկոլիթից (օգտագործվում է նաև էնեոլիթ տերմինը) մինչև Վաղ երկաթեդար ընդգրկող մեծ ժամանակահատվածում (մ.թ.ա. V-I հազ. սկիզբ) Առաջավոր Ասիայում գրանցված իրավիճակները, որոնք ամենևին տեղական երևույթներ չեին, քանի որ գլոբալ (որոշ դեպքերում՝ կիսագնդային) բնույթ ունեին[5]:

Այդ հետազոտությունները, որոնք դիպվածաբար իրականացվել են 1960-70-ական թվականներից սկսած, վերջին երկու տասնամյակներում ընթանում են առավել ինտենսիվ և շրջակա միջավայրը բնորոշող ոլորտների ու մեթոդների էլ ավելի լայն ընդգրկմամբ: Վերջիններս

---

[1] Վաղ հոլոցենում Առաջավոր Ասիայում կլիմայական տատանումների ազդեցությունների մասին կենդանական և բուսական աշխարհի, ինչպես նաև ջրային ռեսուրսների վրա հատկապես նախքան վաղ պետականությունների ձևավորումը տես **Bar-Yosef and Belfer-Cohen 1992; Goring-Morris 1994; Gilbert 1995; Goring-Morris and Belfer-Cohen 1997; Rossignol-Strick 1999; Peteet 2000; Issar 2003** (ընդհանուր); **Issar and Zohar 2007** (ընդհանուր); **Göktürk 2011** և այլն: Այլ տարածաշրջանների համար տես **Huntley et al. 1992; Dalfes et al. 1997; Weber et al. 2011; Carlson 2013** և այլն:

ներառում են ռելյեֆի, ջրաբանության, տեղումների քանակի, բուսական և կենդանական միջավայրի փոփոխությունները, ինչպես նաև բնական աղետները (այդ թվում՝ երկրաշարժերը, հրաբուխները և ջրհեղեղները): Դրանց շարքում իրականացվել են նաև մեր տարածաշրջանին առնչվող հետազոտություններ,[6] որոնց կանդրադառնանք քիչ ավելի ուշ:

Դժբախտաբար, Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմությանը նվիրված ուսումնասիրություններում շրջակա միջավայրի գործոնը գերազանցապես անտեսվել է, ինչով էլ պայմանավորված են հետազոտությունների ոչ լիարժեք արդյունքները[7]:

---

[2] Հարկ է այս կապակցությամբ նշել Վանա լճի հնակլիմայաբանական հետազոտությունները համակարգելու և զարգացնելու նպատակով 2006 թ. Բոննի համալսարանի (Գերմանիա) Հնեաբանության ինստիտուտի և Վանի համալսարանի (Թուրքիա) համագործակցությամբ ստեղծված «ՊալեոՎան» անվանումը կրող միջազգային ծրագիրը, որի իրականացմանը նվիրված առաջին գիտաժողովին մասնակցեցին 12 երկրների թվով 35 մասնագետներ (**Litt et al. 2007**): Ավելի վաղ նման ծրագրեր էին իրականացվել տարբեր աշխատանքային խմբերիկողմից (**Kempe and Degens 1978; Landmann et al 1996; Wick et al 2003**):

[3] 1990-ական թվականներին բնական գիտությունների ընձեռած հնարավորությունների կիրառման փորձ կատարվեց հեղինակի կողմից՝ կապված ուշբրոնզեդարի ավարտական փուլի ուսումնասիրության տեսանկյունից, սակայն այն ժամանակ դեռևս վերոհիշյալ ոլորտում նման ուսումնասիրությունները խիստ սակավ էին կամ մասամբ մեզ անհասանելի (տես **Косян 1998; 1998գ; 1999ա: 90-92**): Այդ իսկ պատճառով ներկա հոդվածում տեղ ենք հատկացրել նաև մեր վերոհիշյալ աշխատանքներում ներկայացված նյութերին՝ պատկերն ամբողջական դարձնելուն նպատակով (տես նաև **Քոսյան 2014**):

«Նեոլիթյան հեղափոխության» ընթացքում և հատկապես դրա ավարտին, երբ Առաջավոր Ասիայում սկսվում է պետականության ձևավորման գործընթացը, Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական պայմանները ամենևին այնպիսին չէին, ինչպիսին վկայված է հետագա պատմական դարաշրջաններում, հատկապես մեր օրերում:

Առաջավոր Ասիան վաղ հոլոցենում

Հոլոցենի[8] վաղ փուլում, մասնավորապես մ.թ.ա. X հազ. վերջերից Առաջավոր Ասիայում սկսում է նկատվել կլիմայի աստիճանական տաքացում և խոնավացում, որի հետևանքը անտառածածկույթի նշանակալից աճն էր, հատկապես Հայկական լեռնաշխարհում, Զագրոսի գոտում, ինչպես նաև Սև, Միջերկրական և Կասպից ծովերի առափնյա շրջաններում. այստեղ տարեկան մթնոլորտային տեղումները կազմում էին միջին հաշվով 500մմ[9]: Մ.թ.ա. 5000-4000 թթ. Վանա լիճը շատ ավելի

---

[4] Հոլոցենը երկրագնդի երկրաբանական պատմության այն փուլն է, որը սկսվել է պլեյստոցենի ավարտից հետո՝ մոտավորապես մ.թ.ա. 9700-ական թվականներից և շարունակվում է մինչև օրս (այն, պայմանավորված կլիմայական տատանումների հետ, բաժանվում է հինգ ենթափուլերի): Հոլոցենին անմիջականորեն նախորդել է երկրագնդի վերջին սառցակալումից հետո սկսված «Կրտսեր դրիաս» (Younger Dryas) կոչվող փուլը, որի ընթացքում (մոտ. 12.500-9700 թթ.) երկրագնդի վրա տիրում էր սառը և չորային կլիմա: «Կրտսեր դրիաս» անվանումը գալիս է այս փուլում համատարած կերպով հանդիպող տունդրա-ալպիական գոտում հաճախակի հանդիպող վայրի ծաղկի (Dryas octopetala) անվանումից: Այս փուլի բնորոշման համար տես, մասնավորապես, **Mangerud et al. 1974; Carlson 2013** (այս խնդրի շուրջ առկա ուսումնասիրությունների մասին) և այլն:

[5] **Butzer 1995: 127**. Առաջավոր Ասիայի անտառապատ տարածքները հիմնականում ընդգրկում էին Փոքր Ասիան, Հայկական լեռնաշխարհը, Իրաքի հյուսիսը և սիրիա-պաղեստինյան ծովեզերքը

խորն էր ու ավելի ընդարձակ տարածք էր ընդգրկում շնորհիվ բազմաթիվ վտակների բերած քաղցրահամ ջրի: Նմանապես անհամեմատ ավելի բարձր էր Իսրայելում գտնվող Մեռյալ ծովի մակարդակը, իսկ Հյուսիսային Միջագետքը աչքի էր ընկնում ջրառատությամբ և համատարած առատ բուսականությամբ: Եփրատի վտակ Խաբուրը նախկին ճահճուտից վերածվել էր մշտական հեղեղումներով աչքի ընկնող խոշոր գետի: Այս պարագայում Միջագետքը, հատկապես դրա հյուսիսը սկսում են վերածվել երկրագործական կարևորագույն շրջանի, որի բնակչությունը կտրուկ աճում է ոչ միայն ներքին ռեսուրսների, այլև արտաքին աղբյուրների շնորհիվ:

Ներկայումս մասնագիտական կարծիքները Չորրորդական դարաշրջանի վերջին փուլում (հոլոցենում) երկրագնդում տեղի ունեցած էական կլիմայական փոփոխությունների պատճառների (գլոբալ սառեցում կամ տաքացում, համաշխարհային օվկիանոսի մակարդակի բազմակի էական տատանումներ և այլն) հարցում տարբերվում են: Հիմնական պատճառները, անկասկած, երկրագնդի ուղեծրի փոփոխությունները պետք է լինեին, սակայն բավական շատ են այն մասնագետները, ովքեր հակված են դրանցում զգալի օժանդակ դեր վերապահելու աղետալի հետևանքներով հղի հզոր երկրաշարժերին[10]:

(Gilbert 1995: 154): Այնուամենայնիվ, ոչ ամենուրեք է այդ գործընթացը զարգանում վերընթաց ուղիով: Որոշ շրջաններում մինչսառցակալման փուլի անտառային ծածկույթը վերականգնվում է միայն մ.թ.ա. 1500 թ. մոտերքում:

[6] Lamb 1968; Porter 1981; 1986; Bryson and Bryson 1996; 1998; 2000; Sadler and Grattman 1999; Issar 2003: 107f.

Մ.թ.ա. 10000-6000 թթ. միջև ընկած ժամանակահատվածը բնութագրվում է որպես հարաբերականորեն խոնավ կլիմայի փուլ, որի բարձրակետն ընկնում է մ.թ.ա. 8000-5800 թթ. միջև[11]: Ընդ որում Վանա լճի ավազանում մոտավորապես մ.թ.ա. 8460 թ. շուրջ հիսուն տարվա ընթացքում նկատվում է խոնավության կտրուկ աճ, մի գործընթաց, որը հասնում է իր բարձրակետին մ.թ.ա. 6400-2100 թթ. միջև: Դրանից հետո, մ.թ.ա. 2100-100 թթ. բնութագրվում են չորային կլիմայով, որը շատ նման է լճի ավազանի ներկա վիճակին[12]: Այս եզրակացությունները հիմնված են լճի ջրում թթվածնի իզոտոպի քանակական վերլուծության վրա: Խոնավության աճի վերոհիշյալ փուլն ուղեկցվում էր ջրի աղայնության աստիճանի անկումով և մակարդակի բարձրացումով: Լճի նստվածքային շերտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարդու գործունեությունը երևում է սկսած մոտավորապես մ.թ.ա. 2800 թ. և կապված է ընտելացված կենդանիների գործոնի հետ: Ընդ որում երկրագործության հետքեր չկան. անտառների անկումը ոչ թե մարդու գործունեության, այլ չորային կլիմայի հետևանքն էր[13]:

Վերոհիշյալ փոփոխությունների անմիջական հետևանքը անտառների և խոտածածկույթի, ինչպես նաև կենդանական աշխարհի մինչսառցակալման փուլի իրավիճակի վերականգնումն էր: Այդ գործընթացը հատկապես արագ էր զարգանում Միջերկրական, Սև և

---

[7] **Haynes et al 1989** (հղումը ըստ **Kennett and Kennett 2006: 76**).
[8] **Wick, Lemcke, Sturm 2003: 667ff.**
[9] **Wick, Lemcke, Sturm 2003: 673.**

Կասպից ծովերի առափնյա շրջաններում: Ի տարբերություն ծովափնյա գոտու, լեռնային շրջաններում, այդ թվում Հայկական լեռնաշխարհում գերիշխում էր ցամաքային, սառը կլիման: Այստեղ խոշոր ծառատեսակներով ներկայացված անտառները (կաղնի, սոճի, եղևին՝ բրգաձև սոճի և այլն) դանդաղորեն էին հասնում բարձրլեռնային շրջանները[14]: Մոտավորապես մ.թ.ա. 5500 թ. սահմաններում նկատվում է կաղնու անտառների ծավալում՝ կապված խոնավության աճի հետ: Այդ գործընթացն ընդհատվում է մ.թ.ա. 2500 թ. մոտերքում, կրկին որպես հետևանք կլիմայի հետագա չորացման:

Մ.թ.ա. 5300-2700 թթ. միջև ակնհայտ է դառնում կաղնու անտառների ծավալների աճը Վանի շրջակայքում[15]: Բուսական աշխարհի վերելքը, սակայն, որոշ չափով ընդհատվում է մ.թ.ա. 4000 թ. սահմաններում: Իսկ ընդհանուր առմամբ Առաջավոր Ասիայում կլիմայի աստիճանական չորացումը սկսվում է մ.թ.ա. 6000 թ. հետո[16]: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անտառների անկումը հետևանք էր ոչ միայն կլիմայական պայմանների, այլև մարդու գործունեության:

Հայկական լեռնաշխարհում խոնավության աստիճանական աճի վկայությունն է Վանա լճի մակարդակի զգալի բարձրացումը մ.թ.ա. 5000-4000 թթ. միջև, ինչը հետևանք էր քաղցրահամ ջրի մեծ

---

[10] **Gilbert 1995:** 161.

[11] **Gilbert 1995:** 162.

[12] **Ritchie et al. 1989; Vita-Finzi 1978** (հղումը ըստ **Kennett and Kennett 2006:** 76).

ներհոսքի[17]: Ողջ հոլոցենի ընթացքում նկատվում են Եփրատի և Տիգրիսի մակարդակների կարճաժամկետ տատանումներ, որոնք անհրաժեշտաբար պետք է ազդեին այդ գետերի ափերին տեղադրված բնակավայրերի կենսագործունեության վրա: Եփրատի վտակ Խաբուրը մ.թ.ա. 5000 թ. մոտերքում փոքր գետից վերածվում է լայնահուն ջրառատ գետի, որը հաճախ հեղեղումների պատճառ էր դառնում: Հայկական լեռնազանգվածում ջրային ռեսուրսների աճի դրական հետևանքները առավել նկատելի պետք է լինեին Միջագետքի հարթավայրային բնակչության կենսագործունեության առնչությամբ:

Վանա լճի մակարդակի տատանումները

Վանա լիճը ձևավորվել է մոտավորապես 600.000 տարի առաջ տեկտոնիկ գործընթացների հետևանքով և գտնվում է երկրաբանական ջարդվածքի վրա:

Հոլոցենի վաղ փուլի համար վերը նշված իրավիճակի լույսի ներքո շատ կարևոր է ներկայացնել Վանա լճի հատակի նստվածքաշերտերի (այդ նստվածքաշերտը որոշ մասերում կազմում է շուրջ 400 մետր) բուսական ծագման փոշու հետազոտության արդյունքները, որոնք թույլ են տալիս հստակ ժամանակագրություն առաջարկել լճի մակարդակի փոփոխությունների համար ոչ միայն հոլոցենի ընթացքում, այլև դրանից ավելի վաղ շրջանի համար (սկսած մոտավորապես մ.թ.ա. 17000 թ.)[18]: Այդ

---

[13] **Butzer 1995:** 127.

[14] Այդ ուսումնասիրությունները ամփոփված են մի շարք հետազոտություններում **(Kempe, Degens 1978; Degens, Wong, Kempe, Kurtman 1984; Landmann and Reimer 1996; Wick et al 2003; Özdemir et al 2013** և այլն):

տատանումները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ: Նշենք, որ ստորև բերվող թվականները տարբեր մասնագետների մոտ որոշ, ոչ նշանակալից տարբերություն են տալիս, սակայն ընդհանուր պատկերը դրանից չի կարող փոփոխվել.

1) մ.թ.ա. 17.000 թ. - գիտականորեն տեսանելի ամենաբարձր մակարդակը, որը գերազանցում է ներկայիս մակարդակը շուրջ 70 մետրով:

2) մ.թ.ա. 13.000 թ. - լիճը գրեթե չորացել է, անցած 4000 տարիների ընթացքում նվազելով շուրջ 500 մետրով:

3) մ.թ.ա. 12.600-10.040 թթ. - մակարդակի աճ շուրջ 250 մետրով:

4) մ.թ.ա. 10.040-8600 թթ. - կրկին մակարդակի անկում:

5) մ.թ.ա. 8600-7000 թթ. - մակարդակի աճ:

6) մ.թ.ա. 7000-6100 թթ. - մակարդակի անկում:

7) մ.թ.ա. 5500 թ. մոտերք - մակարդակի աճ[19]:

8) մ.թ.ա. 3800-1000 թթ. - ցածր մակարդակ նախորդ դարաշրջանի համեմատ[20]: Մ.թ.ա. 3000 թ. մոտերքում մակարդակը հասել է ներկայիս մակարդակին[21]: Այս փուլում արձանագրված են

---

[15] Մ.թ.ա. 6200-4200 թթ. միջև ընկած ժամանակահատվածում Վանա լճի շրջակայքում ակնհայտ է անտառածածկույթի, բնականաբար նաև խոնավության աճը (**Wick et al 2003: 674**): Այս շրջանում անտառների ծավալն ընդարձակվում է, ընդգրկելով Հայկական Տավրոսի լեռնաշղթայի ներքին շրջանները:

[16] **Butzer 1995: 136.**

[17] Մ.թ.ա. 4200-2000 թթ. միջև ժամանակահատվածը բնորոշվում է որպես «կլիմայական օպտիմումի» փուլ, ինչի վկայությունն են լճի ջրում աղայնության ցածր տոկոսը և ջրածածկույթի մեծ մակերեսը (**Wick et al 2003: 674**):

տարեկան տեղումների քանակի անկման երեք ենթափուլեր[22].

ա) մ.թ.ա. 3200-2900 թթ. - տեղումների և, համապատասխանաբար, մակարդակի անկում:

բ) մ.թ.ա. 2350-2000 թթ. - տեղումների և, համապատասխանաբար, մակարդակի հետագա անկում:

գ) մ.թ.ա. 2000-0 թթ. - մակարդակի տատանումներ (մասնավորապես 1300թ. սահմաններում), գերազանցապես նվազման միտումով, չորային կլիմայի հաստատում: Այս փուլի վերջում Վանա լճի ավազանում հաստատվում է ներկայիս մոտ կլիմայական իրավիճակ:

9) մ.թ. 650-1200 թթ. - մակարդակի նշանակալից վերելք:

Վանա լճի մակարդակի տատանումների վերոհիշյալ գրաֆիկին համապատասխանում է միևնույն կլիմայական գոտում ընկած Զագրոսի լեռներում գտնվող Զերիբար լճի (Վանա լճից շուրջ 450կմ հարավ-արևմուտք) համար արձանագրված իրավիճակը, որ

---

[18] **Butzer 1995:** 136. Հետաքրքիր է, որ Վանա լճի ավազանում տեղումների նկատելի նվազման և լճի մակարդակի անկման երեք փուլերը ժամանակագրորեն համընկնում են Եգիպտոսում Նեղոսի մակարդակի նշանակալից անկման փուլերի հետ՝ մ.թ.ա. 3000 թ., 2200 թ. և 1300 թ.: Օրինակ, սրանց շարքում հատկապես կարևորէ հիշատակել որ մ.թ.ա. 2200 թ. մոտերքում Եթովպիայում գտնվող Թանա խոշոր լիճը, որը սնուցում է Եգիպտոս մտնող Կապույտ Նեղոսը (ջրի ծավալի շուրջ 2/3-ը), գրեթե չորացել էր (**Issar and Zohar 2007**: 133): Այս նույն ժամանակահատվածում Վանա լճի և Զագրոսի լեռներում գտնվող Զերիբար լճի ավազաններում վկայված է կաղնու անտառածածկույթի շարունակական անկում երեք փուլերով (մ.թ.ա. 3250-2750 թթ., մ.թ.ա. 2250-1600 թթ. և մ.թ.ա. 1300-1200 թթ.):

վերականգնվում է շրջակայքի անտառների ուսումնասիրության լույսի ներքո:

մ.թ.ա. 3250-2750 թթ. - կաղնու անտառների անկում

մ.թ.ա. 2250-1600 թթ. - անտառների ավելի մեծ անկում

մ.թ.ա. 1300-1200 թթ. - անտառների կտրուկ և խիստ անկում[23]:

Ինչ վերաբերում է Վանա լճին, ապա, ընդհանուր առմամբ, մ.թ.ա. 3300-900 թթ. Բնութագրվում են որպես լճի ցածր մակարդակի փուլ: Մի հանգամանք, որը պետք է ճակատագրական հետևանքներ ունենար ինչպես Միջագետքի՝ բացառապես Եփրատի ու Տիգրիսի ջրային ռեսուրսների վրա հիմնված վաղ երկրագործական-քաղաքային հասարակությունների տնտեսության, այնպես էլ Վան-Եփրատյան ջրավազանի տարածքի և ողջ Հայկական լեռնաշխարհի հասարակությունների կենսագործունեության համար: Ամենայն հավանականությամբ, տեղումների նվազումը և Վանա լճի մակարդակի անկումը պետք է ստիպեին Հարավային Միջագետքի շումերական բնակավայրերի բնակչությանը անցնելու արհեստական ոռոգման համակարգի ստեղծման[24]:

---

[19] Վերոհիշյալ անկումային փուլերի առանձնացումն ընդունվում է նաև այլ մասնագետների կողմից (**Thompson 2004:** 636f.): Այս երեք ժամանակահատվածները, ըստ հեղինակի, համընկնում են առաջավորասիական տարածաշրջանում հասարակությունների կենսագործունեության և, համապատասխանաբար, պետականությունների ժամանակավոր թուլացման և նույնիսկ անկման հետ (տես **Քոսյան 1998գ; 1999ա: 81-87**, նաև ստորև):

[20] **Butzer 1995**: 136.

Վանա լճի մակարդակի նշանակալից տատանումներ արձանագրված են նաև ոչ հեռավոր անցյալում, ինչը հիշատակվում է եվրոպացի ճանապարհորդների հուշագրություններում[25]: Այսպես, 1806 թ. լճի մակարդակի շարունակական բարձրացումը վտանգի տակ էր դրել Արճեշի և Վան քաղաքի արվարձանների կենսագործունեությունը: 1839 թ. լիճը բարձրացել էր 2 մետրով, իսկ 1841 թ.՝ 4 մետրով, ստիպելով Արճեշի բնակչությանը հեռանալ քաղաքից, քանի որ այն չորս կողմից օղակվել էր ջրով: Վանա լճի բարձրացումը շարունակվել էր ընդհուպ մինչև 1898 թ., որի հետևանքով մերձափնյա շատ բնակավայրեր անցել էին ջրի տակ:

Եփրատի և Տիգրիսի ջրագրությունը

Վանա և Ջերիբար լճերի մակարդակների տատանումները լիովին համընկնում են Եփրատ և Տիգրիս գետերի մակարդակների տատանումներին՝ ստորև բերվող գրաֆիկի լույսի ներքո: Այն ընդգրկում է մ.թ.ա. II հազ. կեսերից մինչև մ.թ.ա. X դարի կեսերն ընկած ժամանակահատվածը[26]:

1) մակարդակի կտրուկ աճ (մոտավորապես մ.թ.ա. 1450 թ.)

---

[21] Նման տեղեկությունների համահավաքը տես **Yakar 2000: 386** (հղվող հեղինակներն են՝ Ա. Ժոբեր, Ջ. Բրանտ, Վ. Լոֆթուս, Հ. Լեյարդ, Հ. Լինչ), նաև ավելի վաղ Ջ. Լինչի ներկայացրած տվյալները (**Lynch 1901.II: 49** (լճի մակարդակի տատանումների աղյուսակը ըստ տարեթվերի):

[22] **Kay and Johnson 1981: 258.** Եփրատի և Տիգրիսի մակարդակների տատանումներն այստեղ ոսոմնասիրված են վերջին 6000 տարվա կտրվածքով:

2) աճի բարձրակետ (մոտավորապես մ.թ.ա. 1350-1250 թթ.)

3) կտրուկ անկում, նվազագույն մակարդակը մոտավորապես մ.թ.ա. 1150 թ.

4) մակարդակի համեմատական աճ (մոտավորապես մ.թ.ա. 950 թ.)

Վերը բերված տվյալները արտակարգ կարևոր են, քանի որ Առաջավոր Ասիայի երկու խոշորագույն գետերի մակարդակների անկումը ինքնին արդեն վկայում է դրանցով սնվող տարածքների բնակչության կյանքում տեղի ունեցած բացասական գործընթացների առկայության օգտին: Հատկանշական է, որ միջագետքյան սեպագիր տեքստերում զգալի թվով տեղեկություններ են պահպանվել այս նույն ժամանակաշրջանում տիրող սովի մասին[27]:

Անհնար է չնկատել, թե ինչպիսի արտակարգ իրավիճակներ կարող էին ստեղծվել կլիմայի տաքացման հետ կապված: Որպես օրինակ կարելի է բերել Իրաքի հյուսիսում գտնվող Ջազիրայի շրջանը (Մոսուլ քաղաքը)[28]: Տեղումների հաշվին գոյատևող երկրագործության համար տարեկան տեղումների նվազագույն չափը 200մմ. է: Ջազիրայում և Հյուսիսային Միջագետքի ալյուվիալ շրջաններում տարեկան տեղումների քանակը կազմում է 50-150մմ, իսկ նախալեռնային գոտիներում՝ 200-500մմ: Ձմռանը Հայկական լեռնաշխարհում միջին ջերմաստիճանի 1% բարձրացումը կարող է Հյուսիսային Միջագետքում տարեկան տեղումների քանակը նվազեցնել 30

---

[23] **Neumann and Parpola 1987:** 178ff.

[24] **Neumann and Parpola 1987:** 162.

միլիմետրով: Դժվար չէ պատկերացնել թե ինչպիսի ծանր հետևանքներ կարող է ունենալ կլիմայի տաքացումը, նույնիսկ Միջագետքի հարավում, որտեղ երկրագործությունը հենվում է արհեստական ոռոգման վրա. պատճառը գետերի ջրի մակարդակի անկումն է:

Ջրային ռեսուրսների վերոհիշյալ տատանումների գրաֆիկին լիովին համապատասխանում են Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում անտառների ծավալների փոփոխությունները: Մասնավորապես, Սիրիայի հյուսիսում և ներկայիս Թուրքիայի տարածքում, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում ուշբրոնզեդարի վերջում նկատվում է անտառների ծավալման բարձրակետ[29]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քոսյան Ա.Վ. 1998գ, Հին Առաջավոր Ասիայի և Էգեյան ծովի ավազանի պատմության պարբերացման շուրջ, ՄՄԱԵԺ XVII, էջ 124-140.

Քոսյան Ա.Վ. 1999ա, Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան:

Քոսյան Ա.Վ. 2014, Առաջավոր Ասիայի շրջակա միջավայրը և Հայկական լեռնաշխարհը (վաղ և միջին բրոնզեդար), Հին Արևելք 1 (6), էջ 144-165:

[25] **Bintliff 1982:** 146.

Косян А.В. 1998, Кризис XIIв. до н.э.: этнические передвижения и депопуляция (к постановке проблемы), Լրաբեր հասարակական գիտությունների 3, 45-52.

Bar-Yosef O. and A.Belfer-Cohen 1992, From Foraging to Farming in the Mediterranean Levant. - In: Transitions to Agriculture in Prehistory (eds. A.B.Gebauer and T.D.Price), Madison, 21-48.

Bintliff J.L. and Zeist W. van (eds.) 1982, Palaeoclimates, Palaeoenvironments, and Human Communities in the Eastern Mediterranean Region in Later Prehistory, Oxford (BAR International Series 133).

Bryson R. A. and Bryson R. U. 1996, High resolution simulations of regional Holocene climate: North Africa and Near East, in NATOASI Series, Subseries I Global Environmental Change: Climatic Change in the Third Millenium BC (eds. N. H. Dalfes, G. Kukla and H. Weiss), Berlin, pp. 565–593.

Bryson R. A. and Bryson R. U. 1998, Application of a global volcanicity time-series on high resolution paleoclimatic modeling of the eastern Mediterranean. In Water, Environment and Society in Times of Climate Change (eds. A. Issar, and N. Brown), Dordrecht, pp. 1-21.

Bryson R. A. and Bryson R. U. 2000, Site-specific high-resolution models of the monsoon for Africa and Asia. Global and Planetary Change, 26, pp. 77-84.

Butzer K.W. 1995, Environmental Change in the Near East and Human Impact on the Land. In.: CANE, vol.I, pp. 123-151.

Carlson A.E. 2013, The Younger Dryas Climate Event. - In: Encyclopedia of Quaternary Science (ed.S.A.Elias), vol.3, Amsterdam, pp. 126-134.

Dalfes H.N., Kukla G. and H.Weiss 1997 (eds.), Third Millennium BC Climate Change and Old World Collapse, Berlin Heidelberg.

Degens, E.T.; Wong, H.K.; Kempe, S.; Kurtman, F. 1984, A Geological study of Lake Van, eastern Turkey, International Journal of Earth Sciences 73 (2), pp. 701-734.

Gilbert A.S. 1995, The Flora and Fauna of the Ancient Near East. - In.: CANE, vol.I, pp. 153-174.

Göktürk O.M. 2011, Climate in the Eastern Mediterranean through the Holocene inferred from Turkish Stalagmites, Bern (dissertation).

Goring-Morris A.N. and A.Belfer-Cohen 1997, The Articulation of Cultural Processes and Late Quaternary Environmental Changes in Cisjordan, Paleorient 23, pp. 71-93.

Haynes C.V.J., C.H.Eyles, L.A.Pavlish, J.C.Ritchie, and M.Rybak 1989, Holocene palaeoecology of the eastern Sahara; Selima Oasis, Quarternary Science Reviews 8, pp. 109-136.

Huntley B., Cramer W., Morgan A.V.Prentice H.C. and J.R.M.Allen 1992, Environmental Changes: The Spatial and Evolutionary Responsesof terrestrial Biota, Berlin - Heidelberg (NATO ASI Series 47).

Issar A.S. 2003, Climate Changes During the Holocene and their Impact on Hydrological Systems, Cambridge.

Issar A.S. and M.Zohar 2007, Climate Change - Envinonment and History of the Near East, Berlin - Heidelberg (II edition).

Kay P.A., D.L.Johnson 1981, Estimation of Tigris-Euphrates Streamflow from Regional Paleoenvironmental Proxy-Date, Climatic Change 3, pp. 251-263.

Kempe, S.; Degens, E.T. 1978, Lake Van varve record: the past 10,420 years, in Degens, E.T.; Kurtman, F. (eds.), Geology of Lake Van, Ankara, pp. 56–63.

Kennett D.J., J.P.Kennett 2006, Early State Formation in Southern Mesopotamia: Sea Levels, Shorelines, and Climatic Change, The Journal of Island and Coastal Archaeology 1:1, pp. 67-99.

Lamb H. H. 1968, Volcanic dust, melting of ice caps and sea levels - discussion. Bloch, M. R. - A reply. Palaeogeography, Palaeoclimatology and Palaeoecology, 4, pp. 219-226.

Landmann G., Reimer A., Kempe S. 1996, Climatically induced lake level changes at Lake Van, Turkey, during Pleistocene/Holocene transition, Global Biogeochemical Cycles 10, issue 4, pp. 797-808.

Litt Th., S.Krastel, S.Örçen and M.Karakyikoğlu 2007, Lake Van Drilling Project: A Long Continental Record in Eastern Turkey, Scientific Drilling 4, pp. 40-41.

Lynch H.F.B. 1901, Armenia. Travels and Studies, vols. I-II, London.

Mangerud J., Andersen S.T., Berglund B.E. and Donner J.J. 1974, Quaternary stratigraphy of Norden, a proposal for terminology and classification, Boreas 3, pp. 109-128.

Neumann J. and Parpola S. 1987, Climatic Change and the Eleventh-Tenth Century Eclipse of Assyria and Babylonia, JNES 46/3, pp. 161-182.

Özdemir H., Konyar E., Ayman I., Avcı C. 2013, Holosendeki Van Gölü seviye değişimleri ile arkeolojik bulguların karşılaştırılması, International Journal of Human Sciences 10, pp. 959-992.

Peteet D. 2000, Sensitivity and Rapidity of vegetational Response to Abrupt Climate Change, Proceedings of the National Academy of Sciences 97, pp. 1359-1361.

Porter S. C. 1981, Glaciological evidence of Holocene climatic change, in Climate and History, eds. T. M. L. Wigley, M. J. Ingram and G. Farmer, Cambridge, pp. 82-110.

Porter S. C. 1986, Pattern and forcing of Northern Hemisphere glacier variations during the last millennium. Quaternary Research. 26, pp. 27-48.

Ritchie J.C., C.H.Eyles, C.V.Haynes 1985, Sediment and Pollen Evidence for an Early to Mid Holocene humid period in the Eastern Sahara, Nature 314, pp. 352-355.

Rossignol-Strick M. 1999, The Holocene Climate Optimum and Pollen Records of Sapropel 1 in the Eastern Mediterranean, 9000-6000 BP, Quaternary Science Reviews 18, pp. 515-530.

Sadler J. P. and Grattman J. P. 1999, Volcanoes as agents of past environmental change. Global and Planetary Change, 21, pp. 181-196.

Thompson W.R. 2004, Complexity, Diminishing Marginal Returns, and Serial Mesopotamian Fragmentation, Journal of World-Systems Research X/3, pp. 613-652.

Vita-Finzi C. 1978, Recent Alluvial History in the catchment of the Arabo-Persian Gulf. - In: The Environmental History of the Near and Middle East Since the Last Ice Age (ed. W.C.Brice), New York, pp. 255-264.

Weber M.-J., Grimm S.B. and M.Baales 2011, Between warm and cold: Impact of the Younger Dryas on human behavior in Cetral Europe, Quaternary International 242, 277-301.

Wick L., G.Lemcke, M.Sturm 2003, Evidence of Lateglacial and Holocene climatic change and human impact in eastern Anatolia: high-resolution pollen charcoal, isotopic and geochemical records

from the laminated sediments of Lake Van, Turkey, The Holocene 13,5, pp. 665-675.

Yakar J. 2000, Ethnoarchaeology of Anatolia: Rural Socio-Economy in the Bronze and Iron Ages, Tel Aviv.

Արամ Քոսյան - *պ.գ.դ.,*
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի,
Հին Արևելքի բաժնի վարիչ,
aramkosyan@yahoo.com

NATURAL AND CLIMATIC SITUATION IN THE ARMENIAN HIGHLAND DURING EARLY HOLOCENE

Keywords: Environment, palaeoclimatology, Holocene, Lake Van, Armenian Highland, Near East.

In the article are represented the results of palaeoclimatic studies carried out during recent years in different parts of the Armenian Highland, mostly in the Lake Van basin, which are of utmost importance for the study of the early periods of the history of the region. Among this data are especially of great value those which cover approximately the period from 3000 to the mid-I mill. BC, the period comparatively well-studied by means of diachronic written sources. The latters fully prove the existence of essential climatic fluctuations which had greatly affected ancient Near Eastern civilizations.

Aram Kosyan - *Doctor of Sciences in History,*
Institute of Oriental Studies NAS RA,
Head of the Department of Ancient Orient,
aramkosyan@yahoo.com

ԻՐԱՆԻ ՍՊԱՀԲԵՏԸ ԵՐՐՈՐԴ ԴԱՐԻ ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ

Բանալի բառեր՝ «Ērān–Spāhbed», Արշակունիներ, Սասանյաններ, Արտաշիր I, Շապուհ I, Ներսեհ, Կարեն, Սուրեն, Ռախշ, Ասպահաբեդի պահլավ, Նախշ-ի Ռուստամ:

Սասանյան փերությանը, նրա գոյության չորս դարերի ընթացքում, մշտապես հատուկ է եղել ավալապաշտական քաղաքականությունը: III դ. սկզբներից արևմուտքում Հռոմի, իսկ արևելքում՝ Քուշանական պետության դեմ նվաճողական պատերազմներում Սասանյանների հաջողությունների առաջին գրավականն լավ կազմակերպված և մարտունակ բանակ ունենալն էր: Սակայն մինչ օրս շատ քիչ բան է հայտնի III դ. պարսկական բանակի կառուցվածքի և հատկապես կառավարման համակարգի վերաբերյալ: V-X դդ. հայ, բյուզանդական և արաբա-պարսկական մատենագիրների հավաստմամբ ի սկզբանե Սասանյան փերության ռազմական կյանքը փնօրինել սպարապետություն գործակալությունը, որի ղեկավարը պատվական դիրք է զգաղեցրել իրանական արքունիքում: Շապուհ I-ի Քաաբա-ի Զարդուշտի և Ներսեհի Պայկուլեի արձանագրություններում «Ērān–Spāhbed»-ի պաշտոնով անձանց հիշատակությունը, ըստ էության, հաստատում է Սասանյան պետական համակարգում առանձին ռազմական գերատեսչության

---

* Հոդվածը ներկայացվել է 05.12.2020: Գրախոսվել է 07.12.2020:

գոյությունը: Սակայն Սասանյան վիմագրերի և մատենագրական տվյալների քննությունը ցույց է տալիս, որ III դ. «Ērān-Spāhbed»-ը բնավ էլ պետական առանցքային պաշտոնյաների թվին չի պատկանել և նույնիսկ ռազմական կյանքի կազմակերպման գործում մղված է եղել հետին պլան:

Երրորդ դարի Սասանյան տերության պետական համակարգում ռազմական գերատեսչության վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրների տեղեկությունները չափազանց աղքատիկ ու հակասական են: Ուշհռոմեական սկզբնաղբյուրները պարսկա-հռոմեական պատերազմի համապատկերում որպես առանձին զորագլուխներ հաճախ անվանապես հիշատակում են պարսիկ մեծատոհմիկների, բայց, որպես իրանական զորքի գլխավոր ղեկավարներ, մշտապես նշում են պարսից արքաներին: Մ. Խորենացու հաղորդման համաձայն, դեռևս պարթևական դարաշրջանում իրանական զորքի ղեկավարությունը իրականացվել է ասպահաբետ կոչվող գործակալի կողմից և դարձել համանուն տոհմի ժառանգական իրավունքը[30]: Նրա հավաստմամբ III դարի սկզբներին պարթևական այլ տոհմերի (պահլավների) հետ Ասպահաբետի տոհմը ևս իր հպատակությունն էր հայտնել Սասանյաններին[31]: VII-րդ դարի բյուզանդական մատենագիր Թեոփիլակտեսը ևս հաստատում է Արշակունիների օրոք Իրանի սպարապետության տոհմական իրավունք լինելու վարկածը, բայց նրա

[1] **Մ. Խորենացի 1913**, II. ԿԸ:

[2] **Մ. Խորենացի 1913**, II, ՀԱ: **Ագաթանգեղոս 1983**, § 20:

ստեղծումը հասցնում է Վշնասպի որդի Դարեհի ժամանակները[32]: IX-X դդ. արաբ հեղինակ Թաբարիի պնդմամբ Իրանի սպարապետի (**iṣbahðīyat Īrānšahr**) պաշտոնը ստեղծվել է առասպելական Կայանյան արքա Վշտասպի ժամանակներում և եղել է Իսպահբուդան (**Ispahbudhan=Isfandiyar**) պահլավի ժառանգական իրավունքը[33]: Մասուդին սպարապետություն հաստատության ստեղծումը վերագրում է Արտաշիր I-ին (224-241թթ.), բայց, նշելով, թե «Արտաշիրը սահմանեց սպահբեդի պաշտոնը, թվով չորս՝ մեկը Խորասանի, մեկը՝արևմտյան, երրորդը հարավային և չորրորդը՝հյուսիսային շրջանների համար...»[34], նախորդ հեղինակների նման բացահայտում է հիմնախնդրի վերաբերյալ իր պատկերացումների սխալականությունը:

Այսպես կոչված «**Թանսարի նամակի**» համաձայն Իրանի սպարապետի դերը վաղսասանյան Իրանում այն աստիճան բարձր է եղել, որ նա զրադաշտական քահայանապետի (**mowbedān mowbed**) և դպրապետի (**dabīrbed, dibīruft**) հետ տնօրինել է Իրանի նոր գահակալի ընտրության իրավունքը: Պետության կառավարման համար զանազան տեսական և գործնական խորհուրդներ, ինչպես նաև բարոյական կանոններ պարունակող այս ստեղծագործությունը

---

[3] **Феофилакт 1957**, III, 18. 6.

[4] **Tabary 1987:** 77 (683). Հեղինակը մեկ այլ տեղ հիշատակում է Միհրանյան տոհմից սերող Սաբուր Ռեյացուն (Sābūhr of al-Rayy)՝ որպես երկրի գերագույն հարամանատար (iṣbahbath al bilad= Ērān-Spāhbed) (**Tabary 1999**, 131 (885)): Այդ հիման վրա դեռևս 19-րդ դ. կեսերին Մ. Պատկանյանը ենթադրել է, որ Միհրանյան տոհմը եղել է Ասպահաբեդի պահլավի կողային ճյուղը (**Patkanian 1866:** 129):

[5] **ал Масуди 1958**: 472.

իրականում գրվել է Խոսրով I-ի օրոք՝ 557-570 թթ., և միտումնավոր վերագրվել է Արտաշիր I-ի նշանավոր մոգպետ Թանսարին[35]: Հետևաբար, ինչպես արաբ մատենագիրների դեպքում, այստեղ ևս ակնհայտ է ուշ ժամանակաշրջանի իրողությունները վաղեմացնելու մտայնությունը:

Ինչպես տեսնում ենք, Իրանի սպարապետության առաջացման վերաբերյալ գրավոր աղբյուրների վկայությունները խիստ մշուշոտ ու հակասական են: Դրանց հաշտեցման փորձերն ուսումնասիրողներից շատերին հանգեցրել են այն կարծիքին, որ Իրանի զորապետի պաշտոնը երևան է եկել առնվազն Արշակունիների դարաշրջանում և հետագայում պետական այլևայլ հաստատությունների հետ ժառանգվել է նախ Մեծ Հայքի Արշակունիների[36], ապա և Իրանի նոր հարստության՝Սասանյանների կողմից[37]:

Թեպետ Արշակունիների դարաշրջանից մեզ հասած վավերագրերում հիշատակություններ չկան **«Ērān–Spāhbed»**-ի պաշտոնով անձանց մասին, այնուամենայնիվ, մենք ևս հավանական ենք համարում, որ այն առաջացել է հենց պարթևական դարաշրջանում:

---

[6] **Луконин 1969**: 104-106. **The Letter of Tansar 1968**.

[7] Էդ. Խուրշուդյանը հավանական է համարում, որ հայերեն «սպարապետ» բառը հանդիսանում է հայերենում վաղմիջինպարթևերեն (Ք.ա. II Ք.հ. II դդ.) ***spādpet*** բառի ադապտացիան (**Хуршудян 2003**: 168. **Хуршудян 1992**: 178. **Хуршудян 2015**: 199): Դա ընդունում է նաև Ա. Մուշեղյանը՝ նկատելով, որ զենդերենից (ավեստերեն) և պահլավերենից փոխառյալ հայերեն բառերում **«դ»**-ն հաճախ փոխվում է **«ր»**-ի՝ **spadapati** - սպարապետ, **prdkn** - փառական, **nived** - նվեր և այլն (**Մուշեղյան 2007**, 266, ծան. 5):

[8] **Фрай 2002**: 287; **Хуршудян 2003**: 164.

Նման ենթադրության կարելի է գալ, մասնավորապես, Պարթևական պետության հիմնադիր Արշակ I-ի (Ք.ա. 247-211 թթ.)՝ հավանաբար մինչև Ք.ա. 238 թ. հատած դրամների մի տիպի վրա առկա **«krny»** արամեատառ լեգենդից[38]: Արշակ I-ի **«krny»** տիտղոսի ստուգաբանության գործում, սովորաբար, շեշտը դրվում է Աքեմենյան տերության խոշոր ռազմական միավորների կառավարիչների **kāranā** տիտղոսի հետ նրա հիմքային (**kāra** - **զորք**) ընդհանրության վրա[39]: Դ. Սելվուդի և այլոց կարծիքով դեռևս Աքեմենյանների օրոք **«krny»**-ն արդեն համարժեք էր դարձել հունական **στρατηγός** - զորավար, կառավարիչ հասկացությանը[40]: Իր հերթին Մ. Օլբրեխտը, փաստարկելով Պարսքում Ք.ա. III դ. կեսերին կառավարած Վահբարզի (մոտ Ք. ա. 205-164 թթ.) 2008 թ. հայտնաբերված դրամների վրա այս տիտղոսի առկայությունը (**whwbrz krny**), նույիսկ ենթադրում է, որ **«kāranā»-«krny»** տիտղոսը կիրառվել է ոչ միայն Արշակի, այլև Իրանի տարածքում հետաքեմենյան դարաշրջանում առաջացած այլ պետական կազմավորումների կառավարիչների կողմից[41]: Մեր կարծիքով, Արշակ I-ի կողմից **«krny»** տիտղոսի ընդունումը պայմանավորվել է Սելևկյան արքա Սելևկոս II-ի դեմ վճռական բախման նախօրեին դահերի ցեղային միության մյուս երկու ցեղերի՝ քսանթիների ու պիզուրների շրջանում որպես համամիութենական ռազմառաջնորդ ճանաչում գտնելու

---

[9] **Sellwood 1980: 3. 3.**
[10] **Olbrycht 2011: 230.**
[11] **Sellwood 2000: 280, f. 4; Хуршудян 2003: 167; Хуршудян 2015: 198-199.**
[12] **Olbrycht 2011: 230.**

մտայնությամբ[42]: Արշակ I-ի հետագա դրամների վրա «krny» տիտղոսը փոխարինված է αυτοκρατορ (ինքնակալ) տիտղոսով, որ թեպետ նախկինի պես ընդգծում էր արքայի իշխանության ռազմական, ուժային բնույթը[43], բայց այլևս արքային չէր ներկայացնում իբրև անմիջական զորագլուխ: Արշակ I-ի հաջորդների դրամների վրա ևս «krny» տիտղոսն այլևս չի դրոշմվել, ինչից հետևում է, որ պետության կայունացման հետ Արշակունիների անմիջական ռազմառաջնորդական գործառույթը առերևույթ մղվել է հետին պլան: Փոխարենը «krny»-«զորապետ» տիտղոսը տեսնում ենք պարթևական «պատվավորագույն» տոհմերից մեկի՝ Կարենյան տոհմի անվան հիմքում: Դա մեզ հիմք է տալիս կարծելու, որ Արշակունիների պետության կայունացումից հետո դահերի ցեղային միության (պարներ, պիզուրներ, քսանթիներ)[44] երեք ցեղառաջնորդների մեջ կատարվել է գործառույթների բաժանում. պետության հիմնադիր պարների ցեղառաջնորդ Արշակին և նրա տոհմին վերապահվել է արքայական իշխանությունը, իսկ մյուս երկու (պիզուր և քսանթի) ցեղառաջնորդներից մեկին հանձնվել է զորավարական գործառույթը, որից էլ այն հայտնի է դարձել Կարենյան անվամբ[45]: Այս մեկնաբանությունը

---

[13] **Մելիքյան 2012**, 67-68: **Մելիքյան 2016**, 107-108, ծանոթ. 307:

[14] Հելլենիստական դարաշրջանում այս տիտղոսի նշանակության մասին տե՛ս **Polybius 1893:** III. 86. 7; 6. 15. 2. **Иосиф Ф. 1996:** XIII, 219. **Бикерман 1985**: 12; **Houghton 1983**: 16, 79, 82, pls. 15. 245–263, 47.800, 48. 816-817; **Olbrycht 2011**: 230, f. 4.

[15] **Strabon 1988**, XI, 9, 2.

[16] **Մելիքյան 2012**, 64: **Մելիքյան 2016**, 107-108, ծանոթ. 305: Վերոնշյալի տրամաբանությամբ դահերի ցեղային միության երրորդ ցեղառաջնորդական տոհմը, որն աղբյուրներում հիշատակված է

ընդունելի է հատկապես հայկական միջավայրում նախարարական տոհմերին նրանց զբաղեցրած գործակալության անունով կոչելու երևույթի տեսանկյունից (Մամիկոնյաններին՝ Սպարապետունի, Բագրատուններին՝ Ասպետունի, Խոռխոռուններին՝ Մաղխազունի և այլն):

Անշուշտ, վերոնշյալի տեսանկյունից շատ տարօրինակ է, որ նույնիսկ Արշակունիների պետությանը ժամանակակից և, հաճախ, նրանց ռազմական գործերին քաջատեղյակ հունահռոմեական աղբյուրները Կարենյան տոհմի մասին չեն վկայում, իսկ Կ. Տակիտոսի եզակի հիշատակությունն (Annales, XII, 12-13) էլ վերաբերում է Կարենի ոչ թե համապարթևական զորքի առաջնորդությանը, այլ Գոդերզ II-ի (40-51 թթ.) հակարքա Միհրդատ Արշակունուն աջակցությանը: Ընդհանրապես լռության մատնելով **«Ērān–Spāhbed»**-ներին՝ հունահռոմեական աղբյուրներն իբրև պարթևական զորագլուխներ հիշատակում են

Սուրենյան անվամբ, պետք է որ ստացած լինի քրմական գործառույթներ: Իբրև փաստարկ կարող է ծառայել այս տոհմի անվան հիմքային ընդհանրությունը Անահիդ աստվածուհու **«Sūrā**=ուժեղ, (ոգով) հզոր» մակդիրի հետ, ինչպես նաև, պարթևական պետական համակարգում Սուրենյանների կրած թագադիր իրավունքը (**Плутарх 1990**: Красс XXI. 6-7; **Тацит 1965**, VI, 42), որը դարձյալ վկայում է նրանց վաղեմի քրմապետական գործառույթի մասին: Մեր կարծիքով, պարթևական Արշավիր արքայի որդիների միջև գժտության և Աբգար թագավորի կողմից նրանց հաշտեցման մասին Մ. Խորենացու հաղորդած ավանդազրույցը (**Մ. Խորենացի, 1913**, II. ԿԸ) թեև ժամանակային մեծ շեղումով և վիպական գունավորմամբ, այնուամենայնիվ արտացոլում է դահերի հանրության մեջ հին հնդիրանական եռադասության սկզբունքով իշխանության բաժանման իրողությունը:

Արշակունի արքաներին[46], նրանց մերձավոր անձանց[47], իսկ ավելի հաճախ՝ արքաների եղբայրներին ու որդիներին[48]: Իրանական զորքի գործնական ղեկավարումից **«Ērān–Spāhbed»**-ի օտարումը կարող էր մի կողմից պայմանավորված լինել բանակ-արքա կապի պահպանման անհրաժեշտությամբ, մյուս կողմից՝ դա կարող էր կատարվել տերության ներքաղաքական կյանքում բանակի հակարքա գործունեությունը բացառելու մտայնությամբ: Ամեն դեպքում արդյունքը մեկն էր. **«Ērān–Spāhbed»**-ի գործակալությունը երկրի ռազմական գերատեսչությունից վերածվում էր յուրօրինակ պատվի, որն ամրագրում էր Կարենյան տոհմի հեղինակությունը պարթևական բարձր ազնվականության[49] շրջանում:

Պարթևական դարաշրջանում **«Ērān–Spāhbed»**-ի գործառույթի «թափառող» բնույթն արտացոլվել է նաև միջին պարսկերեն խմբագրությամբ մեզ հասած **«Ayādgār I Zarēr»** պարթևական հերոսական

---

[17] **Justinus 1886**, XLII. 1. 4-5; **Ibid.**, 1886, XLII. 2. 1-2; **Dio Cassios 1955**, XXXVI. 45. Հատկանշական է, որ պարթևական 45 արքաներից (ներառյալ ինքնակոչ և դրածո արքաները) (**Assar 2011**, 113-171) 10-ը զոհվել են մարտի դաշտում կամ մահացել են պատերազմում ստացած վերքերից:

[18] **Justinus, 1886**, XLII. 4. 7; **Плутарх 1990**, Красс, XXI.7; **Тацит, 1969**, Анналы, XV. 2; **Dion Cassios 1955**, XLVIII. 25.

[48] **Josephus, 1895**; **Иосиф Ф. 1969**, 14. 342; **Dion Cassios 1955**, XL. 28; **Тацит, 1969**, Анналы, VI. VI, 33.

[19] Անտիկ հեղինակներն Արշակունիների պետության մեջ սոցիալական վերնախավին հավաքական կոչում են **«Συνέσριὸν» (Strabon 1988**, XI, 9. 3), **«Ordo probulorum» (Justinus 1886**, XLI, 2. 2.), կամ էլ **«Senatus Parthorum» (Justin**, XLII, 4. 1.) անուններով: Դրա ներկայացուցուցիչները, ըստ երևույթին, մեծարվել են «պատվավորագույն» (հուն՝. **τιμιώτατα**) տիտղոսով:

ավանդազրույցում (§ 78-79), համաձայն որի Վշտասպ արքան խոստանում է Զարերի սպանության վրեժն առնողին կնության տալ իր դուստր Խումակին, ինչպես նաև, նրան հանձնել Զարերի տունը, տիրույթը և Իրանի սպահբեդի պաշտոնը[50]: Ակնհայտ է, որ այստեղ «**Ērān-Spāhbed**»-ի պաշտոնը համարված է ոչ թե տոհմական, այլ արքայի կողմից ըստ իրավիճակի շնորհվող անհատական իրավունք:

Հայտնի է, որ արշակունիների դեմ Սասանյանների հակամարտության ընթացքում պարթևական տոհմերի մեծագույն մասը լքեց իրենց բնիկ տերերին և ծառայության անցավ Արտաշիրի մոտ[51]. Սակայն հարց է առաջանում. նրանք պահպանել են արդյոք Արշակունիների օրոք ունեցած պատվո և պաշտոնական դիրքերը, թե՝ Սասանյանները նրանց նորաստեղծ տերության պետական համակարգի մեջ են ընդունել՝ նոր քաղաքական իրողություններին համապատասխան վերափոխելով նրանց դիրքն ու գործառույթները: Ավանդական գրավոր սկզբնաղբյուների համաձայն պարթևական պահլավների դիրքերը մնացել են աներեր: Մինչդեռ Շապուհ I-ի (242-272 թթ.) Քաաբա-ի Զարդուշտի (**ŠKZ**) եռալեզու և Ներսեհի (293-303 թթ.) Պայկուլեի (**NPi**) երկլեզու արձանագրությունները վկայում են հակառակի մասին:

ŠKZ-ում Սասանյան երեք արքաների՝ Պապակի, Արտաշիր I-ի և Շապուհ I-ի արքունի ցուցակները

---

[20] **Амбарцумян 2009**.

[21] **Агатангелос 1983**, § 20. «...Տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց... միամտեալ և հավանեալ և նուաճեալ էին ի տէրութիւն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեաննն»:

կազմված են պատվո հարաբերության սկզբունքով[52]: Այսինքն՝ պալատականի տեղը պայմանավորված է նրա ազնվազարմությամբ (ազնվական տոհմերի աստիճանակարգության մեջ զբաղեցրած տեղով) և նոր միայն նրա կրած պաշտոնով[53]: Պապակի արքունի ցուցակը շատ պարզ է և բաղկացած է ընդամենը ութ անձանցից. «Ահա նրանք, ովքեր ապրել են Պապակ արքայի իշխանության ներքո. Սասան՝ որդին Օրնուկի, Պարդիկ՝ որդին Պարդիկի, Վարթրագնիպատ՝ որդին Խուրի, Ասպորիկ՝ որդին Ասպորիկի, Փուխրիկ՝ որդին Մարդինի, Զիկ՝ արարողապետ, Շապուհ՝ որդին Վեզանի, Շապուհ՝ որդին Միհրբուզանի»[54]: Ինչպես տեսնում ենք, ցուցակում **«Spāhbed»** պաշտոնյա հիշատակված չէ: Հավանաբար դա պետք է բացատրել նրանով, որ Պապակի օրոք Պարսքը այդքան էլ մեծ պետական կազմավորում չէր և նրա ռազմական կազմակերպության ղեկավարումը առանձին պաշտոնի անհրաժեշտություն չէր առաջադրում: Ամենայն հավանականությամբ Պապակը շարունակել է Պարսքի նախորդ՝ Բազրանգիդյան հարստության ավանդույթները և անձամբ է իրականացրել զորքի ղեկավարությունը: Նույնիսկ, եթե զուտ տեսականորեն համարենք, որ վերոնշյալ անձանցից մեկն, այնուամենայնիվ, պաշտոնապես համարվել է Պարսքի զորապետը, ապա պետք է ընդունենք, որ նրա այս դերն այնքան աննշան է եղել, որ **ŠKZ**-ի հեղինակը նրա պաշտոնի անունը հիշատակելու հարկ չի համարել:

---

[22] **Daryaee 2007**: 65–72.
[23] **Хуршудян 1992:** 69-74.
[24] **Sprengling 1953**: 18.

Արտաշիր I-ի արքունի ցուցակն անհամեմատ բազմանդամ ու բազմաշերտ է: Ցուցակը սկսվում է հպատակ արքաների (**šahrdārān**) խավով.

«Սատարպ՝ Ապրենակի արքա,

Արտաշիր՝ Մերվի արքա,

Արտաշիր՝Կրմանի արքա,

Արտաշիր՝Սակաստանի արքա»:

Երկրորդ խավը կազմում են Սասանյան արքայատան անդամները (**wāspuhragān**)[55]. «Դինակ՝ մայրը արքա Պապակի,

Ռոդակ՝ մայրը արքայից արքա Արտաշիրի,

Դինակ՝ Պապակի դուստր, թագուհիների թագուհի,

Արտաշիր՝ բդեշխ,

Պապակ՝ հազարապետ (միջ. պարսկ. **hazārbed** կամ **hazāruft**, հուն.՝ **χιλίαρχος**)»:

Երրորդ խավը կազմում են Իրանի հեղինակավոր տոհմերի ներկայացուցիչները (**wuzurgān**):

«.... Դահեն Վարազյան (տոհմից),

Սասան Սուրենյան (տոհմից),

Սասան Անդիկանի տիրակալ,

Պերոզ Կարենյան (տոհմից),

Գոկ Կարենյան (տոհմից)»:

Չորրորդ խավի մեջ մտնում են արքունի պաշտոնյաները.

Աբարսամ Արտաշիր-Ֆառն,

Գիլման Դմավենդցի,

սպահաբեդ Ռախշ (միջ. պարսկ. 29-**Lẖšy ZY sp'ẖpt**, պարթ. 24 -**Rẖš sp'dpty**, հուն. 57- **‘Poξ ζπαπίηος**)....»:

---

[25] **Амбарцумян 1999: 6.**

Քանի որ ցուցակում Ռախշ անվան կողքին չենք տեսնում Կարենյան տոհմանունը, կարող ենք եզրակացնել, որ Սասանյան տիրապետությունն ընդունելուց հետո Կարենյան տոհմը զրկվել է Իրանի սպարապետության գործակալությունից: Այստեղից հարց է առաջանում, թե այդ դեպքում ով է վերոնշյալ Ռախշը:

Էդ. Խուրշուդյանը Պարթևական և Սասանյան Իրանի պետական հաստատություններին նվիրված իր արժեքավոր ուսումնասիրության մեջ, հղելով Վ. Բ. Հեննինգին ու ավանդական գրավոր աղբյուրներին, կարծիք է հայտնում, որ Սպահբեդը վերոնշյալ Ռախշի ոչ թե պաշտոնի, այլ տոհմի անունն է: Ըստ այդմ է նա բնութագրում Արտաշիր I-ի արքունի ցուցակում Ռախշի զբաղեցրած պաշտոնական դիրքը. «**ŠKZ**-ի Արտաշիր I-ի արքունի ցուցակում Սպահբեդ Ռախշը հիշատակված է ազնվազարմ տոհմերի ներկայացուցիչների և բարձրաստիճան անձանց ցուցակի վերջում»[56]: Այսօրինակ գնահատականը բնավ էլ ընդունելի չէ երկու առումներով. նախ՝ քիչ հավանական է, որ Սասանյան տերության համար այնպիսի առանցքային պաշտոնները, ինչպիսիք են հազարապետությունն ու սպահբեդությունը, կարող էին դառնալ ժառանգական իրավունք՝ սահմանափակելով Սասանյան արքայի ընտրության հնարավորությունը: Ա. Քրիստենսենն իրավացիորեն նկատում է, որ պետական կարևոր գործակալությունների ժառանգականացումը անհամատեղելի կլիներ բացարձակ միապետության հետ և կարճ ժամանակում կհանգեցներ տերության

[26] **Хуршудян 2015**: 200.

փլուզմանը[57]: Մյուս կողմից, եթե անգամ համարենք, որ **«Spāhbed»**-ը Ռախշի ոչ թե պաշտոնի, այլ տոհմական անունն է, չենք կարող չնկատել, որ Արտաշիր Ի-ի արքունի ցուցակի XVII տեղում հիշատակված այս անձնավորությունը ներառված է ոչ թե պարթևական տոհմերի ներկայացուցիչների (**wuzurgān**) խմբի, այլ չորրդրոդ՝ պաշտոնեական խավի մեջ և պարթևական տոհմերի ներկայացուցիչներից ընդմիջարկված է երկու պարսիկ պալատականներով: Սրանից կարելի է եզրակացնել, որ կամ Ասպահաբետ-Իսպահբուդան տոհմի պարթևական ծագման մասին մատենագրական տվյալները իրական չեն, կամ էլ որ այս տոհմը եղել է պարթևական, բայց վաղսասանյան արքունիքում, չունենալով այն հարգը, ինչ որ Վարազյան, Սուրենյան, Անդիկանյան և Կարենյան տոհմերը, դասվել է պալատականների չորրորդ խավին:

Որոշակի հարցադրումների տեղիք է տալիս նաև պաշտոնեական խավի մեջ Ռախշի գրաված դիրքը: Եթե նա Արտաշիր Ի-ի արքունի ցուցակում զբաղեցներ պաշտոնեական խմբի առաջին տեղը, ապա դա կհամապատասխաներ Արտաշիր Ի-ի ժամանակների Սասանյան տերության ծավալապաշտական ոգուն և ընդհանուր ռազմա-քաղաքական մթնոլորտին: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, **«Spāhbed»** Ռախշը ընդամենը երրորդն է պալատական այդ խավի ցուցակում: Դա հիմք է տալիս կարծելու, որ Սասանյանները **«Ērān–Spāhbed»**-ի պաշտոնը ժառանգել են նույն երկրորդական դերով և անհատական նշանակությամբ, ինչպիսին որ այն կար Արշակունիների օրոք: Արտաշիր Ի-ի արքունիքում

---

[27] **Christensen 1944**: 108–109.

«Spāhbed» Ռախշի կրավորական դիրքը բացատրելի է նաև նրանով, որ Արտաշիրի օրոք Սասանյան տերության արևելյան և արևմտյան ճակատներում իրանական զորքերի գործողությունները գործնականում ղեկավարում էին Սասանյան արքան և նրա թագաժառանգ որդի Շապուհը[58]: Անշուշտ, զորքի ղեկավարությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն թագաժառանգին վստահելու երևույթը Մերձավոր Արևելյան պետություններում մեծ վաղեմություն ուներ: Այն առկա էր նաև Արշակունիների տերության մեջ, և, այս առումով, Արտաշիր I-ը բնավ էլ նորարարություն չէր կատարում: Գահի նկատմամբ անցանկալի հավակնությունները կանխելու և նրա սահուն փոխանցումն ապահովելու մտայնությամբ՝ Արտաշիր I-ը պարզապես յուրացնում էր բանակի գործնական ղեկավարությունը թագաժառանգներին հատկացնելու միջոցով նրանց տերության կյանքին անմիջականորեն հաղորդակցելու, ապագա տիրակալի համար ռազմաքաղաքական գործունեության անհրաժեշտ փորձ ապահովելու պարթևական մեխանիզմը՝ լրացնելով այն քարոզչական և վարչա-իրավական այլևայլ միջոցներով[59]:

Հերոդիանոսի[60], «Օգոստոսների պատմության»[61] և Մ. Խորենացու[62] վկայությունների համաձայնեցումից

---

[28] **Մելիքյան 2016**, 112-114: Համաձայն Թեոփիլակտեսի վկայության՝ Խոսրով Անուշիրվանը (531-579 թթ.) մի անհաջող ճակատամարտից հետո արձակել է հատուկ հրովարտակ, ըստ որի՝ հետագայում պարսից արքաներից ոչ ոք չպետք է անձամբ ռազմարշավներ իրականացներ (**Феофилакт 1957**: III, 14):

[29] **Մելիքյան 2016**, 102-133:

[30] **Herodianus 1970**: VI, 5.5-10.

երևում է, որ Ալեքսանդր Սևերոսի պարսկական արշավանքի ժամանակ (233 թ.) հռոմեական բանակի միջագետքյան խմբավորման դեմ պարսկական բանակի ռազմական գործողությունները ղեկավարել է հենց թագաժառանգ Շապուհը[63]:

Արտաշիր I-ի կառավարման վերջին շրջանում թագաժառանգ Շապուհի զորապետական դերակատարությունը ավելի է մեծացել: Վ. Լուկոնինի կարծիքով՝ սկսած 237 թ. Շապուհն անձամբ էր ղեկավարում պարսկական զորքերի գործողությունները և հենց նրա առաջնորդությամբ են պարսիկները 237-240 թթ. գրավել Խառանը, Մծբինը և Հաթրան[64]: Արտաշիր I-ի կառավարման ամենավերջին շրջանում թագաժառանգ և կառավարչակից Շապուհը միանձնյա էր ղեկավարում պարսկական զորքերի հարձակողական գործողությունները[65]: Արդյունքում՝ ինչպես պարթևական դարաշրջանում, նույնպես և Արտաշիր I-ի օրոք **«Ērān–Spāhbed»**-ը վերածվել էր երկրորդական նշանակության ռազմական պաշտոնյայի:

ŠKZ-ի Շապուհ I-ի արքունի ցուցակում **«Ērān–Spāhbed»**-ը ընդհանրապես բացակայում է: Զինվորական

---

[31] **Historia Augusta 1989**, Al. Severus, LVI. 7.

[32] **Մ. Խորենացի 1913**, II, ՁԷ:

[33] **Մելիքյան 2016**, 112-114:

[34] **Луконин 1969**: 51-52.

[35] **Մելիքյան 2016**, 114: Վ. Հինցի, Շ. Շահբազիի և այլոց կարծիքով այդ իրողությունն արտահայտվել է Դարաբգիրդի հաղթական ժայռաքանդակի վրա, որտեղ Շապուհը, հրամայելով իրեն պատկերել Արտաշիր I-ի թասակաձև-կոռոմբոսավոր թագով, հոր հետ կառավարչակցության շրջանում (240-241 թթ.) տարած հաղթանակների փառքը վերագրում է իրեն (**Hinz 1965**: 145-152; **Shahbazi** 2000):

բարձրաստիճան պաշտոնյաներից ցուցակի XII տեղում հիշատակված է հեծելազորի պետ (միջ. պարսկ.՝ **a'sppt**, պարթ. **a'sppty**)[66] Պերոզը, որն ակնհայտորեն պատկանում է Սասանյան արքայատանը: Մեր կարծիքով, Շապուհ I-ի արքունի ցուցակում **«Ērān–Spāhbed»**-ի բացակայությունը պայմանավորված է եղել նույն գործոններով, ինչ որ Արտաշիր I-ի օրոք: Շապուհ I-ի գահակալության ընթացքում էլ զորքի հրամանատարությունը իրականացնում էին արքան և նրա թագաժառանգ որդին՝ Որմիզդ-Արտաշիրը, որը, դեռևս նախքան Շապուհ I-ի պաշտոնական թագադրությունը (242 թ. ապրիլ), նշանակվել էր «Մեծ արքա Հայոց»[67]:

Թեև հայկական պատմական ավանդության մեջ Որմիզդ-Արտաշիրի կերպարը հարակցված է Արտաշիրի վիպական կերպարին[68], այնուամենայնիվ, Արտաշիրի դեմ հայոց Խոսրով արքայի 11-ամյա պայքարի մասին Ագաթանգեղոսի հաղորդումը[69] ճշտորեն է արտահայտում այն ժամանակահատվածը (242/243-252/253 թթ.), որի ընթացքում Որմիզդ-Արտաշիրը՝ որպես թագաժառանգ-զորագլուխ և «Մեծ արքա Հայոց», պայքարել է Հայաստանի նվաճման համար:

---

[36] Ա. Մուշեղյանը **«A'sppty»** բառը թարգմանում է իբրև «սպահապետ» (**Մուշեղյան 2007**, 266), մինչդեռ, իրավացի պետք է համարել Մ. Սպրինգլինգի թարգմանությունը՝ այն է **«Horse-lord»**, այսինքն՝ հեծելազորի պետ (**Sprengling 1953**, 19):

[37] Միջին պարսկերեն՝ **wuzurg šāh Arminān**, պարթևերեն՝ **wuzurg šāh Arminīn**, հունարեն՝ **μεγάλο βασιλέως ' Αρμενίας**: Տե՛ս **Honigmann, Maricq 1953**: 40-41; **Մելիքյան 2018**, 47-52:

[38] **Ագաթանգեղոս 1983**, § 23 Բ:

[39] **Ագաթանգեղոս 1983**, § 23 Բ:

Որմիզդ-Արտաշիրի զորավարական գործունեությունը որոշակիորեն արտացոլված է նաև «Օգոստոսների պատմության» Կյուրիդաս կայսեր կենսագրության մեջ, որտեղ հաղորդվում է, թե սա «Մերձենալով Շապուհի հետ և դառնալով նրա դաշնակիցը՝ ... հռոմեական երկիր բերեց նախ Օդոմաստեսին, ապա Շապուհին»[70]: Դեռևս Թ. Նյոլդեքն իրավացիորեն **Odomastes**-ը համարել է **Ōr(o)mazdēs**-Որմիզդ անվան լատինականացված **Oromastes** ձևի աղավաղումը: Այս լուծումը թույլ է տալիս կարծելու, որ Հայաստանի նվաճումից (252/253 թ.) հետո, Հռոմի դեմ Շապուհ I-ի երկրորդ պատերազմի սկզբներին (հավանաբար 253 թ.), Որմիզդ-Արտաշիրը ինքնուրույն ռազմական գործողություններ է իրականացրել Փոքր Հայքում և Կապադովկիայում, իսկ այստեղից ուղղվել է դեպի Ասորիք[71]՝ հոր հետ միացյալ ուժերով գրոհելու «ողջ Արևելքի քաղաքամայր» Անտիոքը[72]:

Բացի նշվածներից, առկա են նաև Որմիզդ-Արտաշիրի զորապետական գործունեության մասին փաստող վիմագիր և պատկերագիր անուղղակի տվյալներ[73]:

Աղբյուրագիտական նյութերի բացակայության պատճառով մենք տեղեկություններ չունենք այն մասին, թե Որմիզդ I-ից մինչև Վարահրան III-ն ընկած ժամանակահատվածում Սասանյան արքունիքում ինչ դիրք է զբաղեցրել **«Ērān–Spāhbed»**-ը: Հայտնի է, որ Պալմիրյան երկրորդ պատերազմի ժամանակ (273 թ.)

---

[40] **Historia Augusta 1989: Tyranni Triginta, II, 2.**
[41] **Weber 2007**: 418; **Shayegan 2010**: 463.
[42] **Zosimus 1967**: I. 28, 32.
[43] **Rostovtzeff 1943**: 26, 42, 57-58; **Луконин 1969**: 58; **De Vaele 2009.**

Ավրելիանոս կայսրին հաջողվել է ոչ միայն կործանել Պալմիրան, այլև պարտության մատնել նրան օգնության գնացած պարսկական հեելազորին[74]: Բայց հայտնի չէ, թե Որմիզդ I-ն անձամբ, թե ուրիշ մեկն է ղեկավարել այդ արշավանքը: Ռ. Ն. Ֆրայը հավանական է համարում նաև սողդիանացիների դեմ Որմիզդ I-ի պատերազմի մասին Թաբարիի հաղորդումը[75]:

Որմիզդ I-ից հետո գահակալած Վարահրան I-ի (274-277 թթ.) և Վարահրան II-ի (277-293 թթ.) կառավարման ժամանակաշրջանը Սասանյան Իրանի պատմության մեջ հատկանշվում են արտաքին խաղաղությամբ, իսկ ներքին կյանքում զրադաշտական կղերի և իրանական ազնվականության ազդեցության աճով: Շատ հավանական է, որ այս ընթացքում Սասանյան առաջին երեք արքաների օրոք տերության ռազմա-քաղաքական կյանքի ետնաբեմում հայտնված **«Ērān–Spāhbed»**-ները, իրանական ազնվականության մյուս ներկայացուցիչների պես, կարողացել են ամրապնդել իրենց դիրքերը: Համենայն դեպս, նման տպավորություն ստեղծում են Ներսեհի **NPi** երկլեզու արձանագրության տվյալները:

«Ērān–Spāhbed»-ը երկիցս հիշատակվում է Պայկուլեի արձանագրության մեջ՝ գահակալական պայքարում Ներսեհին աջակից պարսկական ազնվականության ամենաերևելի անձանց շարքում: Հետաքրքիր զուգադիպությամբ, ինչպես Արտաշիր I-ի արքունիքում, այստեղ ևս պետական այս պաշտոնյան կրում է Ռախշ անունը (**ŠKZ** միջ. պարսկ. 16-րդ տող՝

[44] **Watson 1999: 49.**
[45] **Fray 2000: 127.**

Lhšy ZY sp'ẖpt, պարթ. 7-րդ տող՝ **Rẖš spdpty**)[76]: Այդ երկուսին բաժանում է 50-ամյա ժամանակահատված, ուստի քիչ հավանական է, որ նրանք նույնական լինեն: Մյուս կողմից՝ անունների նույնությունը գայթակղում է **«Spāhbed»**-ը տոհմանուն, իսկ Ռախշ անունը կրող այդ երկու անձանց էլ միևնույն տոհմի ներկայացուցիչներ համարել: Սակայն դրա համար ծանրակշիռ փաստարկներ են պետք: Բացի այդ, **ŠKZ**-ում և **Npi**-ում տարբեր խավերին պատկանող նույնանուն անձանց բազմությունը պահանջում է զերծ մնալ միայն անվանական ընդհանրության հիման վրա տոհմական ընդհանրությունների վերաբերյալ դատողություններից:

Ներսեհի կողմնակիցների ցուցակում **«Spāhbed»** Ռախշն առաջին անգամ հիշատակվում է V տեղում՝ ֆինանսական վարչության պետ (**hrgwpt**) Շապուհից, Սասանի որդի, արքայազն Ներսեհից, (**bidaxš**) Պապակից և հազարապետ Արտաշիրից հետո, բայց առաջ քան իրանական ազնվականության Սուրենյան պատվավոր տոհմի ներկայացուցիչ Արտաշիրը:

NPi-ում **«Spāhbed»** Ռախշը երկրորդ անգամ հիշատակվում է Ներսեհի հետ հանդիպելու նպատակով Պայկուլե եկած ազնվականության թվարկման ժամանակ (միջ. պարսկ. 32-րդ տող՝ **W Iẖšy sp'ẖpt** և պարթ. 14-րդ տող՝ **W rẖš 'sp'dp [ty]**): Արձանագրության այս մասը խիստ վնասված է, և հնարավոր չէ ճշտիվ որոշել Ռախշի

---

[46] **Humback, Skjaervø 1983**: Part 3.1. § 16. **ŠKZ** ում և **NPi**-ում Իրանի զորահրամանատարի պաշտոնը կրող անձանց անունների զուգադիպության հիման վրա որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ կամ երկու դեպքերում էլ հիշատակված է միևնույն անձնավորությունը, կամ էլ նրանք միևնույն տոհմի երկու տարբեր ներկայացուցիչներ են, թերևս, հայր և որդի (**Хуршудян 2003**: 168):

իրական տեղը[77]: Պարզ է միայն, որ նախորդ ցուցակի համեմատ նրա տեղը հետ է ընկել՝ հօգուտ արքայազն Պերոզի, Արտաշիր Սուրենյանի, Որմիզդ Վարազյանի, Անդիկանի տեր Վարհանդադի, մոգբեդ Կարտիրի, [...]-զ Կարենյանի և ևս մի անձնավորության, որի անունը, պաշտոնը կամ տոհմանունը արձանագրության վնասվածքի պատճառով հնարավոր չէ ընթերցել:

ŠKZ և NPi արձանագրություններում **«Ērān–Spāhbed»**-ի տեղի համեմատական քննությունը և, հատկապես, այս պաշտոնյայի բացակայությունը Պապակի և Շապուհ I-ի արքունի ցուցակներում և նրա ոչ այնքան պատվավոր դիրքը Արտաշիր I-ի արքունիքում ու Ներսեհի աջակիցների թվարկության մեջ թույլ է տալիս եզրակացնելու, որ վաղ սասանյան պետական համակարգում այդ պաշտոնը համապետական առաջատար գործակալությունների թվին չի պատկանել: Ընդ որում, առիթ չկա կարծելու, որ **ŠKZ**-ում զբաղեցրած տեղի համեմատ **NPi**-ում **Ērān–Spāhbed**-ի դիրքի նկատելի առաջխաղացումը պայմանավորված է եղել պետական համակարգում այդ գործակալության դերի բարձրացմամբ: Ավելի շուտ այն պետք է բացատրել կոնկրետ քաղաքական իրողությամբ՝ 293 թ. գահակալական պայքարում **spāhbed** Ռախշի կողմից Ներսեհին ցուցաբերած անձնական շոշափելի աջակցությամբ[78]: Բացի այդ, պետք է կարևորել և այն փաստը, որ **NPi**-ում ներկայացված երկու ցուցակներն, ի տարբերություն **ŠKZ**-ի արքունի երեք ցուցակների,

---

[47] Պ. Սկյարվոյի վերականգնմամբ **spāhbed** Ռախշը հիշատակված է XII (**Humback, Skjaervø 1983**: Part 3.1. § 32), իսկ Վ. Գ. Լուկոնինի վերականգնմամբ՝ XI տեղը (**Луконин 1987**: 164-165):

[48] **Хуршудян 1992**: 179.

«գահնամակ»-ի նշանակություն չունեն, այլ սոսկ ներկայացնում են Ներսեհի կողմնակիցների հիմնական կազմը՝ մեկը գահակալական պայքարի նախօրեին, մյուսը՝ պայքարի վերջում: Մեր համոզմամբ՝ վաղ սասանյան պետական համակարգում **Ērān-Spāhbed**-ի երկրորդական դիրքը ուղղակի արդյունք էր այն բանի, որ պարթևական դարաշրջանից եկող իներցիայով պարսկական բանակի ղեկավարությունը գործնականում իրականացնում էին պարսից արքաներն ու գահաժառանգները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղոս 1983, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 700 էջ:

Մ. Խորենացի 1913, Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղյան եւ Ս. Հարութիւնեան, Տփղիս, 396 էջ:

Մելիքյան Ա. 2012, Անկախության գաղափարի պատկերագրությունը Արշակ Առաջինի դրամների վրա, Միջազգային գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2012, էջ 33-78:

Մելիքյան Ա. 2016, Սալմաստի ժայռաքանդակը, Պատմական Հայաստանի սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն, Երևան, 220+20 էջ:

Մելիքյան Ա. 2018, Երրորդ դարում Հայաստանում կառավարած Սասանյան արքայազների տիտղոսի հարցի շուրջ, ՄՄԵԺ, XXXI, Երևան, էջ 47-68:

Մուշեղյան Ա. Վ. 2007, Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, 412 էջ:

Assar G.R.F. 2011: Iran under the Arsakids, 247 BC – AD 224/227 in: B. Nelson (ed), The Numismatic Art of Persia. The Sunrise

Cllection, Part I. Ancient -650 BC to Ad 650, Cllasical Numismatic Group. Inc. Lancaster, Pennsylvania, pp. 113-171.

Christensen A. L. 1944: L 'Iran sous les Sassanides. 2éd., Copenhague, 560 Pages

Daryaee T. 2007: The Middle Persian Text Sur i Saxwan and the Late Sasanian Court // Des Indo-Grecs aux Sassanides: Donnees pour l'historie et la geographie historique. Res Orientales.№ 17. P. 65–72.

De Vaele An 2009: Sasanian Wall Painting, EIr, Originally Published: July 20, 2009.

Dion Cassios 1955: Roman History, with an English translation by Earnest Cary, on the basis of the ersion of Herbert Baldwin Foster, in Nine Volumes, Vol. IX, London-Cambridge-Massachusetts, 572 P.

Fray R. N. 2000: The Political History of Iran Ander Sasanians, in E. Yershater (ed.) Cambridge History of Iran, vol. 3 (I), Cambridge, 2000, pp. 116-180.

Herodianus 1970: Ab excessu divi Marci libri octo, London, 260 P.

Hinz W. 1965: Altiranische Fund und Forschungen, Berlin, 275 S.

Historia Augusta 1989: with an English Translation by David Magie, Vol. III, Harvard University Press, 529 Pages.

Honigmann E., Maricq A. 1953: Recherches Sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, 204 Pages.

Houghton A. 1983: Coins of the Seleucid Empire from the Collection of Arthur Houghton, New York, 1983, 122 P.

Humback H., Skjaervø P. O. 1983: The Sasanian Inscription of Paikuli, Restored text and translation, Wiesbaden, 1983. 312 P.

Justinus M. 1886: Epitoma Historiarum Philippicarum Pompei Trogi, Ed. F. Ruehl. Lipsiae, 315 P.

Olbrycht M. J. 2011: Olbrycht M. J., Titulatura Pierwszych Arshakido'w I Jej Polityczno-Religijne Knotacje, in Gniezno European Studies Monograph Series, Vol. IV. The World of Antiquity, its Polish Researchers and the Cult of the Ruler, podredakcją Leszka Mrozewicza I Katarzyny Balbuzy, Poznań, s. 229-241.

Patkanian M. K. 1866: D'une histoire de la dynastie des Sassanides, Journal Asiatique, pp. 101–238.

Polybius 1893: Historiae / Ed. L. Dindorf; retract. T. Büttner-Wobst. Leipzig, Vol. 3 (libri IX–XIX), 453 S.

Rostovtzeff M. L. 1943: Res Gestae Divi Saporis and Dura, Beryutus, Vol. VIII, I, pp. 17-60.

Sellwood D. 1980: An Introduction to the Coinage of Parthia, 2nd edit., London, 322 P.

Sellwood D. 2000: Parthian Coins, in E. Yershater (ed.) Cambridge History of Iran, Vol. 3 (1), The Seleucid, Parthian and Sasanian Periods, Cambridge, pp. 279-280.

Shahbazi Sh. 2002: Shapur I. I, I, History, in *E. Yershater* (ed.) *Enciklopaedia Iranica*, (Originally Published: July 20, 2002).

Shayegan M. R. 2010: Hormozd I, in E. Yershater (ed.) Enciklopaedia Iranica, vol. XII, Fasc.5, pp. 462-464.

Sprengling M. 1953: Third Century Iran: Sapor and Kartir, Chicago, 114 P + 29 Pl.

Strabon 1988: The Geography of Strabo, with an English translation by H.L. Jones. Cambridge (Mass.), London, Vol. V (books X–XII), 542 P.

Tabary 1987: The History of al-Tabari (Ta'rikh al-rusul wa'l-muluk), Volume IV, The Ancient Kingdoms translated and annotated by Moshe Perlmann, New York, 205 P.

Tabary 1999: The History of al-Tabari (Ta'rikh al-rusul wa'l-muluk), Volume V, The Sāsānids, the Byuzantines, the Lakhmids. And Yemen, translated and annotated by C. E. Bosworth, New York, 458 P.

The Letter of Tansar 1968: The Letter of Tansar, translated by M. Boyse, Roma, 78 Pages.

Watson A. 1999: Aurelian and the Third Century, Londn-New York, 303 P.

Weber U. 2007: Hormezd I., König der Könige von Ērān und Anērān, *Iranica Antiqua*, 42, Leiden, S. 387-418.

Zosimus 1967: Historia nova; the decline of Rome. San Antonio, Trinity University Press, 274 P.

ал Масуди 1958: Золотые Россыпи, II, см. Шмидт А. Н., Материалы по истории Средней Азии и Ирана. УЗИВАН, Т. XVI, Москва, с. 470-474.

Амбарцумян А. А. 1999: Три парфянских термина из "Айадгар-и Зареран". Изучение культурного наследия Востока. Культурные традиции и преемственность в развитии древних культур и цивилизаций. Материалы Международной конференции в Санкт-Петербурге (23-25 ноября 1999 г.),

Археологические изыскания, Выпуск 61, Санкт-Петербург, с. 6-13.

Амбарцумян А. А. 2009: "Айадгар-и Зареран" («Сказаниие о Зарере»), Древнеиранский эпический памятник, СПБ, 400 стр.

Бикерман Э. 1985: Государство Селевкидов, Москва, 1985, 264 с.

Иосиф Флавий 1996: Иудейские древности, в 2-х томах, пер. С греч. Г. Генкеля, Москва, 864 с.

Луконин В. Г. 1969: Культура Сасанидского Ирана, Москва, 241 с.

Луконин В. Г. 1987: Древний и раннесредневековый Иран: очерки истории культуры, Москва, 1987, 295 с.

Плутарх 1990: Избранные жизнеописания в 2-х томах, том I, Москва, 608 с.

Тацит 1969: Соинения в двух томах. Том 1. Анналы. Малые произведения, Ленинград, 444 с.

Феофилакт Симокатта 1957: История, III, 18. 6. Памятники Срендневековой Истории народов Центральной и Восточной Европы, пер. С. Кондратьева, прим. К. Осиповой, Москва, 223 с.

Фрай Р. 2002: Наследие Ирана, Москва, 463 с.

Хуршудян Э. 1992: Иранская военно-административная терминология и проблема четырехчленного деления Сасанидского Ирана, Պատմա-բանասիրական հանդես, № 1, էջ 69-74:

Хуршудян Э. 2003: Армения и Сасанидский Иран (историко-культурологическое исследование), Алматы, 2003, 474 с.

Хуршудян Э. 2015: Государственные институты Парфянского и Сасанидского Ирана, Алматы, 2015, 400 с.

Արթուր Մելիքյան - *պ.գ.թ.,*
Վանաձորի պետական համալսարան,
պատմաաշխարհագրական ֆակուլտետ,
arthurmelikyan@rambler.ru

THE ĒRĀN–SPĀHBED IN THE THIRTH CENTURY SASANIAN STATE SYSTEM

Keywords: «Ērān–Spāhbed», Arshakids, Sasanians, Ardashir I, Shapur I, Nerseh, Karen, Suren, Rakhsh, Aspahabed pahlav, Nakhsh-e Rustam.

The ideas about the role and place of the Ērān–Spāhbed in the early Sasanian state system have been based on the details of the written sources of late period for a long time. It is considered to be the inherited right of Parthian family of Spahbed. The coordinating experiences of the evidences of written sources with the details of ŠKZ and NPi inscriptions sometimes led to contradictions. Our examinations about the official role and performance of Ērān–Spāhbed shows that that agency of Ērān–Spāhbed was sourced in the Parthian age. But in the Arshakids period Ērān-Spāhbeds had secondary roles as the Parthian army was in fact governed by the Arshakid kings, their sons and reliable people. Ardashir I also created the post of Ērān-Spāhbed in Sasanian state system after the example of Arshakids but it was again left as a secondary post and Spahbeds were classed with the fourth section in the Ardashir's royal court. It is conditioned by the fact that after the example of Arshakids, the Sasanian kings governed the army themselves making their crown princes take part in it. This was regarded as a means of strengthening the public position of the crown princes, as a means of giving them a military experience and for preventing the undesirable pretentiousness to the throne. The ideas of

inherited nature of the post of Ērān–Spāhbed too, is improbable as it contradicts the aspirations for absolute authority of first Sasanians.

Arthur Meliqyan - PhD,
Vanadzor State University,
The Faculty of History and geography,
arthurmelikyan@rambler.ru

СВЕДЕНИЯ АРМЯНСКИХ ИСТОЧНИКОВ О РАСПАДЕ ИМПЕРИИ АК КОЮНЛУ (КРАТКИЙ ОБЗОР)*

ГОР МАРГАРЯН

Ключевые слова: Армения; Ак коюнлу; туркоманские племена; хроника; памятные записи армянских рукописей; XIV- XVI вв.; Суфи Халил -бек; Сулейман- бек Бижаногли.

В данном исследовании вниманию специалистов представлены сообщения и анализ армянских источников (хроники и памятные записи армянских рукописей) XV-XVI вв. в качестве материала для изучения истории распада империи Ак-Коюнлу.

В исследуемой нами теме предпринята попытка рассмотреть процесс распада империи Ак-Коюнлу в свете анализа сообщений армянских источников конца XV века. О важности и ценности этих источников говорит тот факт, что источники представляют сообщения современников и очевидцев событий, и, кроме того, исследуемые нами источники почти никогда не использовались выдающими специалистами эпохи Ак-Коюнлу, такими как И. П. Петрушевский, В. Минорский, Дж. Вудс и другими известными востоковедами и историками. В статье использованы 3 хроники XV-XVI веков (хроника Акопа Исуси, анонимная хроника XVI в. и хроника Барсега Арчишеци) и свыше десяти сообщений памятных записей армянских рукописей. Хроника приписываемая Акопу Исуси состоит из трех различных частей - 1420-1501, 1467-1501, 1575-1636 годов. Она была издана еще в 1914 г. в журнале «Арарат» в статье А. Оганнисяна «Новые

* Հոդվածը ներկայացվել է 06.12.2020: Գրախոսվել է 07.12.2020:

материалы об армяно-униторской историографии»[1]. Позднее хроника была опубликована в 1951 г. в первом томе «Мелкие хроники XIII-XVIII вв.» (под ред. В. А. Акопяна, Ереван, 1951, стр. 189-200, на арм. яз.). Согласно исследователям Акоп Исуси является автором лишь последней части хроники, а автор интересующей нас второй части неизвестен, однако исходя из приведенных подробных и точных сведений мы можем несомненно заключить, что автор был современником и очевидцем событий. Из памятных записей для изучения темы в первую очередь большой интерес представляют сообщения писцов Мовсеса Арцкеци (1490-1491 гг.), Якова из Ахтамара (1492-193 гг.), Барсега, Ванакана, католикоса Алванка Аракела (1497-1498 гг.) и т.д. Уникальную важность и большую ценность для исследования последних годов государства Ак-Коюнлу, а также для исследования войн между Исмаилом Сефеви с Алвандом и Мурадом Ак-Коюнлу, представляет хроника Барсега Арчишеци[2]. Хроника очевидца представляет подробное описание событий 4 лет (с 1500-1504 гг.) и содержит множество новых данных: часть из них подтверждает уже известные исследователям факты и события, а часть является новизной и нуждается в научном анализе.

В представляемой нами исследовании все упоминания и сообщения армянских источников в хронологическом порядке сопоставляются с известными реалиями исследуемой эпохи для восстановления и анализа подробной картины процесса распада и последних годов существования империи.

После смерти последнего могучего султана Ак-Коюнлу Якуба в 1490 г. началась эпоха краха и распада империи. Междоусобные войны, разрушенная экономика, борьба влиятельных эмиров и полководцев Ак-Коюнлу за власть,

---

[1] **Арарат 1914**:1108-1114.
[2] **МХ 1951**: 125-130.

ослабление центральной власти в конечном итоге привели к распаду империи и к ее исчезновению с исторической арены.

Так, после смерти султана Якуба в 1490 г., власть переходит в руки предводителя племени Мосилу Суфи Халил бека, который в 1491 г. посадил на трон Байсунгура, 9 летнего сына Якуба[3]. «*В 1490 году пошел (Якуб-Г.М) в Карабах, мать и брат его напоили Якуб бека ядом, узнал он (Якуб) и заставил пить (яд) также и мать и брата Юсаи бека. Сови (Юсуф бек Суфи) Халил взял сына Якуба Байсангура и посадил на трон*» - сообщается в хронике Акопа Исуси[4]. Как мы видим, в хронике время и место кончины Якуба приведены в точности, также упоминается и распространенная версия о смерти Якуба, якобы его отравили мать Якуба Салджукшах бегум и брат Юсуф. Большой интерес вызывает следующее сообщение, «*и перебил многих из королевской семьи*»: здесь речь идет о кровавой расправе Суфи Халиля над принцами и наследниками Ак-Коюнлу, причиной которой послужило то обстоятельство, что та часть элиты, принцев и наследников Ак-Коюнлу, которые сперва признали право Байсунгура на трон, впоследствии отказались присягнуть последнему и под предводительством сына Узун Хасана Масих Мирзы, подняли бунт в Карабахе против Суфи Халиль бега Мосилу[5]. Однако Суфи Халиль устроил кровавую расправу и перебил многих, в том числе и Масих Мирзу. От расправы спаслись внуки Узун Хасана - Рустам бен Максуд, которого заточили в крепость Ернджака (Алинджа, Алинджак), и Махмуд бен Угурлу Мухаммед, который нашел защиту в Ираке. Сообщения хроники о 1490-1491 годах подтверждает писец Мовсес из Арцке и автор памятной записи[6].

---

[3] **Woods 1999**: 152; Qyuiring-Zoche: 163-168.

[4] **MX 1951**: 189.

[5] **Woods 1999**: 182-183.

[6] Арцке находится на северном побережьи озера Ван, был укрепленным городом с двумя крепостями, один из которых со временем, как и часть

Сообщения Мовсеса, как увидим далее, предоставляют также важные и подробные сведения о противостоянии Суфи Халиль бега и влиятельного эмира Ак Коюнлу Сулейман Бижаноглу. Согласно Мовсесу в кровавой расправе Суфи Халила в Карабахе были перебиты больше 20-и представителей правящего дома баяндур, после чего сам *"Суфи Халиль с большим войском спешно пошел в Ераг (Ирак) и там воевал в Хамадане, и многие князья были преданы мечу"* (убил многих князей)[7]. Если сопоставить с последним предложением сообщение из вышеупомянутой хроники, что «*весной он (Суфи Халиль - Г.М.) пошел на Шах Али Порака (Пурнак), убил его и сына Угурлу Махмата*[8], то становится ясно, что оба источника говорят о восстании одного из эмиров из племени Пурнак - Шах Али бега и Махмуда-сына Угурлу Мухаммада. Махмуд предлагает Суфи Халиля признать его как правителя Ирака и Фарса, однако Суфи Халиль отказывается от предложения и собирается свергнуть антисултана, и в битве у Даргузина, что находится севернее[9] войска Суфи Халиля одерживают победу, а Шах Али Пурнака[10].

В середине 1491 г. империя Ак-Коюнлу ввязывается в междоусобную войну между Суфи Халиль бегом и Сулейман бег Бижаном (или Бижаногли). Сулейман бег Бижан был тестем и главой штаба Якуба, одним из самых влиятельных эмиров Ак-Коюнлу, для кого Суфи Халиль был личным врагом. О противостоянии Суфи Халиля и Сулеймана в научной литературе известно, что Сулейман бег Бижан выступил против Суфи Халиля, победил и убил его племянника Гулаби бега в середине лета 1491 г., а

города, ушел под воду. Основную часть населения представляли армяне, также жили круды, турки и евреи.См. Т. Акопян, Города исторической Армении, Ереван, 1987, стр. 58-59, на арм. яз.

[7] **ПЗАР XV 3: 173.**

[8] **МХ 1951**: 189.

[9] **Le Strange 2011**: 196.

[10] **Woods 1999**: 153.

позднее у Вана одержал победу над Халилем, и последний с братом Бакр бегом были убиты (Дж. Вудс ошибочно считает, что конфронтация произошла в Азарбайджане). После этих событий Сулейман бег Бижан возвращаясь в Тавриз, устанавливает свой протекторат на империю и Байсунгура, власть которого продолжает оставаться номинальной[11]. Эти события полностью, с новыми уникальными данными и с красочным описанием упоминаются в армянских источниках - в хрониках Исуси и анонимного летописца 16 в. и в памятной записи Мовсеса. Упомянутые три источника единогласно сообщают, что военные действия начал Суфи Халиль бег, и что военные действия произошли в Амиде и в Ване. Более подробно эти события описаны у Мовсеса, согласно которому Суфи Халиль после победы над Шах Али Пурнаком и Махмудом бен Угурлу Мухаммад пошел на Сулеймана, который был «в полях Амида» и который до прихода Суфи Халиля истребил войска «великого господина и улусбека» Гулаби бега и убил последнего. После Сулейман отступает на южное побережье озера Ван, в *"страну Гаваш - напротив Ахтамара"* (область на юге озера Ван, по территории соответствует провинции Рштунику в Васпуракане)[12], проводит там сбор войск. Суфи Халиль наступает на Ван и на Востан, разрушая и разоряя все на пути, а Сулейман, уничтожив 3000-ую армию некоего курда Эздиншера, наступает на Суфи Халиля, и в Ване (или у Вана) побеждает войска Суфи Халиля и убивает его[13]. Хроника Исуси дополняет эти сведения, сообщая что после этого Сулейман *"в начале августа взял Байсунгура и вернулся в Торез (Тавриз), а Рустам имирза был* (еще) *заключен в крепость*". В действительности, формально оставив на троне Байсунгура, Сулейман Бижан стал фактическим правителем страны, однако вскоре и против

---

[11] **Woods 1999**: 154; Петрушевский 1949: 176.
[12] **Акопян 1986**: 797.
[13] **ПЗАР 1967**: 174.

него поднялся бунт в Тавризе под предводительством Кара Усманида Курхмаса. Сулейман жестко подавил бунт, но это лишь пошатнуло его позиции. Эмиры Ак-Коюнлу в Карабахе объединили силы кланов Каджар, Пурнак и остатков клана Баяндур и подняли бунт, предводителям которого стал Ибрагим бен Дана Халиль, также известный как Айба султан, сын Дана Халиля (брат Курхмаса) и потомок Кара Юлук Османа. Восставшие направились к крепости Алинджак (Ерндж ак), чтобы освободить Рустама бен Максуда и возвести на трон, что им и удалось, так как Сиди Али Бег Пурнак, комендант крепости, перешел на сторону восставших. После победного марша восставших на Тавриз, Сулейман бежит в Диярбакр, где его убивает брат Ибрагима Нурали бег, Байсунгур бежит к своему деду, ширваншаху Фаррух Яссару, и в мае 1492 г. в Тавризе Рустам восходит на трон[14]. Однако, согласно сообщениям армянских источников Рустам взошел на трон не в 1492 г., а в 1493 году «**в 1493 году (ՌՀԻ) Ырастам** (Рустам) стал падишахом (писец Мануел)»; «Уже три года как страна бесхозная, нет падишаха, и в этом году (**1493**) взошел на трон Ырыстам (Рустам) падишах (писец Якоб, Ахтамар)»[15]. Здесь имеем дело с сообщениями современников-очевидцев и полагать, что они все ошибаются, было бы неправильно. Объяснением может послужить следующее: Байсунгур в 1492 г. сбежал в Ширван, позднее в 1493 г. Байсунгур дважды попытался вернуть себе власть и взять Тебриз, однако усилиями Айба султана эти попытки не увенчались успехом, и вскоре в 1493 г. Байсунгура казнили. Согласно хронике Исуси Байсунгура победил и поймал Ситиа Али бег (по всей вероятности это Сиди Али бег Пурнак), который повел его в 1493 г. в Тавриз, где его удушили[16]. И, наверное, потому как законный владыка еще был жив и в принципе

[14] **Woods 1999**: 154-155.
[15] **ПЗАР 1967**: 191-192.
[16] **МХ 1951**: 195.

был в состоянии хотя бы попытаться вернуть трон, до казни Байсунгура Рустам не считался новым султаном. В пользу этой версии говорит сообщение писца Мовсеса Арцкеци: «*в 1493 г.- в не мирные времена, когда был убит Байсангур и Ырстам стал падишахом*»[17], из чего можно заключить, что Рустам стал падишахом после того, как был умерщвлен Байсунгур.

Рустам правил сравнительно долго (1492-1497 гг.). Согласно Хасану Румлу он правил 5,5 лет и был добрым и великодушным человеком, чьим девизом было правосудие[18]. В то же время армянские источники сообщают, что в период правления Рустама усилились гонения на христиан, христианское духовенство попало под налогообложение и т.д.[19]. Если в начале правления Рустам сблизился с Сефевидами, в частности со старшим сыном Хайдара Султан Али, и разрешил им в 1492 г. возвращаться в Ардебиль[20], то уже в 1494 г. их отношения опять обострились, и как сообщает Хасан Румлу, Рустам с большим войском отправляет своего двоюродного брата Хусейн бег Али Хани и Айба Султана против Султана Али, отрубленную голову которого Айба и Хусейн отправляют Рустаму [21], однако младшему сыну Хайдара, 7-летнему Исмаилу удается спастись и найти убежище в Лахиджане[22], откуда позднее, в 1499 г. он начнет свое выступление против Ак-Коюнлу и Ширваншахов[23].

Далее источники рассказывают о свержении Рустама Ахмадом бен Угурлу Мухаммадом, который был внуком

---

[17] **ПЗАР 1967**: 195.

[18] **Rūmlū 1934**: 7.

[19] **ПЗАР 1967**: 192, 199, 215, 230-231.

[20] The Cambridge **History of Iran 1986**: 183.

[21] **Rūmlū 1934**: 1.

[22] Будущий шах Ирана Исмаил еще в 1489 г. вместе с братьями и матерью, был заключен в тюрьму по приказу султана Якуба, позднее (август 1493 г.) был освобожден по приказу Рюстам. **Yildidrim R. 2008**: 252.

[23] **Savory 1980**: 24-25.

Узун Хасана и османского султана Мехмета Фатиха. Ахмад (или Ахмад Говде, так называли его из за низкого роста и телосложения) был энергичным, сильным и амбициозным человеком. Взойдя на трон в 1497 г., он проводил политику централизации власти, попытался провести фискальную реформу, отменив давно устаревшие и многочисленные пошлины, повинности и систему сойургального (ленного) землевладения[24]. Однако его реформы и политика не нашли поддержку со стороны правящей элиты, и вскоре, после всего лишь 6-месячнего правления Ахмад был убит. Хасан Румлу пишет об Ахмаде как о великом, просвещенном человеке в правлении которого «были закрыты вороты налогообложения»[25]. Стоит отметить, что несмотря на то, что в армянских источниках прямых упоминаний о фискальной и внутренней политике Ахмада нет, но есть сообщения, которые косвенно подтверждают это. Так, в хронике Акопа Исуси читаем: «Ахмад пошел в Таврез и начал «ловить больших паронов (эмиров-Г.М.)»[26], а католикос Алванка (Албании) Аракел в памятной записи сообщает: «в следующем году в 1497 г. … султан Махмут (должно быть «Ахмад» - Г.М.) из племени Баяндур и сын Йавгурлу (Угурлу Мухаммад) взял трон в Тавризе и убил Ырыстум-пека (Рустам-Г.М.) и многих из племени Баяндур истребил мечом»[27].

После смерти Ахмада междоусобные войны опять возобновляются. На роль претендентов престола выступают Алванд бен Юсуф бен Узун Хасан, Мурад бен Якуб и Касим бен Джахангир, племянник Узун Хасана, и вскоре империя распадется на три части: на западе будет править Алванд, в Диярбакре - Касим бег, а в Персидском Ираке и в Фарсе сначала будет править Мухаммади (брат Алванда) а потом

---

[24] **Minorsky 1955**: 449-462; Петрушевский 1942: 28-37.
[25] **Rūmlū 1931**: 19; Rūmlū 1934: 9.
[26] **МХ 1951**: 195.
[27] **ПЗАР 1967**:236-237

Мурад[28]. Описание этих событий отражены как в вышеприведенных хрониках, так и в памятных записях, из которых особую важность представляют сообщения писцов Ванакана, Барсега и католикоса Алуанка (Албании) Аракела[29].

ЛИТЕРАТУРА

Акопян Т., Города исторической Армении, Ереван, 1987, стр. 58-59.

Арарат, 1914, № 12, стр. 1108-1114, на арм. яз.

МХ 1951 - Мелкие хроники XIII-XVIII вв., т. 1, под ред. В. А. Акопяна, Ереван, 1951, стр. 189-200, на арм. яз., стр.125-130.

МХ 1951- Мелкие хроники XIII-XVIII вв., т. 1, под ред. В. А. Акопяна, Ереван, 1951, стр. 189-200, на арм. яз., стр. 195.

Петрушевский И. П., Внутренная политика Ахмеда Ак коюнлу, Известия Аз. ФАН, 1942, № 2, стр. 28-37.

Петрушевский И.П., Государства Азербайджана в XV в., Сборник статей по истории Азербайджана, 1949, №1, стр. 176.

ПЗАР 1967 - Памятные записи армянских рукописей XV века, часть 3, составил Л.С. Хачикян, Ереван, 1967, стр. 236-237.

Словарь топонимов Армении и прилегающих областей, т. 1, Т. Акопян, Ст. Мелик-Бахшян, О. Барсегян, Ереван, 1986, стр. 797.

Le Strange G., The lands of Eastern Caliphate, Cambridge University Press, 2011, p. 196.

Minorsky V., The Aq-qoyunlu and Land reforms, BSOAS, vol. 17, № 3 (1955), pp. 449-462.

Qyuiring-Zoche, R. Aq Qoyunlū, EI, vol. II, pp. 163-168, http://www.iranicaonline.org/articles/aq-qoyunlu-confederation

Rūmlū 1931; Rūmlū 1934- -A Chronicle of the Early Ṣafawis Being the Aḥsanu't Tawārīkh of Hasan-i-Rūmlū, ed. by C. Sheddon, vol. I, (Persian text), Baroda, 1931, p. 19; vol. II (English translation), trans. by C. Sheddon, Baroda, 1934, p. 9.

Savory R., Iran under the Safavids, Cambridge Univ. Press, 1980, p. 24-25.

---

[28] **Qyuiring-Zoche**:163-168.

[29] **ПЗАР 1967:** 236-237; 255-260.

The Cambridge History of Iran, vol. 6: The Timurid and Safavid Periods, ed. P. Jackson, L. Lockhart, 1986, p. 183

Woods J.E., The Aqquyunlu: clan, confederation, empire, 1999, Salt Lake City, p. 152.

Yildirim R., 2008, Turkomans between Two Empires: The Origins of The Qizilbash Identity In Anatolia (1447-1514), A Ph.D. Dissertation, Ankara, 689 p.

Гор Маргарян - *кандидат исторических наук,*
Институт Востоковедения НАН РА,
Отдел Христианского Востока,
старший научный сотрудник
gor_margaryan@live.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԱԿ ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Բանալի բառեր: *Հայաստան, Ակ կոյունլու, թուրքմենական ցեղեր, հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժամանակագրություններ, XIV-XVI դդ. , Սուֆի Խալիլ- բեկ, Սուլեյման- բեկ Բիժանօղլի:*

Ներկայացված թեմայի շրջանակում փորձ է կատարվում հայկական աղբյուրների՝ մուսուլմանական և եվրոպական աղբյուրների համեմատական քննությամբ ներկայացնել Ակ Կոյունլու ցեղամիության ստեղծած պետության անկման պատճառները: Թեմայի վերաբերյալ հայկական աղբյուրներում առկա նյութի կարևորության մասին խոսում է այն հանգամանքը, որ Ակ Կոյունլուների պատմության վերաբերյալ սակավաթիվ հետազոտությունների հեղինակները՝ (Ջ. Վուդս, Ի. Պետրուշևսկի, Վ. Մինորսկի և այլք),

հիմնականում չեն անդրադաձել հայկական աղբյուրների հաղորդած տեղեկություններին, կամ նույնիսկ ավելին՝ այդ ժամանակագրությունների և հիշատակարանների հաղորդումները նրանց հետազոտություններում իսպառ բացակայում են: Հայկական աղբյուրներից հետազոտման նյութ են հանդիսացել երեք ժամանակագրություններ և մեկ տասնյակից ավելի՝ ձեռագրերում Մովսես Արծկեցու, Վանականի, Աղվանքի կաթողիկոս Առաքելի և այլոց հիշատակարանները: Դրանցից հարցի վերաբերյալ հատուկ կարևորություն են ներկայացնում Ակ Կոյունլու Մուրադի, Ալվանդի և Սեֆյան Իսմայիլի միջև ընթացող հակամարտությունը, Ակ Կոյունլուների տերության անկման վերջին տարիները նկարագրող Բարսեղ Արճիշեցու ժամանակագրությունը, և Հակոբ Հիսուսիին վերագրվող ժամանակագրության երկրորդ և երրորդ հատվածները, որտեղ ականատես ժամանակագրի հաղորդած տեղեկությունները գալիս են լրացնելու Ակ Կոյունլուների տերության անկման, Հայաստանում նրանց գերիշխանության և տեղի ունեցած իրադարձությունների XV դարի կեսերից XVI դարի սկիզբն ընդգրկող շրջանի պատմությունը:

Գոռ Մարգարյան, պ.գ.թ.,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
Քրիստոնյա Արևելքի բաժին,
ավագ գիտաշխատող
gor_margaryan@live.com

LES SOURCES ARMÉNIENNES SUR L'EFFONDREMENT DE L'ÉTAT DES AQ QOYUNLUS (BREF APERÇU)

Mots-clés: l' Arménie; Aq Qoyunlus; le tribe Bayandur, turcomans; les chroniques; mémoires des manuscrits arméniens; XIV- XVI siécles; Sufi Khalil-beg; Suleyman-beg Bijanoğlu.

Dès la fin du XIV siécle et jusqu'au début du XVI siècle, l' Arménie (d'abord certaines régions, puis presque complètement) faisait partie des États d'union tribales de Qara Qoyunlus et Aq Qoyunlus. Il faut noter que bien que l'Arménie faisait partie de ces états turcomans, le période de l'histoire est étudié assez mal. Notre thème est consacré aux événements des derniers ans de l'éxistance de l'émpire des Aq Qoyunlus, losque l'état puissant a commencé faire chute après la mort de padichah Yaqub Aq Qoyunlu. Les événements déroulés en ce temps-là étaient directement liés à l'Arménie, surtout la plupart des événements importants ont été résolus en Arménie. Par exemple la meurtre d' Yaqub, le massacre de l'élite du tribe Bayandur, le conflit militaire à Van et ces environs des commendants Sufi Khalil-beg et Suleyman-beg Bijanoğlu etc... Il existe biensure une multitudes d'information sur cette période de l'histoire des Aq Qoyunlus dans les sources persanes, arabes et européennes, en même temps les sources arméniennes ont aussi une grande importance qui peuvent enrichir et completer les information ci-dessus. Dans notre cas, nous avons utilisé les chroniques d'Hakob Hisusi, d' Arakel Baghichetsi et d'Anonym de XVI siècle, et outre cela les mémoires des manuscrits arméniens de la fin de XV siècle. L'importance de ces souces resit dans le fait que celles-ci sont des sources contemporains et elles present la réalité plus objective que les souces persanes et plus informé que les sources européennes. Il est également important de noter que ces sources-là non pas étaient presqu' utilisées ou bien elles ont étaient utilisées partiellement par de rechercheur (V. Minorsky, V. Bartold, I. Petruchevsky, J. Woods etc...).

Gor Margaryan - *PhD,*
Institute of Oriental Studies of NAS RA,
Department of Christian Orient, Senior Researcher,
gor_margaryan@live.com

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

MODERN AND CONTEMPORARY HISTORY

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՍՏԵՊԱՆ ԲՈՒՌՆԱՇԵՎԻ «ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՔԱՐԹԼԻԻ ԵՎ ԿԱԽԵԹԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ*

ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *Քարթլի, Կախեթ, Իմերեթական թագավորություն, Հերակլ II, Ստեպան Բուռնաշև, վրացիներ, հայեր, ռուսական աղբյուրներ:*

XVIII դ. երկրորդ կեսին Վրաստանը շարունակում էր բաժանված մնալ մեծ ու փոքր վարչաքաղաքական միավորների՝ Քարթլիի և Կախեթի միացյալ և Իմերեթական թագավորությունների, ինչպես նաև երեք ինքնուրույն ու ինքնիշխան իշխանությունների (Գուրիա, Մեգրելիա կամ Օդիշի և Սվանեթ): 1780-ական թվականներին Այսրկովկասի պատմության առանձնահատկությունը պայմանավորված էր տարածաշրջանում քաղաքական նոր իրավիճակի ի հայտ գալով՝ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության նկատմամբ ռուսական հովանավորության հաստատմամբ:

Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար XVIII դ. 80-ական թվականները պատմագիտության մեջ բնութագրվում են որպես Կովկասում ռուսական իշխանության հաստատման ժամանակաշրջան: Նշված շրջանում Ռուսական

* Հոդվածը ներկայացվել է 16.10.2020: Գրախոսվել է 23.10.2020:

կայսրության արտաքին քաղաքականության կովկասյան (տվյալ դեպքում՝ այսրկովկասյան) ուղղությունը ռազմական գործողություններից ոչ պակաս լարված ու պատասխանատու պայմաններ էր խոստանում: Այդ պատճառով էլ Այսրկովկասում ռուսական ներկայացուցիչ Սրեպան Բուռնաշևի լիազորություններն անհամեմատ մեծ էին, ինչի մասին վկայում է ռուսական բարձրաստիճան ղեկավարության հետ նրա գաղտնի նամակագրությունը:

Նախաբան

Դեռևս 1783 թ. մայիս-հունիս ամիսներին Ստ. Բուռնաշևը վրացական երկու արքունիքներում իշխան Գ. Պոտյոմկինի լիազոր-ներկայացուցիչ՝ «կոմիսիոներ» էր նշանակվել: Հենց այդ ընթացքում նրան գաղտնի հանձնարարվում է Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության և Իմերեթի անվտանգության հարցերի ապահովության նկատառումով կազմել դրանց նկարագրությունը[108]:

Ի տարբերություն «Պարսկաստանում ադրեբիժանական նահանգների նկարագրություն» երկի, Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության XVIII դ. երկրորդ կեսի պատմությանը նվիրված աշխատությունում Ստ. Բուռնաշևը բացի քաղաքական իրադարձություններից ներկայացնում է Արևելավրացական թագավորության ազգագրական պատկերը, սոցիալական կազմը, տնտեսական դրությունը, պետական կարգը, զինված ուժերի վիճակը:

---

[1] **Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г. 1901:** 1.

Հատուկ ուշադրության է արժանանում Իմերեթի թագավորության նշված ժամանակաշրջանի պատմությունը՝ այդ հարցին առանձին ենթաբաժին նվիրելով[109]:

Արևելյան Վրաստանի էթնո-դավանական պատկերը

XVIII դ. երկրորդ կեսի Արևելյան Վրաստանի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ տվյալներ են պահպանվել վրաց հեղինակների (անանուն) «վիճակագրություններում», որտեղ տեղեկություններ կան նաև հայկական բնակչության մասին: Դրանցից է Հերակլ II թագավորի կարգադրությամբ 1770 թ. ապրիլի 5-ին կազմված՝ Քարթլիի և Կախեթի բնակչության վիճակագրությունը: Ցուցակում Արևելյան Վրաստանի ազգաբնակչության ընդհանուր քանակը (ըստ ծխերի) ներկայացված է ըստ երկրամասերի և քաղաքների: Համաձայն աղբյուրի՝ Արևելյան Վրաստանի էթնո-քաղաքական պատկերը հետևյալ տեսքն ուներ.

«Տփղիս քաղաքը: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր, կաթոլիկներ (ֆրանկներ) և մահմեդականներ՝ 4000 ծուխ:

Քաղաք Գորին: Ուղղափառ վրացիներ, կաթոլիկներ (ֆրանկներ) և հայեր՝ 500 ծուխ:

Ծիլկանի քաղաքը: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր և հրեաներ, խիզանների[110] հետ միասին՝ 700 ծուխ:

Քաղաք Սուրամը: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր և հրեաներ՝ 200 ծուխ:

---

[2] Տե՛ս **Бурнашев 1793:** 32-38.

[3] Այսինքն՝ դրսեկ գյուղացիներ:

Կախեթում՝ քաղաք Թելավը: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ և հայեր, խիզաններով ու Թելավի ծայրին [գտնվող] գյուղերով՝ 740 ծուխ:

Քիզիղումն է քաղաք Սղնախը (Սիղնաղի): Այստեղ բնակվում են հայեր՝ 100 ծուխ:

Արագվիի վրա է փոքր քաղաք Անանուրը: Այստեղ բնակվում են [ուղղափառ] վրացիներ և հայեր՝ 100 ծուխ:

Քսանիի վրա է փոքր քաղաք Ախալգորին: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ և հայեր՝ 140 ծուխ:

...Քարթլիում [այլ և այլ տեղերում] կան 500 ծուխ հայեր:

Բորչալուն և Փամբակի ձորը մի ամբողջական խանություն է: Այստեղի բնակիչները ցիրուցան են եղել այլ վայրերում (թեմերում) և այժմ [այստեղ] կա 2560 [ծուխ] հայ:

Ղազախը մի ամբողջական խանություն է և այստեղի բնակիչներից շատերը ցիրուցան են եղել ուրիշ երկրներում. և այժմ Ղազախում մահմեդականները 3000 են և հայերը 1200 [ծուխ]:

Շամշադինը մի ամբողջական խանություն է: Այստեղ ապրում են մահմեդականներ 2200, հայեր ևս կան՝ 1200 [ծուխ]...:

Կախեթում կան ուղղափառ քրիստոնյաներ, խիզաններով՝ 700 ծուխ, Կախեթի հայերն են 450 ծուխ, Կախեթի մահմեդականները՝ 1000 ծուխ:

Կախեթում... կան քրիստոնյա ուղղափառ [վրացիներ], հայեր և մահմեդականներ՝ 10,000 ծուխ»[111]:

Նշենք, որ 1770-ական թվականներին Արևելյան Վրաստան այցելած ակադեմիկոս Յոհան

---

[4] **Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1955,** 156-157:

Գյուլդենշտեդտը փաստում էր, որ Թիֆլիսի քաղաքային բնակչության կեսից ավելին հայեր էին, իսկ մյուս մասը՝ վրացիներ ու թաթարներ:[112] Հետաքրքրական են Կախեթին վերաբերվող ժողովրդագրական տվյալները: Այսպես, Յ. Գյուլդենշտեդտի հաղորդմամբ՝ Կախեթի բնակչության «ամենաքիչը երեք քառորդը հույն քրիստոնյա վրացիներ էին, մնացածը հիմնականում՝ հայեր, մասամբ էլ՝ հրեաներ»[113]:

Ըստ Ալ. Երիցյանցի՝ Վրաստանի 1821 թ. վիճակագրության տվյալներով Գանձակից մինչև Իմերեթի սահմանը 6 քաղաքներում և 975 գյուղերում բնակվում էին 34 հազար տուն քրիստոնյաներ[114]: Ավելին, վերոնշյալ տարածքներում հայերը կազմում էին քրիստոնյա բնակչության ավելի քան մեկ երրորդ մասը, իսկ վրացիները՝ «պակաս քան երկու երրորդ մասը»[115]:

Այս ամենն ընդհանրացնելով՝ հետազոտող Վ. Մարտիրոսյանը հանգում է այն մտքին, որ 1770 թ. ապրիլին կազմված ցուցակում նշված՝ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության քաղաքային բնակչության 70 %-ը հայեր էին, որը կազմում է 4500 ծխից ավելի քաղաքային հայ բնակչություն[116]: Վերլուծելով փաստական և վիճակագրական բոլոր տվյալները՝ հեղինակն ամփոփում է՝ նշելով, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Արևելյան Վրաստանում (առանց Արևմտյան Վրաստանի և Արևելյան Հայաստանի Ղազախ-Շամշադին, Փամբակ,

---

[5] **Гюльденштедт 1809:** 184.
[6] **Гюльденштедт 1809:** 189.
[7] **Երիցեանց 1894,** 139:
[8] **Նույն տեղում,** 140:
[9] **Մարտիրոսյան, 2001,** 165:

Տաշիր, Աշոցք գավառների հայության) բնակվում էին 27000-28000 հայեր, որը կազմում է Վրաստանի ողջ բնակչության 10 %-ը[117]:

Այսպիսով, Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունը ԺԸ դարի երկրորդ կեսին իր էթնո-քաղաքական կազմով իզուր չէր կոչվում «կովկասյան պետություն»[118]:

Վերջապես Արևելյան Վրաստանի էթնո-քաղաքական պատկերը փոփոխվում էր Հերակլ Բ-ի բռնի տեղահանությունների արդյունքում, որը, ինչպես ճշտում է Ալ. Երիցյանցը, «իւր քանի մի արշաւանքների ժամանակ ընդդէմ Պարսից, աշխատում էր անտէր ու անտիրական Հայաստանի բնակիչներին բռնի և գերութեամբ բերել և բնակեցնել իւր երկիրներում: Այդ միջոցներով էր աւելանում այժմեան Հալաբար թաղի հայ բնակութիւնը: Այսպէս ահա 1780 թուին գերի բերուեցան Թիֆլիս Շամախւոյ և Գանձակի կողմի հայք, Շամքորու հայք և այլն: Հետևեալ 1781 թուին փախչելով Շուշուայ Իբրահիմ խանի բռնութիւնից, գաղթում են Վրաստան Չարաբերդի մելիք Ադամը և Իգիրմիդօրթի մելիք Յովսէփը իւրեանց ժողովուրդով, որ քանի մի հազար հոգուց էր բաղկացած: Սակայն երկիրը բազմամարդացնելու՝ այդ արհեստական միջոցները շատ սակաւ օգնեցին Հերակլի թագաւորութեանը, որ ամէն օր վտանգների էր ենթարկւում»[119]:

Ստ. Բուռնաշևը անդրադառնում է Արևելյան Վրաստանի ժողովուրդների հոգևոր-դավանական

---

[10] **Նույն տեղում,** 165, 167:

[11] **Allen 1932:** 204.

[12] **Երիցեան 1879,** 15-16:

բնութագրին: Աշխատության «Ժամերգություն» բաժնում նա նշում է, որ վրացիները «հունական» դավանանքի էին, բայց «բարեպաշտությունը եկեղեցում մեծ չէ, սակայն արտաքուստ ջանասիրաբար աստվածավախություն է ցուցադրվում, [իսկ] պահքերի պահպանումը անչափ շատ է»[120]: Ըստ XVIII դարի երկրորդ կեսի գերմանացի ուղեգիր Յ. Գյուլդենշտեդտի՝ վրացիները Թիֆլիսում ունեին 12, իսկ հարակից տարածքներում՝ 8 եկեղեցի[121]:

Խոսելով հայերի մասին՝ Ստ. Բուռնաշևը գրում է, որ նրանք «հետևում են *գրիգորյանական* ուսմունքին, իրենց եկեղեցիները պահում են մաքրության մեջ և [դրանք] բավական զարդարված [շինություններ] են: [Բացի այդ] *Թիֆլիսում* մինչև 30 ընտանիք *հայ կաթոլիկներ կան*, որոնք ունեն *Հռոմից* ուղարկվող իրենց [հոգևոր] հայրերը: Այս հայրերը կատարում են բուժակների պարտականություններ և միշտ հանդիսանում են թագավորների մերձավոր բժիշկները»[122]:

Ըստ Յ. Գյուլդենշտեդտի՝ թիֆլիսահայերի շրջանում «շուրջ 400 հռոմեական դավանանքի» հետևորդներ կային, որոնք իրենց քարոզիչներն ունեին և մեկ մատուռ:[123]

Ինչ վերաբերվում է հույներին, ապա Ստ. Բուռնաշևը նշում է, որ նրանք ևս ունեին իրենց եկեղեցիները, որոնք «հարուստ չէին»[124]:

---

[13] **Бурнашев 1793a: 6.**
[14] **Гюльденштедт 1809: 184.**
[15] **Бурнашев 1793a: 7.**
[16] **Гюльденштедт 1809: 184.**
[17] **Бурнашев 1793a: 7.**

Մահմեդական բնակչությանը արգելված չէ «իրենց հավատքը դավանել» և Թիֆլիսում նրանք ունեին երեք մզկիթ[125]: Ստ. Բուռնաշևի փոխանցմամբ՝ ռուսական զորքերի Վրաստանում գտնվելու ընթացքում մահմեդականներին «թույլատրված էր իրենց սովորության համաձայն մզկիթներում հավատացյալներին աղոթքի կանչել»[126]:

Հարկ է հատուկ նշել, որ Վրաստանում ապրող ժողովուրդները բացի վրացերենից յուրաքանչյուրն օգտագործում էր իր լեզուն: Այսպես, «հայերը խոսում էին հայերեն, թաթարները՝ թաթարերեն տարբեր բարբառներով, օսերը՝ լեռնական լեզուներով»: Բացառություն էին կազմում հրեաները, որոնք օգտագործում էին վրացերենը, քանի որ «չէին ջանում սովորել սեփական լեզուն կամ էլ ընդհանրապես մոռացել են այն»[127]:

Արևելյան Վրաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը

XVIII դ. երկրորդ կեսին Արևելյան Վրաստանում ծաղկում էին արհեստներն ու առևտուրը: Թիֆլիս, Գորի, Թելավ և Սիղնաղ քաղաքները մանր ապրանքային արտադրության, արհեստագործության կենտրոններ էին: Նրանցից գլխավորը, անշուշտ, Թիֆլիսն էր: Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունում՝ մայրաքաղաքում և այլուր բնակվող հայ արհեստավորները կազմում էին վրացական քաղաքների համքարությունների հիմնական տարրը: Թիֆլիսի հայ

---

[18] Տես նաև **Гюльденштедт 1809:** 184.

[19] **Бурнашев 1793a:** 7-8.

[20] **Гюльденштедт 1809:** 270.

ազգաբնակչությունը զբաղվում էր գինագործությամբ, դարբնությամբ, ժամագործությամբ, մետաքսագործությամբ, թամբագործությամբ, ներկարարությամբ, ոսկերչությամբ, արծաթագործությամբ, կաշեգործությամբ և այլն[128]:

Ստ. Բուռնաշևը հատուկ ներկայացնում է վրացիներից, հայերից, հույներից, «մահմեդականներից և լեռնականներից» բաղկացած Արևելյան Վրաստանի բնակչության սոցիալական կազմը: Վրացիները բաղկացած էին ազնվականներից, հոգևորականներից և երկրագործներից, իսկ հայերն ու հույները՝ համապատասխանաբար ազնվականներից, վաճառականներից, արհեստավորներից, երկրագործներից և վաճառականներից, արհեստավորներից: Մահմեդական բնակչությունը կազմված էր վաճառականներից, արհեստավորներից ու երկրագործներից: «Լեռնական ժողովուրդները» զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ, սակայն նրանց մի մասը ռազմատենչ «գիշատիչ թափառականներ էին»:

Ստ. Բուռնաշևն անդրադառնում է նաև Արևելյան Վրաստանում առևտրի զարգացմանը. «Նրանք մեծածախ առևտուր են իրականացնում *լեռնական* ու *պարսիկ* հարևանների հետ, նրանց ձեռագործ ապրանքներով, այսինքն՝ պղնձի ամաններով, ներկված ու սպիտակ բամբակի կտորներով, ձիու թամբի զարդարանքներով, սրերով ու դաշույններով, երկաթյա մանր իրերով, շորերով, գլխարկներով ու կոշիկով: Նշված այս անհրաժեշտ իրերի հարցում գրեթե բոլոր

---

[21] **Մարտիրոսյան 1974,** 20; **Гюльденштедт 1809:** 184-185.

կովկասյան ժողովուրդները և բոլոր հարևանները օգտվում են *Թիֆլիսի հայերի* աշխատասիրությունից»[129]:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ նշված ժամանակահատվածում հայերի տնտեսական դրությունը Վրաստանում բարեկեցիկ էր: Դրան նպաստում էր վրաց թագավորների քաղաքականությունը, որի շնորհիվ հայերն աշխատում էին ամեն տեսակ արտոնություններով, հատկապես առևտրի ոլորտում[130]:

Արևելյան Վրաստանի բնակիչների հոգեկերտվածքը

Ստ. Բուռնաշևն անդրադառնում է նաև Վրաստանում ապրող ժողովուրդների հոգեբանական կերպարին: Նրա խոսքերով՝ երկրի լեռնային դիրքը բնակիչներին դարձրել էր «ավելի խիստ»՝ նկատի ունենալով վրացիների մշտական շփումները հարևանների՝ «պարսիկների» հետ, որի «արդյունքում նրանք փոխառել են վերջիններիս սովորույթները»: Այնուհետև հեղինակը թույլ է տալիս իրեն գրել. «Թեև նրանցից շատերը բնատուր ընդունակություններ ունեն, սակայն իրենց երեխաների դաստիարակության և լուսավորության մասին հոգ չեն տանում, որի պատճառով էլ ստախոս, անկայուն ու շահամոլ [ժողովուրդ] են: Իրենց ավանդույթն ու կյանքը համարում են հրաշալի, նկատելի է բոլոր եվրոպական [երևույթների] նկատմամբ հակակրանքը, և իրենց ողջ աղքատությամբ հանդերձ՝ հիմարաբար հպարտ են»:

Կառավարման կարգն ու պետական եկամուտները

---

[22] **Бурнашев 1793a: 6.**

[23] Հմմտ. **Тетвадзе, Тетвадзе 2008: 25.**

Ստ. Բուռնաշև նկարագրելով Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության պետական ու կառավարման կարգը՝ նշում է, որ Վրաստանում կառավարման ձևը միապետությունն էր՝ թագավորի անսահմանափակ իշխանությամբ: Վերջինս երկիրը ղեկավարում էր դիվանի կամ խորհրդի օգնությամբ, «որի [աշխատանքներին] մասնակցում էին նրա բոլոր երեխաները, կաթողիկոսը, եպիսկոպոսները, *դիվան-բեկիի* խորհրդի հաստատված անդամները և խոշոր ավատատերերը»: Այնուհետև ավելացնում է, որ թեև Հերակլ II թագավորն ինքնիշխան էր, սակայն բոլոր որոշումները կայացնում էր դիվանի հետ խորհրդակցելով: «[Նա] ունի նաև հատուկ նախարարներ՝ արտաքին գործերի, պետական եկամուտների, ռազմական հրամանատարության, որոնք [ինչպես նաև] բոլոր ձեռներեց մարդիկ [թագավորությունում] մշտապես *հայեր* են, քանզի *վրացական* իշխանական տները գոռոզաբար իրենց երեխաներին անգամ պարզ հաշվել չեն սովորեցնում», - գրում է հեղինակը:

Ստ. Բուռնաշևի պատմագրական երկը տեղեկություններ է հաղորդում նաև Արևելյան Վրաստանի պետական եկամուտներին մասին: Այսպես, Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության հարկային եկամուտները «դրամական են, և հողագործներից, հողից ստացվող ապրանքներից, արծաթի, ոսկու և պղնձի հանքերից, մաքսային եկամուտներից, ջրի և ծխախոտի վարձակալությունից, *Գյանջա* (Գանձակ) ու *Երևան* քաղաքներից և հարևան խաներից ստացվող նվերներից [եկամուտները կազմում են] չորս հարյուր հազար ռուբլի ոսկով ու արծաթով»:

Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունը որպես տարածաշրջանի ուժային կենտրոն

Քաղաքական պատմության իր շարադրանքը Ստ. Բուռնաշևը սկսում է Արևելյան Վրաստանի քաղաքական դրության նկարագրությամբ՝ այն բաժանելով նախքան ռուսական հովանավորության տակ անցնելը և դրանից հետո ընկած ժամանակահատվածների: Ներկայացնելով վրացական երկու պետությունների՝ Քարթլիի և Կախեթի միավորման գործընթացը (1762 թ.), հեղինակը քաղաքական գնահատականներ է տալիս Հերակլ II թագավորի արտաքին քաղաքականության իրանական և օսմանյան ուղղություններին և հանգամանորեն վերլուծում հարևան իշխանությունների հետ նրա հարաբերությունները:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ գտնվելով Թիֆլիսում՝ Ստ. Բուռնաշևը կարողացել է մեծ ճշգրտությամբ հաղորդել տարածաշրջանի քաղաքական պատմությանը, խաների փոխհարաբերություններին, ինչպես նաեւ տարածաշրջանի խոշոր պետությունների նկատմամբ նրանց քաղաքական դիրքորոշումներին վերաբերող մանրամասներ:

Հեղինակը վրաց թագավորի մասին գրում է. «[Հերակլը] զարմանալի գործունյա է. ամբողջ գիշերն արթուն՝ անձամբ զբաղվում է պետական գործերով, քիչ է քնում և ցերեկային ժամերին ընդունում է իշխող պարսից խաներից ու լեռնական ժողովուրդներից եկող դեսպաններին: Նա է կատարում իր հպատակների նկատմամբ դատը, անգամ ամենափոքր գժտությունների դեպքում: Նա քաջատեղյակ է քաղաքական [հարցերում] ասիական բարքերին, քանի որ երկար ժամանակ վայելել է Նադիր շահի

վստահությունը Հնդկաստանում նրա բոլոր արշավանքների ընթացքում: Նա ոչ մի բանի այդքան չի ձգտում, որքան իր ժողովրդին բարեփոխել եվրոպական ձևով»[131]:

Ստ. Բուռնաշևը վերլուծում է Հերակլ II-ի Կովկասում ունեցած քաղաքական դերակատարումը և ընդգծում, որ նա «հարևան պարսիկների համար սարսափ է դարձել»՝ իր տիրույթներին միացնելով Երևանի և Գանձակի խանությունները: Մյուս կողմից՝ Հերակլը «ջախջախիչ հաղթանակ էր տարել» ավարական խանի գլխավորությամբ Վրաստան արշաված լեռնականների նկատմամբ[132]:

Լինելով Վրաստանում ծավալվող քաղաքական զարգացումների ականատեսն ու ակտիվ մասնակիցը, Ստ. Բուռնաշևը ներկայացնում է Հերակլ II-ի հարաբերությունները հարևան իշխանությունների ու ժողովուրդների հետ: Այսպես, պարզ է դառնում, որ Վրաց արքան լեռնական տիրակալներից «ոմանց ռոճիկի տեսքով հարկ էր տալիս, ոմանց իր մոտ [զինվորական] ծառայության էր կանչում և նրանց հետ *պարսիկների* դեմ պատերազմում»[133]:

Լեռնականների մասին Ստ. Բուռնաշևը գրում է, որ այդ «ժողովուրդներից շատերը լինելով ոչ կախյալ, շատերը՝ առանց առաջնորդի են, իսկ ընդհանրապես՝ վայրենի և ուխտադրուժ՝ նրանք երբեք բաց չեն թողնում [վրացական] տարածքների ավերման [հնարավորությունը], թեև միշտ պարտություն են կրել

---

[24] **Бурнашев 1793a:** 16-17.

[25] **Նույն տեղում,** 20:

[26] **Նույն տեղում:**

[վրաց թագավորից]»[134]: Դաղստանյան ժողովուրդների մասին նրա բնորոշումներն արտացոլում են ռուսական արտաքին քաղաքականության կովկասյան ուղղության դիրքորոշումը: Բացի այդ, դաղստանյան ժողովուրդների մասին նկարագրությունները լույս են սփռում նրանց վրացական պետության հետ ունեցած հարաբերությունների վրա: Այսպես, պարզ է դառնում, որ Վրաստանի դաշտերն ու արոտավայրերը մեծապես տուժում էին լեռնականների պարբերական ասպատակություններից, քանի որ վերջիններս «երբեք բաց չեն թողնում տարածքների ավերման [հնարավորությունը]»: Ստ. Բուռնաշևը գրում է, որ վրաց թագավորները արժանի հակահարված էին տալիս լեռնականներին, իսկ նրանք «պարբերաբար ավազակային հարձակումներ են իրականացնում՝ ամայացնելով երկրագործական շրջանները»:

Լեռնականների վարքագիծն էին որդեգրում նաև Հերակլ թագավորից դժգոհ իշխանները, որոնք ապստամբում էին նրա դեմ, ապա թաքնվում Դաղստանում, «իսկ այնտեղից հավաքագրելով թափառականների՝ կեղեքում էին իրենց հայրենիքը»: Այնուհետև նշում է, որ նույն կերպ էր վարվել արքայազն Լևանը, «նույնպես դիմել էր գիշատիչների օգնությանը, և այժմ էլ կան տեղեկություններ *լեզգիների* հարձակումների մասին, փոքր [լեռնային] անցուղիներով, որոնց ճանապարհը իրենք *վրացիներն* են ցույց տվել: Անհրաժեշտ է, որպեսզի նրանք սեր ու

---

[27] **Նույն տեղում,** 20-21:

նվիրում դրսևորեն հայրենիքի նկատմամբ՝ նման չարագործություններն արմատախիլ անելու համար»[135]:

Աղբյուրի քննությունից երևում է, որ Վրաստանի հետ «միշտ հաշտ են եղել» օսերն ու կաբարդացիները, որոնք Ստ. Բուտնաշևի վկայությամբ՝ «հիմա էլ թագավորի պահանջով գումարի դիմաց ծառայում են նրան պատերազմի դեպքում»[136]: Կաբարդացիներն ու օսերը, նաև որոշ լեզգիական ցեղեր, որոնցից թագավորը որպես հավատարմության երաշխիք պատանդներ էր պահում, պատերազմի ժամանակ վարձու զինվորական ծառայություն էին իրականացնում նրա համար: Նրանք հիմնականում զինված էին հրացաններով, աստրճանակներով, գոտապարանով, վառոդի համար նախատեսված ուսապարկով, դաշույնով ու թրով: Ինքը՝ թագավորը նույն կերպ է զինված: Իսկ ամենաաղքատ գյուղացիները զենք չունենալու պատճառով պատերազմ էին գնում միայն փայտե մահակներով: Հեղինակի խոսքերով՝ թագավորը չէր վստահում ու չէր զորակոչում իբրև լավագույն ռազմիկներ հայտնի մահմեդական *ղազախներին ու շամշադիլներին*, քանի որ Վրաստանի ռուսական հպատակության տակ անցնելու ժամանակներից նրանք ըմբոստացել էին:

Այսպես է աղբյուրը վերլուծում Հերակլ II-ի ու դաղստանյան տիրակալների ուշագրավ փոխհարաբերությունները և տարածաշրջանային զարգացումների լույսի ներքո ցուցադրում քաղաքական ուժերի իրական դասավորությունը:

---

[28] **Бурнашев 1793a:** 21.

[29] **Նույն տեղում,** 22:

Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության և Իմերեթի հարաբերությունները

Վերլուծելով երկու վրացական թագավորությունների փոխհարաբերությունները՝ Ստ. Բուռնաշևը նշում է, որ թեև Իմերեթի թագավոր «լուսահոգի» Սողոմոնի և Հերակլ II-ի միջև մշտապես առկա էր «ընտանեկան թշնամանք», սակայն նրանք «առերես հաշտվել էին՝ միասին հավատքի սրբազնագույն հաղորդություն ընդունելով և մեկը մյուսին նշխարքներ մատուցելով»: Դրանով հանդերձ, «ներքին տարաձայնությունները մշտապես առկա են եղել, քանի որ ապաստան են տվել միմյանց դեմ ըմբոստացած ազնվականներին, [ընդ սմին] ընդհանուր թշնամիների՝ *մահմեդականների* դեմ օգնություն տրամադրելու հարցում միմյանց չէին մերժում», - գրում է հեղինակը[137]:

Ամփոփում

Այսպիսով, Ստեպան Բուռնաշևի «Վրաստանի նկարագրությունը կամ Քարթլիի և Կախեթի թագավորության քաղաքական դրության նկարագրություն» աշխատությունը կարևոր գիտական նշանակություն ունի ինչպե՛ս Արևելյան Վրաստանի, այնպե՛ս էլ Հայաստանի, հայերի և Այսրկովկասի ժողովուրդների պատմության բազմաթիվ ու բազմատեսակ հիմնահարցերի լուսաբանման առումով[138]:

Այդ պատմական երկը մնում է Արևելյան Վրաստանի ԺԸ դ. երկրորդ կեսի քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական պատմության, ազգագրական

---

[30] **Նույն տեղում, 24:**

[31] Հմմտ. **Merkvikadze, Mkhitaryan 2017/2018:** 151-154.

ու ժողովրդագրական պատկերի մասին կարևորագույն սկզբաղբյուրներից մեկը: Մյուս կողմից, Ստ. Բուռնաշևի աշխատությունը նշված ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի և ողջ տարածաշրջանի ներքաղաքական զարգացումների պատմության այն յուրահատուկ սկզբնաղբյուրն է, որի տվյալները հաճախ եզակի են, ուստի անգնահատելի կարևորություն ունեն նաև հայագիտության համար:

ՀԱՎԵԼՎԱԾ
[14-16 էջեր]

Ամրոցները.

ՔԱՐԹԼԻՈՒՄ

1. Մայրաքաղաք *Թիֆլիսը* աշտարակներով աղյուսե պատով պարսպապատված և առանց խանդակ է, պաշտպանական առումով բավարար վիճակում չէ: Սակայն հրետանի թշնամիներից միայն թուրքերն ունեն, ուստի [քաղաքն] իր մարդաշատության հետևանքով անվտանգ է:
2. *Գորին* [գտնվում է] *Արագվիի Կուր* գետը թափվելու հատվածում ու թեև ամրացված է հին ձևով, սակայն իր [բնական] դիրքի շնորհիվ ոչ միայն տեղացի ժողովուրդների, այլև եվրոպացիների համար անառիկ է[139]:

---

[32] XVII դ. վերջին երեսնամյակում Կովկաս այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը նշում է, որ Գորին փոքրիկ քաղաք է՝ երկու լեռների արանքում, Կուր գետի ափին՝ բարձր բլրի ստորոտին, ուր կանգնած էր ամրոցը: Ըստ նրա՝ այն վերակառուցել էր քառասուն տարի առաջ իրանական զորքերի «գեներալ» Ռոստոմ խանը:

3. *Մցխեթը*[140] աշտարակներով ու պարիսպներով ամրացված վանք է, որտեղ հնուց ի վեր թագադրվում են *վրաց* արքաները: [Այն] գտնվում է *Կուրի* վրա՝ նրա մեջ *Արագվի* գետի թափվելու մասում:

4. *Անանուրը*[141] հնացած ձևի ամրոց է, աշտարակներով [և գտնվում է] *Արագվի* գետի հովտում՝ *Ռուսաստանի* կողմից *Կովկասյան* լեռներով *Վրաստան* տանող ճանապարհին:

5. *Գորիսցիխեն* հին տիպի ամրոց է բավական հին աշտարակներով [և գտնվում է] *Թերեք* գետի վերին հոսանքում, *Կովկասյան* լեռների միջնամասում, որի հարևանությամբ մեր զորքերը *Ռուսաստանից Վրաստան* տանող ճանապարհը անցկացրին: [Ամրոցի բնական] դիրքը բավական ամուր է, և [ռազմական]

Շարդենը փաստում է նաև, որ ամրոցը թույլ էր պաշտպանված և նրա «հիմնական ուժը» տեղանքի մեջ էր: Այն տեղավորում էր ընդամենը 100 զինվոր: Քաղաքի տները, իջևանատունը կավից էին, բնակիչները՝ հարոատ վաճառականներ: Համաձայն ճանապարհորդի տպավորությունների՝ Գորիում կարելի էր գտնել կյանքի համար անհրաժեշտ ամեն ինչ և շատ էժան (**Путешествие Шардена по Закавказью, в 1672-1673 гг. 1902:** 180).

[33] Մցխեթը Վրաստանի հոգևոր ու քաղաքական հնագույն կենտրոններից է, որտեղ պատմական տարբեր ժամանակաշրջաններում թագադրվել են վրաց թագավորները և օծվել են վրաց կաթողիկոսները: Այստեղ են իրենց վերջին հանգրվանը գտել վրաց տիրակալները, այդ թվում՝ Հերակլ II-ն (**Энциклопедический словарь 1897:** 258-259; **Кавказская война: истоки и начало, 1770-1820 год 2002:** 380).

[34] Անանուրը Արագվիի էրիսթավների պաշտպանական ամուր հենակետն էր, որը կառուցվել է XVI-XVII դդ.: Այն ուներ ռազմա-քաղաքական կարևորագույն նշանակություն, քանի որ փակում էր Դարյալի լեռնանցքը՝ հյուսիսից պաշտպանելով Այսրկովկասը անցանկալի ու թշնամական ներթափանցումներից (**В. Цабаев 1971:** 83-86):

զորագնդի հարձակման փորձի դեպքում հնարավոր է պաշտպանվել:

6. Իմերեթի և թուրքական սահմանի մոտ գտնվող ոչ մեծ քարաշեն ամրոց է *Սուրամը*: Իր փոքրության պատճառով մեծ կայազորի տեղակայումը հնարավոր չէ, և ուժեղ հարձակմանը չի կարող դիմակայել[142]:

ԿԱԽԵԹՈՒՄ

1. Գլխավոր քաղաք *Թելավն* ամրացված չէ[143]:

2. *Քիզիղում Սիղնախն*[144] ընդարձակ, քարե պարիսպներով ամրացված վայր է, որտեղ թշնամու հուժկու հարձակման ժամանակ ապաստանում են

---

[35] Սուրամը Գորիից երկու անգամ փոքր բնակատեղի էր, որից քիչ հեռու կառուցված էր մեծ, լավ ամրացված ամրոցը՝ շուրջ հարյուր հոգանոց զորանոցով (**Путешествие Шардена по Закавказью, в 1672-1673 гг. 1902:** 180).

[36] Թելավը Կախեթի գլխավոր քաղաքն էր, որտեղ երեք ամրոցներ կային և այն շրջապատված էր ամուր պարիսպներով: Ամրոցներից ամենաաչքի ընկնողն էր Բատոնիս-ցիխեն կամ Պարոնի ամրոցը, որտեղ գտնվում էր թագավորի պալատը: Ամրոցի տարածքում էին գտնվում հայ վաճառականների առևտրային կրպակները, որտեղ վաճառում էին մետաքսից և բամբակից պատրաստված ցածրորակ կտորներ և «լեզգիների ապրանքներ» (**Гюльденштедт 1809:** 222).

[37] Ամուր պաշտպանական հնարավորությամբ ամրոց էր Քիզիղ (այլ կերպ՝ *Կիզիկի*) շրջանում, որը վտանգի պահին պատսպարում էր շրջակայքի բնակիչներին: Ըստ Յ. Գյուլդենշտեդտի՝ 1772 թ. Սիղնախում բնակվում էին 84 հայ իշխաններ, որոնց մեծ մասն ապրում էր ամրոցի պարիսպներից դուրս: Քաղաքը Թիֆլիսից ու Գորիից հետո Վրաստանում ամենամեծն ու անհաղթահարելին էր: Համաձայն թագավորական զինվորական ցուցակի՝ Քիզիղի շրջանից կարող էր մարտի դաշտ դուրս գալ 3000 հեծյալ: Այս շրջանում աճում էին երկնագույն մանուշակներ, որից պատրաստում էին «անուշաբույր ջուր», իմա՝ օծանելիք (**Гюльденштедт 1809:** 200-201):

շրջակա բնակավայրերի բնակիչներն՝ իրենց ամբողջ ունեցվածքով և անասուններով: Ընդհանրապես, ողջ *Վրաստանում* վանքերն ու գրեթե բոլոր գյուղերը, որոնք հողաշեն են, ունեն քարե ամրոցներ, որտեղ [բնակիչները] պատսպարվում են [թշմանիների] հարձակումների ժամանակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երիցյան Ա. 1879, Թիֆլիսի հայք և նոցա վիճակագրութունը, «Փորձ», N 10, Թիֆլիս, էջ 1-34:

Երիցյանց Ա. 1894, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում (1800-1832), մաս Ա, Թիֆլիս, 685 էջ:

Մարտիրոսյան Վ. 2001, Վրաստանի հայոց թվաքանակը XVIII դարում, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 164-168:

Մարտիրոսյան Վ. 1974, Հայերի առևտրական գործունեությունը Քարթլ-Կախեթի թագավորությունում (XVIII դարի երկրորդ կես), Լրաբեր հասարակական գիտությունների, N 11, էջ 65-71:

Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1955, հտ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Թարգմանեց՝ **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 346 էջ:

Бурнашев С. 1793a, Картина Грузии или описание политическаго состояния царств Карталинского и Кахетинского, сделанное пребывающим при его высочестве царе Карталинском и Кахетинском Ираклии Темуразовиче полковником и кавалером **Бурнашевым** в Тифлисе, в 1786 г., Курск, 38 с.

Бурнашев С. 1793b, Описание областей Адребижанских в Персии и их политическаго состояния, Курск, 27 с.

Гюльденштедт И. 1809, Географическое и статистическое описание Грузии и Кавказа, из путешествия через Россию и по Кавказским горам в 1770-1773, СПб., Типография Императорской Академии наук, 394 с.

Кавказская война: истоки и начало, 1770-1820 год, 2002, СПб., «Звезда», 552 с.

Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., 1901, Собрал и издал С. Н. Бурнашев, Под ред., А. А. Цагарели, СПб., Государственная типография, 64 с.

Путешествие Шардена по Закавказью, в 1672-1673 гг. 1902, Пер. Е. В. Бахутовой и Д. П. Косовича, Тифлис, Скоропечатная М. Мартиросянца, 301 с.

Тетвадзе Ш., Тетвадзе О. 2008, Армяне в Грузии (с древних времен до сегодняшнего дня), Тбилиси, Национальная Академия Грузии, 270 с.

Цабаев В. 1971, По Военно-Грузинской дороге, Орджоникидзе, Тип. Управления по печати при Совете Министров СО АССР, 123 с.

Энциклопедический словарь 1897, Под ред. проф. И. Е. Андреевского. Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, т. 20, СПб., Тип. Московского университета, 480 с.

Allen W. D. 1932, A History of the Georgian People, London, Kegan Paul, 429 pp.

Merkvikadze D., Mkhitaryan G. 2017/2018, S. Burnashev's Compositions as the Source for the History of the South Caucasus Region, - Georgian Source-Studies, XIX/XX, Tbilisi, pp. 151-154.

Գոհար Մխիթարյան - *պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ*
արևելագիտության ինստիտուտ,
Քրիստոնյա Արևելքի բաժին, ավագ գիտաշխատող,
goharmkhitaryan7@gmail.com

THE HISTORY OF EASTERN GEORGIA ACCORDING TO STEPAN BURNASHEV'S WORK "THE PICTURE OF GEORGIA OR THE DESCRIPTION OF THE POLITICAL SITUATION OF THE KINGDOMS OF KARTLI-KAKHETI"

Keywords: *Kartli, Kakheti, The Kingdom of Imereti, Heraclius II, Stepan Burnashev, Georgians, Armenians, Russian sources.*

St. Burnashev's work "The Picture of Georgia or the description of the Political Situation of the Kingdoms of Kartli-Kakheti" is the most important source of information on political, socio-economic, and legal history, as well as ethnic and demographic profile of Georgia in the second half of the 18th century.

On the other hand, St. Burnashev's work is a unique source that provides us with relevant information directly related to the history of internal political developments occurred in Eastern Armenia, Georgia, Dagestan, and the whole region during the mentioned period of time. In addition, it contains specific data which can be important for Armenian studies, as well.

Thus, the source analyzes the remarkable relations between Heraclius II and the rulers of Dagestan, as well as the real balance of political forces in the context of regional developments.

It should be noted that St. Burnashev's work has an apparent scientific impact covering a wide range of issues. Many of them are focused on the history of Eastern Georgia, as well as Armenia, the Armenians and the peoples of the Caucasus.

Gohar Mkhitaryan - *PhD, Institute of Oriental Studies NAS RA, Department of Christian Orient, Senior Researcher,*
goharmkhitaryan7@gmail.com

ԻՐԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ՀԵՏ (1954 Թ.)*

ՀԱՅԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *Միջազգային նավթային կոնսորցիում, նավթային համաձայնագիր, Բրիթիշ փեթրոլիում, Մոհամմադ Մոսադեղ, Իրան, ազգայնացում:*

ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հատուկ ծառայությունների՝ մասնավորապես ԿՀՎ-ի և ՄԻ 6-ի կողմից 1953 թ. Իրանում իրականացրած հեղաշրջումը վերջ դրեց երկրում նավթարդյունաբերության ազգայնացման համար ձևավորված շարժմանը և այն ազգային զարթոնքին, որն ի հայտ էր եկել շարժման տարիներին: Հեղաշրջումից հետո Անգլո-իրանական նավթային ընկերությունը, որն իր ստեղծման օրվանից մինչև Իրանում նավթի ազգայնացումը իրանական նավթի արդյունահանման և արտահանման ոլորտում մենաշնորհային դիրք էր զբաղեցնում՝ կրկին փորձեց վերականգնել իր նախկին ազդեցությունը: Սակայն ԱՄՆ-ի կառավարության ճնշման ներքո ԱԻՆԸ-ը ստիպված էր անդամակցել նավթային ընկերությունների կոնսորցիումին, որն ամբողջովին նոր էջ բացեց Իրանի նավթային արդյունաբերության պատմության մեջ: Հոդվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել հեղաշրջումից հետո Իրանի նավթի շուրջ ծավալված զարգացումները, ինչպես նաև միջազգային խոշոր նավթային ընկերությունների կողմից ստեղծված

* *Հոդվածը ներկայացվել է 10.05.2020: Գրախոսվել է 17.05.2020:*

կոնսորցիումի հետ Իրանի կնքած պայմանագրի դրական և բացասական կողմերը, որը երկար տարիներ հակասական գնահատականների է արժանացել բազմաթիվ հետազոտողների կողմից:

1953 թ.-ի օգոստոսի 19-ի հեղաշրջումից և Մոհամմադ Մոսադեղի վարչակարգի տապալումից հետո նոր վարչապետ նշանակված գեներալ Ֆազլոլլահ Զահեդին, ով իր ակտիվ մասնակցությունն ու անմիջական դերակատարությունն էր ունեցել Մոսադեղի տապալման մեջ՝ հեղաշրջումից երեք օր անց ԱՄՆ կառավարությունից տնտեսական և ֆինանսական օգնություն խնդրեց: ԱՄՆ կառավարությունն Իրանում իր դեսպան Լոյ Հենդերսոնի միջոցով տեղեկացրեց, որ պատրաստ է ընդառաջել նոր վարչապետի խնդրանքին և տրամադրել անհրաժեշտ ֆինանսական օգնություն[1]: Բրիտանական կողմը դեմ չէր նման ֆինանսական օգնությանը, որպեսզի իրանական նոր կառավարությունը ոտքի կանգներ, սակայն նրանց անհանգստացնում էր այն հանգամանքը, որ այդ դրամական պարգևները կարող էին Զահեդիին հուսադրել, թե առանց նավթի խնդրի լուծման էլ հնարավոր է իր իշխանությունը պահպանել: Բրիտանական վերնախավը շատ լավ հասկանում էր, որ միայն տնտեսական և ֆինանսական ճնշման միջոցով կարող են իրանական կառավարությանը իրենց պայմանները թելադրել, այդ իսկ պատճառով

[1] The Ambassador in Iran (Henderson) to the Department of State, Foreign Relations of the United States (այսուհետ՝ **FRUS**), United States Department of State, Iran, 1952-1954, Vol. 10, No. 353, p. 766.
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d353

բարենպաստ հնարավորությունը, որն ի հայտ էր եկել հեղաշրջման արդյունքում՝ չէին ցանկանում ձեռքից բաց թողնել: Մյուս խնդիրն այն էր, թե արդյո՞ք հնարավոր էր Զահեդիի կառավարությունից հավաստիացում ստանալ, որ տրվող օգնության դիմաց Զահեդին իրեն պարտավորված զգա շուտափույթ լուծելու նավթի խնդիրը[2]:

1953 թ. օգոստոսի 31-ին Իրանում ԱՄՆ դեսպան Լոյ Հենդերսոնի և վարչապետ Զահեդիի հանդիպումից հետո հայտարարվեց, որ Թրումենի ծրագրի «չորրորդ կետով» Իրանին տրվող օգնությունը կշարունակվի և 1954 թ.-ի ֆինանսական տարում կկազմի 23,4 մլն դոլար: Սեպտեմբերի 5-ին ԱՄՆ-ն Իրանի հադեպ իր «առատաձեռնությամբ» բոլորին ավելի զարմացրեց՝ Իրանին այսպես կոչված «արտակարգ կարիքների» համար տրամադրելով ևս 45 մլն ամերիկյան դոլար[3]:

Այսպիսով Մեծ Բրիտանիան տեսնելով ԱՄՆ կառավարության նման ակտիվ ջանքերը և Իրանի կրկին բարեկամական տրամադրվածությունը դեպի Արևմուտքը՝ նույնպես սկսեց ակտիվ գործունեություն ծավալել Իրանում վերջին զարգացումների հետևանքով իր թուլացած դիրքերն ամրապնդելու ուղղությամբ:

Իրականում բրիտանական կառավարությունը հասկանում էր, որ հապաղելու դեպքում ամերիկյան նավթային ընկերությունները կփորձեն իրենց շահերի

---

[2] **Memorandum of Conversation**, by the Assistant Secretary of State for Near Eastern, South Asian, and African Affairs (Byroade), **FRUS**, United States Department of State, Iran, 1952-1954, Vol. 10, No. 355, p. 767. https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d355

[3] **Iran, allotment to, for technical assistance**, «Department of State Bulletin», Sep. 14, 1953, Vol.29, part 1, p. 350.

համար օգտագործել Իրանում ստեղծված նոր իրադրությունը, երբ իրանական կառավարությունը կրկին պատրաստ էր նավթային արդյունաբերությունը հանձնել օտարերկրացիների տնօրինությանը:

Սակայն այդ ամենով հանդերձ նավթային խնդրի լուծման նման շտապողականությունը չէր կիսում վարչապետ Զահեդին: Նա Իրանում ԱՄՆ-ի դեսպան Լոյ Հենդերսոնի հետ վերոնշյալ հանդիպման ժամանակ հայտարարել էր, թե նավթի խնդրի լուծման հարցում այսչափ շտապողականությունն իր համար ինքնասպանության նման մի բան է, հետևաբար թե ԱՄՆ և թե բրիտանական կառավարությունները պետք է գիտակցեն, որ եթե նա այս պահին որևէ պայմանագիր ստորագրի, ինչն անկասկած ժողովրդի կողմից դիտարկվելու է որպես դավաճանական քայլ՝ ապա իր կառավարությունը կտապալվի[4]:

Խնդիրը կայանում էր նրանում, որ Իրանում հեղաշրջումից և Մոսադեղի իշխանության տապալումից դեռ երկու շաբաթ էլ չէր անցել և իրանցիների ազգայնական ոգին դեռ չէր մարել և այդ հանգամանքն էր, որ խանգարում էր Զահեդիին: Այդ հանգամանքը շատ լավ գիտակցում էր նաև ամերիկյան կողմը, և գիտեր, որ յուրաքանչյուր անզգույշ քայլ կարող էր անդառնալի հետևանքների պատճառ հանդիսանալ:

Նման մտահոգություն է հայտնվում նաև ԱՄՆ պետքարտուղարի խորհրդական Բեյրուդի՝ քաղաքական նախագծերի տնօրենին հասցեագրված նամակում, որտեղ նշված է. «Իրանում հեղափոխության վտանգ կա

---

[4] **The Ambassador in Iran** (Henderson) to the Department of State, **FRUS**, Iran, 1952-1954, Vol. 10, No.360, p.778
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d360

և այդ հեղափոխությունը ազգայնական արմատներ ունի, որի ալիքը կարող է տարածվել ամբողջ Ասիայով: Դոկտոր Մոսադեղի գնալը և Զահեդիի գալը ոչինչ չի փոխում: Տոնելու պատճառ չկա, քանզի Իրանի խնդիրը դեռ չի լուծվել, և չպետք է Զահեդիի վրա ճնշում գործադրվի, որպեսզի վերջինս շտապ նավթի շուրջ բանակցություններ սկսի»[5]:

Սակայն ինչպես նշում է բրիտանացի հեղինակ Լ. Էլվել-Սաթոնը՝ իրականում Զահեդիի կառավարությունը ոչինչ էլ չէր անում, որպեսզի շահեր հասարակական համակրանքը և որ զանգվածային ձերբակալությունները և մահապատժի դատավճիռները դարձել էին սովորական երևույթ[6]: Այնուամենայնիվ Զահեդիի վարած նման կոշտ քաղաքականությունը կարծես տվեց Արևմուտքի համար սպասելի արդյունք, քանզի որոշ ժամանակ անց, տեսնելով, որ ոչ Մոսադեղի կողմնակիցների և ոչ էլ Թուդե կուսակցության կողմից նշանակալի արձագանք չկա՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները ակտիվ լծվեցին գործի՝ լուծելու նավթային խնդիրը: 1953 թ. օգոստոսի 27-ին ԱՄՆ-ի անվտանգության խորհրդի նիստում առաջարկվեց Հերբերտ Հուվեր-կրտսերի թեկնածությունը որպես նավթի հարցերով բանակցող[7]:

Հուվերի՝ որպես հիմնական բանակցող ընտրվելուց մեկ շաբաթ անց բրիտանական կողմը հայտարարեց, որ

---

[5] **Նույն տեղում:**

[6] **Элвелл-Саттон 1956:** 393.

[7] **Memorandum by the Special Assistant to the President for National Security Affairs (Cutler)to the Secretary of State, FRUS,** Iran, 1952-1954, Vol. 10, Vol. 10, No 363: 789.
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d363

պատրաստ է համագործակցության ամերիկյան կողմի հետ, որպեսզի նավթի հարցը շուտափույթ լուծում ստանա, սակայն միևնույն ժամանակ իրանական խնդրի լուծման համար երեք նախապայման առաջ քաշեց: Առաջինն այն էր, որ Իրանը պետք է տուգանք վճարեր նավթի ազգայնացումից հետո ԱԻՆԸ-ի գործունեության կասեցման համար, երկրորդ՝ Իրանի հետ ապագայում կնքվելիք գործարքը չպետք է ավելի լավ ու նպաստավոր լիներ մյուս նավթ արդյունահանող երկրների հետ կնքված պայմանագրերից և երրորդ՝ կարգավորվող խնդիրը չպետք է ազդեր ԱԻՆԸ-ի կողմից բրիտանական կառավարությանը տրվող հարկային վճարների վրա[8]:

1953 թ. սեպտեմբերի 25-ին և 26-ին ԱՄՆ-ի և բրիտանական կառավարությունների միջև Իրանի նավթի շուրջ ոչ պաշտոնական բանակցություններ սկսվեցին[9]: Երկու կողմերն էլ սկզբում հակված էին այն կարծիքին, որ դեռ ժամանակը չէ Իրանի հետ երկարաժամկետ պայմանագիր կնքելու և առայժմ ավելի նպատակահարմար է Համաշխարհային բանկի կողմից երկու տարի առաջ ներկայացված հիմունքներով պայմանագիր կնքել: Այդ ծրագիրը կայանում էր նրանում, որ մի անկախ ամերիկյան ընկերություն Համաշխարհային բանկի վերահսկողության ներքո պետք է ստանձներ ամբողջ պատասխանատվությունը և արդյունահանվող նավթը վաճառեր Միջին Արևելքում

---

[8] **The Secretary of State to the Embassy in Iran. Washington, September 23, 1953, FRUS,** Iran, 1952-1954, Vol. 10, No.369, p. 809.
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d369

[9] **The Secretary of State to the Embassy in Iran, FRUS,** Iran, 1952-1954,Vol. 10, No.371, p. 806.
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d370

գործունեություն ծավալած նավթային ընկերություններին[10]: Սակայն Իրանում ԱՄՆ դեսպան Լ. Հենդերսոնը, տեղեկանալով այդ մասին, անհամաձայնություն հայտնեց և պնդեց, որ նման ժամանակավոր պայմանագիրն Իրանին կդնի քաղաքական անկայունության մեջ և այդ դեպքում Իրանում օտարերկրյա և մասնավոր ներդրումները կդադարեն[11]:

Իրականում Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունը հակված էր այն բանին, որ այժմ ամենահարմար պահն է, որպեսզի Իրանին համոզեն վերջնական պայմանագիր կնքել, իսկ հակառակ պարագայում ժամանակավոր պայմանագիրն այնպիսին պետք է լիներ, որ բաժնետոմսերի 50 % պատկաներ Անգլո-իրանական նավթային ընկերությանը[12]: Անդրադառնալով այդ ժամանակավոր պայմանագրի դրույթներին՝ իրանցի հետազոտող Մոհամմադ Ալի Մովահենդն իր «Նավթի խանգարված քունը» գրքում նշում է, որ ակնհայտորեն ԱՄՆ-ի կողմից ժամանակավոր պայմանագրի՝ որպես բանակցությունների նախահիմք ընդունելու առաջարկը կատարվել էր զուտ բրիտանական կողմի «տրամադրությունները շոշափելու» և հասկանալու համար[13]: Այդ ամենից մի քանի օր անց, օգոստոսի 7-ին

---

[10] **Նույն տեղում**:

[11] **The Secretary of State to the Embassy in Iran,FRUS**, Iran, 1952-1954,Vol. 10, No. 371, p. 807.
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d371

[12] **The Secretary of State to the Embassy in Iran, FRUS**, Iran, 1952-1954, Vol. 10, No. 373, p. 809.
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d373

[13] موحد، ۱۳۸۴، ۲۸۶.

Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էնթոնի Իդենն ամերիկյան կողմին հղած նամակում հստակ հայտարարել էր, որ բրիտանական կառավարությունը նախքան նավթի խնդրի լուծումը, առաջնահերթ է համարում երկու երկրների՝ Իրանի և Մեծ Բրիտանիայի միջև դիվանագիտական հարաբերությունների վերահաստատումը և որ մինչև երկու երկրների միջև չվերականգնվեն դիվանագիտական հարաբերությունները, բրիտանական կողմը չի նստի բանակցության սեղանի շուրջ[14]:

Իրանական կառավարության հետ բանակցելու նպատակով Հուվերը Թեհրան մեկնելու ճանապարհին Լոնդոնում կանգ չառավ՝ մտավախություն ունենալով, որ իրանական կողմից այն կարող է ընկալվել որպես բրիտանացիների հետ դավերի նյութում[15]: Իրանական պաշտոնական «Էթելաաթ» թերթը մեջբերելով Հուվերի խոսքերը Թեհրան մեկնելու վերաբերյալ՝ նշում էր. «Ամենակարևոր գործը, որը պետք է կատարեմ այն է, որ գեներալ Զահեդիի կառավարությանը ծանոթացնեմ նավթի խնդրի լուծման նյութական և բարոյական արդյունքների հետ»[16]:

1953 թ. հոկտեմբերի 17-ին Հուվերը ժամանեց Թեհրան և հանդիպումներ ունեցավ նախ Իրանի արտաքին գործերի նախարարի հետ, այնուհետև վարչապետ Զահեդիի հետ[17]: Հոկտեբերի 22-ին Հուվերը

---

[14] **The Secretary of State to the Embassy in Iran, FRUS**, Iran, 1952-1954, Vol. 10, No. 372, p. 808.
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d372

[15] **Bamberg 1994**: 491.

[16] اطلاعات، مورخ ۱۹مهر ماه۱۳۳۲.

[17] موجد۲۸۹،۱۳۸۴

Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էնթոնի Իդենն ամերիկյան կողմին հղած նամակում հստակ հայտարարել էր, որ բրիտանական կառավարությունը նախքան նավթի խնդրի լուծումը, առաջնահերթ է համարում երկու երկրների՝ Իրանի և Մեծ Բրիտանիայի միջև դիվանագիտական հարաբերությունների վերահաստատումը և որ մինչև երկու երկրների միջև չվերականգնվեն դիվանագիտական հարաբերությունները, բրիտանական կողմը չի նստի բանակցության սեղանի շուրջ[14]:

Իրանական կառավարության հետ բանակցելու նպատակով Հուվերը Թեհրան մեկնելու ճանապարհին Լոնդոնում կանգ չառավ՝ մտավախություն ունենալով, որ իրանական կողմից այն կարող է ընկալվել որպես բրիտանացիների հետ դավերի նյութում[15]: Իրանական պաշտոնական «Էթելաաթ» թերթը մեջբերելով Հուվերի խոսքերը Թեհրան մեկնելու վերաբերյալ՝ նշում էր. «Ամենակարևոր գործը, որը պետք է կատարեմ այն է, որ գեներալ Զահեդիի կառավարությանը ծանոթացնեմ նավթի խնդրի լուծման նյութական և բարոյական արդյունքների հետ»[16]:

1953 թ. հոկտեմբերի 17-ին Հուվերը ժամանեց Թեհրան և հանդիպումներ ունեցավ նախ Իրանի արտաքին գործերի նախարարի հետ, այնուհետև վարչապետ Զահեդիի հետ[17]: Հոկտեբերի 22-ին Հուվերը

---

[14] **The Secretary of State to the Embassy in Iran, FRUS**, Iran, 1952-1954, Vol. 10, No. 372, p. 808.
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d372

[15] **Bamberg 1994**: 491.

[16] اطلاعات، مورخ ۱۹مهر ماه۱۳۳۲.

[17] موحد۲۸۹،۱۳۸۴

հանդիպեց նաև նավթի հարցերով հատուկ հանձնաժողովի հետ[18]: Նշված հանձնաժողովի անդամներից Մանուչեհր Ֆարմանֆարմայանն իր հուշերում անդրադառնալով Հուվերի այցելությանը՝գրում է. «Հանձնաժողովը ԱՄՆ-ի դեսպանատանը երկու հանդիպում ունեցավ Հուվերի հետ և այդ ընթացքում Հուվերի կողմից ակնհայտ փաստարկներ ներկայացվեց և մենք չկարողացանք որևէ բան ասել: Նա կարծես մեր ուսուցիչը լիներ դասարանում, իսկ մենք նրա աշակերտները, ովքեր սեղանի շուրջ նստած լսում էին»[19]: Մերձավորարևելյան խնդիրների մասնագետ, պրոֆեսոր Բենջամին Շվադրանի կարծիքով Հուվերն այդ պահին դարձել էր գործիք, ով բրիտանական կողմի և իրանական կառավարության առաջարկները և հակափաստարկները միևնույն ժամանակ ամերիկյան կառավարության կողմից ընդունվելով կամ մերժվելով՝ մի կողմից մյուսին էր հանձնում[20]: Թեհրան կատարած իր այցելությունից հետո Հուվերը Անգլո-իրանական նավթային ընկերության ղեկավարությանը հասկացնել տվեց, որ ԱԻՆԸ-ի միայնակ վերադարձը Իրան պարզապես անհնար է և որ Թեհրանում իր բանակցությունները հանգեցնում են իրեն այն մտքին, որ խնդրի լուծումը միայն կարող է լինել Իրանում մի քանի

---

[18] Նավթի խնդրով զբաղվող վարչապետին կից հատուկ հանձնաժողովը վարչապետ Զահեդիի կողմից ձևավորվել էր Հուվերի Իրան ժամանելուց երկու շաբաթ առաջ, որի կազմի մեջ մտնում էին մեջլիսի պատգամավորներ Ֆաթոլլահ Նաֆիսին, Հոսեին Փիրնիան, Նասրոլլահ Զահանգիրը, ինչպես նաև հայտնի փաստաբան Աբոլ Ֆազլ Լեսանին և ֆին. նախարարության նավթային բաժանմունքի տնօրեն Մանուչեհր Ֆարման-Ֆարմայանը (տե՛ս .۴۱۷. روحانی)

[19] فرمانفرمائیان ۱۳۷۳، ۷۳۳

[20] **Shwadran 1955:** 181.

ընկերությունների ներկայացվածության միջոցով: Դա հստակ երևում է ԱԻՆԸ-ի նախագահ Վիլիամ Ֆրեյզերի՝ միջազգային նավթային կորտելի անդամներին ուղղված հրավեր-նամակից, որում Ֆրեյզերը նրանց առաջարկում է հանդիպել Լոնդոնում՝ նավթի շուրջ ոչ պաշտոնական բանակցություններ վարելու նպատակով[21]:

Այդ ընթացքում մոտ մեկ ամիս տևած բանակցություններից հետո 1953 թ. դեկտեմբերի 5-ին Իրանի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների միջև կրկին վերահաստատվեցին դիվանագիտական կապեր, որոնք խաթարվել էին դեռ 1951 թ. ապրիլ ամսից[22]:

1954 թ. փետրվարին սկսված Լոնդոնում ոչ պաշտոնական բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց նավթային կորտելի անդամների և ԱԻՆԸ-ի միջոցով ձևավորել Միջազգային նավթային կոնսորցիում[23]: Իսկ արդեն կոնսորցիումի և Իրանի միջև պաշտոնական բանակցությունների առաջին փուլը հենց Իրանում՝ սկսվեցին նույն տարվա ապրիլի 14-ին և տևեցին հինգ շաբաթ՝ մինչև մայիսի 18-ը[24]: Այդ ընթացքում Կոնսորցիումի պատվիրակության ղեկավարն էր Հովարդ Փեյջը՝ «Ստանդարդ օիլ օֆ Նյու

---

[21] **Letter to E. Holman, Standard Oil of New Jersey from A. E. C. Drake,** Anglo-Iranian Oil Co., Ltd., dated December 3, 1953, **The International Petroleum Cartel, The Iranian Consortium and U.S. National Security,** 1974, February 21, p. 56.
https://archive.org/details/TheInternationalPetroleumCartelTheIranianConsortiumAndU.S.NationalSecurity

[22] **Doty Robert,** «The New York Times», 1953, December 5.

[23] **Letter to Stanley N. Barnes from Hillyer Brown, Standard Oil of California, February 18, 1954, The International Petroleum Cartel, The Iranian Consortium and U.S. National Security,** 1974, February 21, p.80.
https://archive.org/details/TheInternationalPetroleumCartelTheIranianConsortiumAndU.S.NationalSecurity/page/n87/mode/2up

[24] **Bamberg 1994:** 498:

Ջերսիից»[25]: Բանակցությունների վերջնական արդյունքում ձևավորված Միջազգային նավթային կոնսորցիումում բաժնետոմսերը բաշխվեցին հետևյալ կերպ. ԱԻՆԸ (հետագայում վերանվանվեց «Բրիթիշ պեթրոլիում»)՝ 40%, Անգլո-հոլանդական «Ռոյալ Դաթչ Շելլ»՝ 14%, ամերիկյան հինգ ընկերություններին («Սթանդարթ օյլ օֆ Նյու Ջերսի», «Սոքոնի մոբիլ օյլ», «Սթանդարթ օյլ օֆ Քալիֆորնիա», «Թեքսաս օյլ», «Գալֆ օյլ քորփորեյշն») բաժին հասավ 40%, այսինքն յուրաքանչյուրին 8%: Բաժնետոմսերի 6% էլ տրվեց ֆրանսիական «Քոմփանի ֆրանսեզ դե փեթրոլ» ընկերությանը[26]: Հետագայում ամերիկյան ընկերություններին տրված բաժնետոմսերի 40%-անոց փաթեթը վերաբաժանվեց՝ որպեսզի բաժնեմաս հատկացվի նաև ամերիկյան 9 անկախ ընկերությունների: Այդ ընկերություններին հատկացվող 5%-անոց փաթեթից «Ռիչֆիլդ օյլ քոմփանին», որը պատկանում էր «Սենքլեր և Սիթիզ սերվիզ» ընկերություններին՝ ստացավ 1/4 մասը, «Ամերիքն ինդըփենդենթ քոմփանին»՝ 1/6, իսկ մնացած մյուս 7 ընկերությունները՝այդ թվում «Փըսիֆիք վեսթերն քոմփանին»՝ 1/12 մասը[27]: Ինչպես նշում է պրոֆեսոր Ռոբերտ Էնգլերն իր «Նավթի քաղաքականությունը»

---

[25] **Biography of Howard W. Page, Multinational corporations and United States Foreign Policy**, Hearings, February 20, 21, March 27, 28, 1974, p. 280: https://books.google.am/books?id=49vFSKZfnwoC&printsec=frontcover&hl=ru&source=gbs_ge_summary_r&cad=0#v=onepage&q&f=false

[26] **Norouzi**, The Mossadegh Project, Forming a Consortium, William Fraser's Statement to AIOC Stockholders, http://www.mohammadmossadegh.com/news/anglo-iranian-oil-company/sir-william-fraser/

[27] **Элвелл-Саттон 1956**: 395.

գրքում՝ այդ գիջումով ամերիկյան կառավարությունը ձգտում էր ինչ որ չափով իր ուսերից թոթափել ՄՆԿ-ի հանդեպ ստանձնած «խնամակալության» ամբողջական պատասխանատվությունը[28]:

1954 թ. սեպտեմբերի 19-ին իրանական կառավարության ֆինանսների նախարար Ալի Ամինին ստորագրեց ՄՆԿ-ի հետ պայմանագրի վերջնական տեքստը և ներկայացրեց մեջլիսի հաստատմանը: Նույն թվականի հոկտեմբերի 21-ին ընդամենը հինգ օր տևած քննարկումներից հետո իրանական մեջլիսը 113 կողմ, 5 դեմ և 10 ձեռնպահ ձայներով վավերացրեց պայմանագիրը[29]:

Նշենք, որ սկզբնական շրջանում Զահեդին փորձում էր խուսափել, որպեսզի պայմանագիրը հանձնվեր մեջլիսի հաստատմանը, սակայն այն ժամանակվա սահմանադրության 24-րդ կետը հաստատում էր, որ ցանկացած պայմանագիր՝ լինի առևտրական, արդյունաբերական և այլն, պետք է տրվի մեջլիսի վավերացմանը: Այլ խոսքով ասաց Իրանի Սահմանադրությունը արգելում էր իրանական նավթի տրամադրումը օտարերկրացիներին, սակայն այդ արգելքը լուծվեց բանաձևի մշակման միջոցով, ըստ որի կոնսորցիումը ստեղծում էր երկու ընկերություն, որպեսզի վերջիններս իրանական կառավարության անունից նավթի արդյունահանում և վերամշակում իրականացնեն[30]:

Այսպիսով կոնսորցիումի հետ պայմանագիրը կնքվում էր 25 տարի ժամկետով՝ այսինքն մինչև 1979 թ.-

---

[28] **Engler 1969**: 208.

[29] **Иванов 1965**: 184; **Элвелл-Саттон 1956**: 407.

[30] موجد،۲۷۲،۱۳۸۴.

ը և ցանկության դեպքում կարող էր երկարացվել մինչև 1994 թ.: Կոնսորցիումին տրամադրվող տարածքը գրեթե նույնն էր, ինչ նախկին Անգլո-իրանական նավթային ընկերությանը՝ մոտավորապես մոտ 100 000 քառակուսի մղոն: Կարևորագույն նորույթ էր հադիսանում այն հանգամանքը, որ կոնսորցիումին տրամադրվող տարածքի մեջ ներառվում էին Պարսից ծոցի ափերից երեք մղոն ջրային տարածք, ինչպես նաև ծոցի ութ կղզիներ՝ ներառյալ Ղեշմ կղզին[31]: ՄՆԿ-ի հետ կնքած պայմանագրի համաձայն իրանական նավթի շահագործումից ստացված եկամուտները բաշխվելու էին 50:50 սկզբունքով, այսինքն իրանական կառավարությունը ստանալու էր կոնսորցիումի կողմից արդյունահանվող նավթի վաճառքից գոյացած եկամուտների 50%-ը: Ըստ պայմանագրի Աբադանի նավթավերամշակման գործարանը և նրան կից կառույցները հանձնվում էին ՄՆԿ-ի տրամադրության տակ և իրանական ամբողջ նավթային արդյունաբերությունից ազգայնացված էին մնում մի ոչ մեծ տարածք ինչպես նաև Քերմանշահից հյուսիս գտնվող նավթազտարանը: Պայմանագրի լրացուցիչ կետով Իրանական ազգային նավթային ընկերությանը թույլ էր տրվում կոնսորցիումի տարածքով անցնող նավթամուղեր կառուցել, ինչպես նաև օգտվել կոնսորցիումի նավթամուղային համակարգից[32]: Նավթի արդյունահանման առումով երաշխավորվում էր, որ

---

[31] ՄՆԿ-ի հետ Իրանի պայմանագրի ամբողջ տեքստը տես՝ Full text of "1954 Iran Oil Consortium Document" https://archive.org/stream/1954IranOilConsortium/1954%20Iran%20Oil%20Consortium_djvu.txt

[32] **Նույն տեղում:**

առաջին տարվա ընթացքում արտահանման համար կարողունահանվի 17,5 մլն խորանարդ մետր՝ այսինքն 15 մլն տոննա նավթ, երկրորդ տարում՝ 27,5 մլն, երրորդ տարում՝ 35 մլն տոննա: Այսինքն երեք տարվա ընթացքում նավթի արդյունահանման ծավալները պետք է հասցվեր 68 մլն տոննայի[33]:

Ավստրիացի հեղինակ Հանս Քրոնբերգերն անդրադառնալով իրանական նավթի խնդրի լուծմանը՝ նշում է, որ իրանական նավթի 50:50 գործարքը շատ հեռու է Վենեսուելայի հետ նույն գործարքից: Առաջին անգամ գործարքի երկու կողմերը միմյանց հավասար էին կանգնած, որոնք հավասար իրավունքներով էին միմյանց հետ երկխոսում և գործարք կատարում[34]:

Կոնսորցիումի հիմնական ձեռքբերումներից էր հանիսանում այն, որ իրանական կառավարությունը հրաժարվում էր Իրանում նավթի արդյունաբերության անմիջական վերահսկողությունից և համաձայնվում էր այն հանձնել կոնսորցիումին: Արտասահմանում նավթի իրացումը նույնպես դառնում էր կոնսորցիումի մենաշնորհը: Բացի այդ կոնսորցիումն ազատվում էր նաև աշխատակիցների համար կացարանների կառուցման, առողջապահական խնդիրների ապահովման, աշխատակիցներին քաղաքացիական տրանսպորտով ապահովման, նրանց տեխնիկական վերապատրաստման հարցերից: Այդ ամենը պետք է իրականացներ Իրանական ազգային նավթային ընկերությունը: Դա կոչվում էր ԻԱՆԸ-ին

---

[33] **Նույն տեղում:**

[34] **کرونبرگر، ۱۳۸۱، ۸۰۱**

«պատասխանատու առաքելության տրամադրում»[35]: Իրանցի հեղինակ Ահմադ Ռասեխի Լանգրուդին իր «Նավթի ալիք» գրքում նշում է. «Իրանական ազգային նավթային ընկերությունը կոնսորցիումի հետ համեմատած միայն սեփականատիրոջ անունն էր քարշ տալիս, և նրա իրավասությունները խիստ սահմանափակ էր»[36]: Ինչ վերաբերվում է Անգլո-իրանական նավթային ընկերությանը, ապա չնայած այն հանգամանքին, որ ԱԻՆԸ-ին էր պատկանում ընդամենը բաժնետոմսերի 40%-ը՝ այնուամենայնիվ այն բավական շահած դուրս եկավ այդ պայմանագրից: Նախ բրիտանական կառավարությունը հասավ նրան, որ այսուհետ Իրանին վճարումները պետք է իրականացվեր բրիտանական դրամական արժույթով՝ ֆունտ սթերլինգով, ընդ որում բրիտանական կառավարությունը ֆունտը դոլարի փոխանակելու որոշակի չափ էր սահմանում: Դա նշանակում էր, որ Իրանին թույլատրվում էր «անհրաժեշտ» ապրանքներ ձեռք բերել դոլարային գոտում միայն այն դեպքում, եթե տվյալ ապրանքը չլիներ ֆունտային գոտում[37]: ԱԻՆԸ-ին տրվող վերջնական փոխհատուցման վերաբերյալ նույնպես Իրանի և բրիտանական կառավարության միջև վերջնական համաձայնություն ձեռք բերվեց, ըստ որի Իրանը պարտավորվում էր 1957 թ. հունվարի 1-ից տաս տարվա ընթացքում ԱԻՆԸ-ին վճարել 25 մլն ֆունտ

---

[35] **Элвелл-Саттон 1956**: 401.

[36] راسخی لانگرودی،۱۳۸۶، ۲۶۰.

[37] **The Ambassador in Iran (Henderson) to the Department of State, FRUS, Iran, 1952-1954, Vol.10, No.463, p. 1006**
https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10/d463

սթերլինգ[38]: Բացի այդ նա ԱԻՆԸ-ը բաժնետոմսերի 60 % զիջելու համար մյուս ընկերություններից ստանալու էր 600 մլն դոլար, որի 15 % վճարվելու էր կանխիկ՝ 18 ամսվա ընթացքում, մնացածը՝յուրաքանչյուր վաճառված նավթի բարելից տաս ցենտի միջոցով[39]:

Պայմանագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո սկսվեցին կոնսորցիումի կողմից նավթի արդյունահանման, վերամշակման և և արտահանման աշխատանքները: Ըստ խորհրդային հետազոտող Ա. Արաբաջյանի՝ այդպիսի հնարավորություն նրանք ստացան ի շնորհիվ այն բանի, որ Իրանում նավթի շուրջ առաջացած ճգնաժամի տարիներին իրանցի ինժեներները և մասնագետները կարողացան ապահովել բավական բարձր տեխնիկական պահպանվածությունը թե նավթային գոտիներում և թե Աբադանի նավթազտարանում[40]:

Կոնսորցիումի ֆինանսական հզորությունը, նավթի իրացման և տրանսպորտային միջոցների լայն ցանցը հնարավորություն տվեց նրանց կարճ ժամանակամիջոցում վերականգնել և կտրուկ ավելացնել նավթի արդյունահանումը: Եթե ՄՆԿ-ին միայն 1955 թ.-ին հաջողվեց Իրանում արտահանել 16 մլն տոննա նավթ, ապա մեկ տարի անց այդ թիվը հասավ 26 մլն տոննայի, 1957 թ.-ին՝ 35 մլն, 1958 թ.-ին՝ 41 մլն, 1959 թ.-ին՝ 45 մլն, 1960թ.-ին՝ 50 մլն: Ֆինանսական տեսանկյունից նույնպես պայմանագիրը թույլ տվեց ստանալ անհամեմատ շատ ավելի եկամուտ, քան ԱԻՆԸ-ի գործունեության տարիներին: Եթե օրինակ

---

[38] موحد ۱۳۸۴،۳۶۴

[39] **O'Коннор 1958**: 465.

[40] **Арабаджян 1962**: 60.

1950 թ.-ին ԱԻՆԸ-ը Իրանում արդյունահանելով 31,8մլն տոննա նավթ՝իրանական կառավարությանն էր վճարել 16 մլն ֆունտ սթերլինգ, ապա ՄՆԿ-ն 1957 թ.-ին արդյունահանելով 34,9 մլն տոննա՝ Իրանին էր վճարել 76,4 մլն ֆունտ սթերլինգ[41]: Սակայն տրամաբանական էր նաև այն, որ ՄՆԿ-ի ընկերությունները շատ ավելի մեծ եկամուտ էին ստանում իրանական նավթի շահագործումից: Իրանական նավթի ինքնարժեքը մի քանի անգամ ավելի ցածր էր ամերիկյան նավթի ինքնարժեքից: 50-ական թվականների կեսերին Իրանում արդյունահավող յուրաքանչյուր բարելի համար կատարված ծախսը կազմում էր 20 ցենտ, իսկ ԱՄՆ-ում 1,45-1,75 դոլար[42]: ՄՆԿ-ի կազմի մեջ մտնող ընկերությունները նույն 50-ական թվականների կեսերին տնօրինում էին հում նավթի արդյունահանման գրեթե 99 %՝ բացառությամբ ԱՄՆ-ի, նավթավերամշակման գործարանների 90 %-ը, ինչպես նաև նավթի իրացման շուկայի 90 %-ը[43]:

Այսպիսով վերլուծության ենթարկելով և ի մի բերելով վերոշարադրյալը՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

ՄՆԿ-ի և իրանական կառավարության միջև կնքված պայմանագիրը շատ հարցերում հեռու լինելով կատարյալ պայմանագրից՝այնուամենայնիվ մինչ այդ Իրանի կողմից կնքված ամենահաջող պայմանագրերից էր, քանզի առաջին անգամ նավթի վաճառքից ստացվող շահույթը բաժանվում էր 50:50 տարբերակով:

---

[41] **Арабаджян 1976**: 270.
[42] **Issawi and Yeganeh 1962**: 91.
[43] **Frank 1966**: 129.

Իրանում նավթարդյունաբերության ազգայնացման համար մղված պայքարը հեղաշրջման միջոցով կասեցվեց, սակայն միևնույն ժամանակ նրա կրկին բռնկվելու մտավախությունն ինչ-որ տեղ ստիպեց, որ նավթային ընկերություններն Իրանի հետ հավասար պայմաններով պայմանագիր կնքեն:

Ի տարբերություն Պարսից ծոցի նավթ արդյունահանող արաբական երկրների Իրանն ունենում էր Ազգային նավթային ընկերություն:

Կարևոր է այն հանգամանքը, որ չնայած Իրանական ազգային նավթային ընկերությունն ըստ պայմանագրի գործունեության անհամեմատ փոքր տարածք էր ձեռք բերում և իրավասությունների լայն շրջանակ չուներ, սակայն դա նյութական հենք էր ստեղծում ազգային նավթային արդյունաբերության զարգացման, ինչպես նաև տեղացի բնակչությունից մասնագիտական կադրերի պատրաստման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Арабаджян А. 1962, Международный нефтяной консорциум и экономика Ирана, Народы - «Азии и Африки», №2, с. 57-69.

Арабаджян А.З. 1976, Иран, Очерки новейшей истории, Москва, 469 с.

Иванов М.С. 1965, Новейшая история Ирана, Москва, 253 с.

О'Коннор Х. 1958, Империя нефти, Изд. Иностранной Литературы, Москва, 490 с.

Элвелл-Саттон Л. 1956, Иранская нефть, Издательство иностранной литературы, Москва, 424 с.

Bamberg J. H. 1994, The History of the British Petroleum Company Cambridge University Press, Vol. 2, 668 p.

Doty Robert C., Britain, Iran heal diplomatic break; seek fair oil pact; Relations to Resume After Laps of 13 Months-Kashani Attacs Move by Zahedi, 1953, «The New York Times», December 5.

Engler R. 1969, The Politics of Oil, Chicago, 565 p.

Foreign Relations of the United States (**FRUS**), United States Department of State, Iran, 1952-1954, Vol. 10, Doc. No .353,355,360,363,371,372,373,463. https://history.state.gov/historicaldocuments/frus1952-54v10

Frank H.J. 1966, Crude Oil Prices in the Middle East: A Study in Oligopolistic Price Behavior, New York, 211 p.

The full text of **«1954 Iran Oil Consortium Document»** https://archive.org/stream/1954IranOilConsortium/1954%20Iran%20Oil%20Consortium_djvu.txt

Iran, allotment to, for technical assistance, « Department of State Bulletin», Sep. 14, 1953, Vol. 29, part 1, 350 p.

Issawi Ch. And Yeganeh M. 1962, The Economics of Middle East Oil, New York, 230 p.

Norouzi A., The Mossadegh Project, Forming a Consortium, William Fraser's Statement to AIOC Stockholders, http://www.mohammadmossadegh.com/news/anglo-iranian-oil-company/sir-william-fraser/

Shwadran B. 1955, The Middle East, Oil and the Great Powers, New York, 630 p.

Biography of Howard W. Page, Multinational Corporations and United States Foreign Policy, Hearings,February 20 and 21, March 27 and 28, 1974, 594 pages. https://books.google.am/books?id=49vFSKZfnwoC&printsec=frontcover&hl=ru&source=gbs_ge_summary_r&cad=0#v=onepage&q&f=false

راسخی ل. ۱۳۸۶، احمد،موج نفت:تاریخ نفت ایران از امتیاز تا قرارداد،تهران،۲۸۷صفحه.

(**Rasekhi L.**1386, Mouje naft: tarikhe nafte Iran az emtiyaz ta gharardad, Tehran, 287 safhe)

روحانی ف. ۱۳۵۳، تاریخ ملی شدن صنعت نفت ایران، تهران، ۵۵۳صفحه.

(**Rouhani F**.1353, Tarikhe meli shodane saanate nafte Iran, Tehran, 553 safhe)

اطلاعات، مورخ ۱۹مهر ماه،۱۳۳۲.

(**Etelaat**, movarekhe nuzdahe mehr mah, 1332)

فرمانفرمایان م. ۱۳۷۳، از تهران تا کاراکاس،نفت و سیاست در ایران،تهران، ۹۰۰،۷۳۳صفحه.

(**Farmanfarmayan M**.1373, Az tehran ta Karakas, naft va siyasat dar Iran, Tehran, 900 safhe.)

کرونبرگر ه. ۱۳۸۱، خون در راه نفت،ترجمه ی محمد اشعاری،تهران،نشر ثالث،۲۹۳صفحه.
Kronberger H.1381, Khun dar rahe naft, tarjomeye Mohammade Ashari, Tehran, nashre sales, 293 safhe)
موحد م. ۱۳۸۴،خواب آشفته ی نفت، از کودتای ۲۸مرداد تا سقوط زاهدی، تهران،۵۴۵صفحه.
Movahed M.1384, Khabe ashofteye naft, az kudetaye bistohashte mordad ta soghute Zahedi, Tehran, 545 safhe)

Հապավումներ

ԿՀՎ - Կենտրոնական հետախուզական վարչություն
Մի 6 - Միլիթըրի ինթելինջս
ՄՆԿ - Միջազգային նավթային կոնսորցիում
ԱԻՆԸ - Անգո- իրանական նավթային ընկերություն
ԻԱՆԸ - Իրանական ազգային նավթային ընկերություն

Հայկ Սողոմոնյան - *ՀՀ ոստիկանության կրթահամալիր, պարսկերեն լեզվի դասախոս*
hayksoghomonyan1985@gmail.com

IRAN'S AGREEMENT WITH THE INTERNATIONAL OIL CONSORTIUM (1954)

Key words: *International oil Consortium, oil agreement, British Petroleum, Mohammad Mossadiq, Iran, nationalization.*

The International Oil Consortium was founded in 1954 to exploit Iranian oil and to replace the Anglo-Iranian Oil Company (created in 1909), whose enterprises were nationalized by Iran in 1951. The end of the Mohammad Mossadiq era meant that negotiations could open between the new pro-Western Iranian government of Prime Minister Fazlollah Zahedi and the British as well as the Americans. The negotiations resulted in the formation of the 1954 Consortium Agreement which gave the rights of extracting petroleum to a Consortium of eight European and American companies. 40 percent of the shares of the Consortium was allocated to British Petroleum (BP), which AIOC had been renamed earlier, 14 percent to Royal Dutch Shell, 6 percent to Compagnie Française des Pètroles (CFP), with the remaining 40 percent to be split equally between five American companies (Standard Oil of New Jersey, Texas Oil, Gulf Oil, Socony Vacuum Oil, Standard Oil of California). In accordace with the new agreement Iran was to share the profits from the oil production with the Consortium members on a 50-50 basis, which was the agreement that most Middle Eastern countries had with foreign oil companies, but had no say in the administration of the Consortium.

Hayk Soghomonyan - *Educational Complex of Police of RA, Lecturer in Persian Language*
[14] **Report of the forth session of the Islamic conference of tourism ministers**, 11-12 September, 2006, Baku, https://www.oic-oci.org/docdown/?docID=2988&refID=1102

հարցում» կոնֆերանսը[83]: Բացման ելույթում Ադրբեջանի արտգործնախարար Է. Մամադյարովը իսլամաֆոբիան և ընդհանրապես ահաբեկչության թեման կապեց Հայաստանի հետ: Արցախյան հարցին անդրադարձ եղավ ԻՀԿ գլխավոր քարտուղար Է. Իհսանօղլուի զեկույցում: Խոսելով միջմշակութային, միջկրոնական երկխոսության, հանդուրժողականության և փոխհամաձայնության անհրաժեշտության մասին՝ գլխավոր քարտուղարը հույս հայտնեց, որ կազմակերպությունը կշարունակի համերաշխ գործել՝ հաղթահարելու Ադրբեջանի դեմ ուղղված ագրեսիան, որը հակասում է միջազգային իրավունքին՝ հանուն Ադրբեջանի տարածքային ամբողջականության[84]:

Նշենք, որ երկար տարիներ կազմակերպության գլխավոր քարտուղար, Թուրքիայի ներկայացուցիչ և իսլամական աշխարհում հեղինակավոր գործչի համարում ունեցող Էքմելուդդին Իհսանօղլուն (2005-2014 թթ.) մեծապես աջակցել է իսլամական շրջանակներում ադրբեջանական քարոզչությանը:

Բաքվում տեղի ունեցած ԻՀԿ մեկ այլ հանդիպում ԻՀԿ անդամ պետությունների իրավապահ մարմինների ղեկավարների հանդիպումն էր (2009 թ. ապրիլի 21-22-ը), որտեղ ընդունվեցին հռչակագիր և այլ փաստաթղթեր: Կոնֆերանսը նվիրված էր վերազգային հանցագործությունների դեմ պայքարին: Խոսելով

---

[15] **International Conference on Role of Media to Encourage Tolerance Commenced in Baku, https://en.trend.az/azerbaijan/politics/916389.html**

[16] **Statement by the OIC Secretary General Ekmeleddin Ihsanoglu at the Sixth Islamic Conference of Culture Ministers held in Baku, Republic of Azerbaijan,** http://www.oic-un.org/document_report/statement_20091014.pdf

միջազգային բնույթի հանցագործությունների և ահաբեկչության մասին՝ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը նշեց, որ Ադրբեջանը տևական ժամանակ է՝ «տառապում է հարևան Հայաստանի ագրեսիայից, որը գրավյալ ադրբեջանական տարածքներում ստեղծել է չվերահսկվող տարածքներ, որտեղ ծաղկում են թմրաբիզնեսը, ապօրինի զենքի վաճառքը, փողերի լվացումը»[85]:

Ադրբեջանի իշխանությունները ցանկանում էին ԻՀԿ անդամ պետություններին ի ցույց դնել, որ հայկական ուժերի կողմից վերահսկվող տարածքներում կատարվող հանցագործությունները սպառնալիք են ոչ միայն Ադրբեջանի, այլև ողջ տարածաշրջանի համար՝ այդպիսով հիմնավորելով Հայաստանի դեմ մուսուլմանական պետությունների համախմբան անհրաժեշտությունը ոչ միայն տարածաշրջանային, այլև՝ միջազգային մակարդակով:

Իսլամական համագործակցություն կազմակերպության հանդիպումներից հետո Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները մի շարք անգամներ հայտարարել են, որ ԻՀԿ անդամ պետությունները պատրաստվում են դադարեցնել Հայաստանի հետ համագործակցությունը: Մինչ այժմ ԻՀԿ անդամ որևէ պետություն չի խզել Հայաստանի հետ դիվանագիտական կապերը: Բացառություն են կազմում Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Պակիստանն ու Բանգլադեշը, որոնք ի սկզբանե Հայաստանի հետ դիվանագիտական կապերի հաստատումը

---

[17] **Глава Азербайджана выступает за координацию странами ОИК борьбы с оргпреступностью,** http://www.interfax-religion.ru/?act=news&div=29889

պայմանավորել են մասնավորապես Արցախյան հարցով:

2009 թ. ԻՀԿ-ն Բաքուն հայտարարեց իսլամական մշակույթի մայրաքաղաք: Նույն թվականի հոկտեմբերի 13-15-ը Բաքվում տեղի ունեցավ ԻՀԿ մշակույթի նախարարների VI կոնֆերանսը: Կոնֆերանսի բացմանն Ադրբեջանի նախագահն ուղերձով դիմեց մշակույթի նախարարների VI կոնֆերանսի մասնակիցներին՝ անդրադառնալով նաև արցախյան հարցին: Կոնֆերանսում ընդունված ամփոփիչ հռչակագրում հերթական անգամ դատապարտվեց «Հայաստանի կողմից Ադրբեջանի գրավյալ տարածքներում պատմամշակութային հուշարձանների ոչնչացումը», Հայաստանից պահանջվեց կատարել ՄԱԿ-ի բանաձևերը[86]: Նախագահական նստավայրում ընդունելով կոնֆերանսի պատվիրակներին՝ Ի. Ալիևը բարեկամության և եղբայրության օրերի շրջանակներում անցկացված կոնֆերանսի աշխատանքները գնահատեց որպես էական ներդրում իսլամական պետությունների համերաշխության և նրանց միջազգային դիրքերի ամրապնդման հարցում՝ միաժամանակ բարձր գնահատելով ԻՀԿ անդամ պետությունների աջակցությունն Ադրբեջանին, այդ թվում միջազգային ասպարեզում, մասնավորապես նկատի ունենալով 2008 թ. ՄԱԿ-ի ԳԱ-ում Ադրբեջանի օգտին ԻՀԿ անդամ պետությունների քվեարկությունը: Նշենք, որ ՄԱԿ-ի ԳԱ 2008 թ. Արցախի մասին բանաձևին կողմ, այսինքն՝ Ադրբեջանի օգտին քվեարկեցին ԻՀԿ անդամ մի շարք

---

[18] **Sixth Islamic Conference of Cultural Ministers, Final Communique,** https://www.icesco.org/en/wp-content/uploads/sites/2/2019/04/Conference-Ministers-Culture-6-2009.pdf

պետություններ: Կողմ քվեարկեցին հետևյալ երկրները՝ Աֆղանստան, Ադրբեջան, Բահրեյն, Բանգլադեշ, Բրունեյ, Կամբոջա, Կոլումբիա, Կոմորոս, Ջիբութի, Վրաստան, Ինդոնեզիա, Իրաք, Հորդանան, Քուվեյթ, Լիբիա, Մալայզիա, Մալդիվներ, Մոլդովա, Մարոկո, Մյանմար, Նիգեր, Նիգերիա, Օման, Պակիստան, Կատար, Սաուդյան Արաբիա, Սենեգալ, Սերբիա, Սիերա Լեոնե, Սոմալի, Սուդան, Թուրքիա, Թուվալու, Ուգանդա, Ուկրաինա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Ուզբեկստան, Եմեն: Բանաձևին դեմ քվեարկեցին Անգոլան, Հայաստանը, Ֆրանսիան, Հնդկաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Վանուատուն: Ձեռնպահ մնաց ՄԱԿ 100 անդամ պետություն[87]:

ԻՀԿ-ն ժամանակ առ ժամանակ անդրադարձել է նաև հայերի կողմից իսլամական հուշարձանների՝ իբր ոչնչացման մասին Ադրբեջանի տարածած տեղեկություններին, որոնց պարբերաբար հակադարձել են թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում: Ի դեպ, Արցախում և հարակից տարածքներում իսլամական հուշարձանների մասին կան մի շարք հետազոտություններ[88], որոնք փաստում են, որ այդ շրջաններում իսլամական պատմամշակութային արժեքները՝ մզկիթներ, դամբարաններ և այլն, պահպանված են: Ասվածի ապացույցը Շուշիի՝

---

[19] **Ա. Փաշայան, Իսլամական կոնֆերանսը՝ արդիականացման ճանապարհին, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=761**

[20] **Տե՛ս The Islamic Monuments of the Armenian Architecture of Artsakh. Publisher-Research of Armenian Architecture. Author- Samvel Karapetyan, Yerevan, 2010.**

հայկական ուժերով վերանորոգված մզկիթն է[89]: Արցախի և հարակից տարածքներում իսլամական հուշարձանները հիմնականում պարսկական և թուրքմենական ծագում ունեն, և միայն շատ քիչ թվով՝ ադրբեջանական: Նշված շրջաններում գտնվող իսլամական հուշարձանները նաև հայկական մշակույթի հարստություններ են, քանի որ շատ դեպքերում ստեղծվել են հայ շինարարների կողմից՝ հայկական ճարտարապետության փորձի հիման վրա[90]:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Իսլամական համագործակցություն կազմակերպության դիրքորոշումը 2020 թ. հուլիսին հայ-ադրբեջանական սահմանային լարվածության կամ տավուշյան դեպքերի և վերջապես՝ Արցախյան երկրորդ պատերազմի վերաբերյալ: Տավուշյան դեպքերի առիթով հայտարարություն տարածեց ԻՀԿ գլխավոր քարտուղարությունը՝ խստորեն դատապարտելով Հայաստանի կողմից զինադադարի խախտումը Ադրբեջանի Հանրապետության Թովուզի շրջանում: ԻՀԿ գլխավոր քարտուղար Յուսուֆ Ալ-Օսայմինն իր ցավակցությունը հայտնեց ադրբեջանցի զոհված զինծառայողների ընտանիքներին[91]:

Արցախյան երկրորդ պատերազմի առաջին օրերին ևս ԻՀԿ գլխավոր քարտուղարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ խստորեն դատապարտելով «Հայաստանի զինված ուժերի կրկնվող սադրանքներն ու

---

[21] **Joshua Kucera, Karabakh's contentious mosque restoration, Dec 4, 2019,** https://eurasianet.org/karabakhs-contentious-mosque-restoration

[22] **Փաշայան 2013,** 148:

[23] **OIC General Secretariat Condemns Armenia's Attack On The Tovuz Region In Azerbaijan,**
https://www.oic-oci.org/topic/?t_id=23655&t_ref=14098&lan=en

ագրեսիան» Ադրբեջանի դեմ: ԻԿՀ-ն իր համերաշխությունը հայտնեց Ադրբեջանին, Հայաստանից պահանջեց ամբողջովին և առանց նախապայմանների դուրս բերել զորքերը գրավյալ տարածքներից, երկու պետություններին կոչ արեց նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ հասնելու քաղաքական լուծման՝ հարգելով Ադրբեջանի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը[92]: Բնականաբար, ԻՀԿ-ն չանդրադարձավ միջազգային ասպարեզում լայն ինչեղություն ստացած՝ Թուրքիայի կողմից հակամարտության գոտի նետված միջազգային վարձկանների թեմային:

Հարկ է նշել նա, որ Արցախյան երկրորդ պատերազմի շրջանում (2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը) Մերձավոր Արևելքում և ընդհանրապես իսլամական միջավայրերում ի հայտ եկան հստակ հակահայկական տրամադրություններ, որոնք դրսևորվեցին թե՛ մամուլում և թե՛ սոցիալական ցանցերում: Դրանք կա՛մ ուղղորդվում էին էրդողանամետ թուրքական շրջանակների ու ադրբեջանական լոբբինգի կողմից և կամ էլ՝ իսլամական համերաշխության դրսևորումներ էին՝ ի աջակցություն մուսուլմանական Ադրբեջանին: Հակահայկական տրամադրություններն աչքի էին ընկնում ծայրահեղական դրսևորումներով: Նշված իրողությունը մարտահրավեր է թե՛ Հայաստանի, թե՛ Մերձավոր

[24] **OIC condemns repeated provocations and aggression by Armenian military forces against Azerbaijan,** https://www.oic-oci.org/topic/?t_id=23879&t_ref=14184&lan=en

Արևելքի և թե՛ այլ տարածաշրջաններում ապրող հայության ազգային անվտանգության համար:

Այսպիսով՝ Ադրբեջանը անկախությունից ի վեր արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունը լավագույնս ծառայեցրեց ոչ միայն մուսուլմանական աշխարհում իր դիրքերն ամրապնդելու, արաբական մուսուլմանական աշխարհի հետ համագործակցելու և նրա քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ներուժն օգտագործելու գործին, այլև Հայաստանի դեմ քարոզչության և Արցախյան հարցում լայնածավալ աջակցություն ստացավ: Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունը, կարելի է ասել, հաջողեց: Այն հնարավոր դարձավ նաև Իսլամական համագործակցություն կազմակերպության հետ սերտ համագործակցության միջոցով:

Իսլամական համագործակցություն կազմակերպությունը Արցախյան հակամարտությանը, բնականաբար, անդրադարձել է միակողմանի կերպով՝ հիմք ընդունելով միայն Ադրբեջանի ներկայացրած փաստերն ու փաստարկները: ԻՀԿ բանաձևերի համաձայն՝ զիջումներ պետք է աներ միայն հայկական կողմը, իսկ Արցախի՝ որպես հակամարտության կողմ լինելու, Ադրբեջանի տարածքում հայերի դեմ վայրագությունների և Ադրբեջանի կողմից իրականացված ռազմական հանցագործությունների վերաբերյալ երբևէ որևէ հիշատակում չի եղել: ԻՀԿ դիրքորոշումը Արցախյան հակամարտության հարցում լիովին կարելի է համարել ադրբեջանամետ, ինչը պայմանավորված է իսլամական համերաշխության գաղափարով և Ադրբեջանին Թուրքիայի ցուցաբերած բազմակողմ աջակցությամբ: Հայ-ադրբեջանական

հակամարտության վերաբերյալ ԻՀԿ բանաձևերը վերջին տասնամյակներին շահեկան քարոզչական նշանակություն են ունեցել Ադրբեջանի համար ընկալելի դառնալու, մուսուլմանական աշխարհում ամրագրելու ու ամրապնդելու Հայաստանի «ագրեսոր» լինելու գաղափարը: ԻՀԿ-ն շրջանակներում Ադրբեջանին հատկապես աջակցել են Թուրքիան, Պակիստանը, Բանգլադեշն ու Աֆղանստանը: Չնայած ԻՀԿ անդամ պետությունների և կառույցների շատուշատ ներկայացուցիչներ իսլամական աշխարհի առաջ ծառացած խնդիրների ու մարտահրավերների մասին խոսելիս Արցախյան հարցին չեն անդրադարձել, սակայն դա արել են նշված երկրների ներկայացուցիչները և ոչ միայն ԻՀԿ-ում: Հարկ է նկատի ունենալ, որ անգամ Հայաստանի բարեկամ պետությունները ԻՀԿ շրջանակներում չէին կարող չսատարել Ադրբեջանին: Իսլամական համագործակցություն կազմակերպությունում փաստաթղթերն ընդունվում են կոնսենսուսով: Այնտեղ չի գործում քվեարկության ընթացակարգ. բանաձևն առաջարկվում է, և եթե որևէ անդամ պետություն վետո չի դնում, այն ընդունվում է: Բնականաբար, որևէ անդամ պետություն միջազգային իսլամական այդ հարթակում չէր կարող խախտել կազմակերպության հիմնարար սկզբունքներից մեկը՝ իսլամական համերաշխության գաղափարը, առավել ևս՝ վնասել սեփական պետության հեղինակությունը: Այս հանգամանքը հնարավորություն տվեց Ադրբեջանին՝ հաջողության հասնել Հայաստանի դեմ միջազգային իսլամական օրակարգ ձևավորելու հարցում: Նշենք նաև, որ իսլամում որոշակի կողմնակալ և կարծրատիպային պատկերացումներ կան գրավյալ

մուսուլմանական հողերի, ոչ մուսուլմանների դեմ պատերազմներ վարելու և առնչվող այլ հարցերի մասին, որոնք ձևավորում են նաև մուսուլմանական հասարակությունների արդի պատկերացումները մուսուլմանական պետություններին առնչվող խնդիրների նկատմամբ: Պատահական չէ, որ իսլամական համերաշխության գաղափարները արդյունավետ կերպով ծառայեցին Ադրբեջանի ազգային շահերին: Հաշվի առնելով նշված իրողությունները, Հայաստանի Հանրապետությանը սպասվում է լուրջ ու կարևոր աշխատանք՝ վերականգնելու իր հեղինակությունն ու կշիռը Մերձավոր Արևելքում և ոչ միայն, ինչպես նաև չեզոքացնելու կրոնական և էթնիկ անհանդուրժողականության հետ առչնվող տրամադրությունները, որոնք այլևս գոյություն ունեն և որոնց կարող են բախվել հայ համայնքներն ամբողջ աշխարհում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաշայան Ա. 2003, Իսլամական կոնֆերանս կազմակերպություն. կառուցվածքը, գաղափարախոսությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Երևան:

Փաշայան Ա. 2013, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Երևան:

Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանսը՝ արդիականացման ճանապարհին, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=761

Charter, Organisation of Islamic Cooperation, https://www.oic-oci.org/page/?p_id=53&p_ref=27&lan=en

The Islamic Monuments of the Armenian Architecture of Artsakh. Publisher-Research of Armenian Architecture. Author- Samvel Karapetyan, Yuerevan, 2010.

Joshua Kucera, Karabakh's contentious mosque restoration, Dec 4, 2019, https://eurasianet.org/karabakhs-contentious-mosque-restoration

Addresses by the Minister of Foreign Affairs of the Republic of Azerbaijan Elmar Mammadyarov, Journal of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, No. 15, 2006.

Resolution No. 25/9-C (IS), On the Destruction and Sabotage of Islamic Historical and Cultural Relics and Shrines in the Occupied Azeri Territories as part of the Republic of Armenia's Aggression against the Republic of Azerbaijan, adopted by the IX session of the Islamic summit conference, 12-13 November, Doha, http://ww1.oic-oci.org/english/conf/is/9/9th-is-sum-cultural.htm#25

OIC/CFM-32/2009/CS/RES//FINAL, https://www.oic-oci.org/docdown/?docID=409&refID=29

Baku Declaration, p. 28; Report of the Secretary General of the OIC on the Aggression of the Republic of Armenia against the Republic of Azerbaijan p. 23; Resolution No. 9/33-P the Aggression of the Republic of Armenia against the Republic of Azerbaijan, p. 19-20. Journal of the Minisrty of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, No. 15, 2006.

https://www.oic-oci.org/docdown/?docID=2988&refID=1102

International Conference on Role of Media to Encourage Tolerance Commenced in Baku, https://en.trend.az/azerbaijan/politics/916389.html

Statement by the OIC Secretary General Ekmeleddin Ihsanoglu at the Sixth Islamic Conference of Culture Ministers held in Baku, Republic of Azerbaijan, http://www.oic-un.org/document_report/statement_20091014.pdf

Sixth Islamic Conference of Cultural Ministers, Final Communique, https://www.icesco.org/en/wp-content/uploads/sites/2/2019/04/Conference-Ministers-Culture-6-2009.pdf

OIC General Secretariat Condemns Armenia's Attack On The Tovuz Region In Azerbaijan,
https://www.oic-oci.org/topic/?t_id=23655&t_ref=14098&lan=en

OIC condemns repeated provocations and aggression by Armenian military forces against Azerbaijan, https://www.oic-oci.org/topic/?t_id=23879&t_ref=14184&lan=en

Արաքս Փաշայան, պ.գ.թ.,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
Արաբական երկրների բաժին, առաջատար
գիտաշխատող,
a_pashayan@hotmail.com

POSITION OF THE ORGANISATION OF ISLAMIC COOPERATION ON NAGORNO-KARABAKH CONFLICT

Keywords: *Islamic solidarity, Organization of Islamic Cooperation, conflict, security, biased position, xenophobia, challenge, Armenia, Azerbaijan, Artsakh, Ummah, aggression, religion, politics.*

The article deals with the resolutions of the OIC on Nagorno-Karabakh conflict, Azerbaijan's cooperation with the organization, the Islamic support of Azerbaijan in international space. One of the most important finding of the article is that Azerbaijan used the idea of Islamic solidarity, trying to get support of the Islamic world in Nagorno-Karabakh issue. Azerbaijan with the help of Turkey succeed to formulate an anti-Armenian campaign not only within the organisation but also in the Islamic world for decades.

Araks Pashayan - PhD,
Institute of Oriental Studies NAS RA,
Department of Arab Countries,
Leading Researcher, a_pashayan@hotmail.com

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ

SOURCE STUDY AND PHILOLOGY

ՔԱՂՐԹԱԿԱՆՔ - ԱՐԱԲՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

ՀԱՅԿԱՋ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բանալի բառեր՝ *քաղրթականք, Քաղիրթ, ցեղանուն, արաբ, հայ մատենագրություն, Խալիդ, անձնանուն:*

Հայ մատենագրության մեջ արաբների վերաբերյալ կիրառվող Քաղրթականք անվանումը, ի տարբերություն արաբների համար գործածելի ավանդական անվանումների (արաբ, տաճիկ, սառակինոս, իսմայելացի, հագարացի և այս ձևերից կազմված բարդություններ), լայն կիրառություն չունի և հանդիպում է միայն մեկ կոնտեքստում՝ իսլամի ծագման վաղ շրջանի և Մուհամեդի մասին պատմող հատվածում: Տարբեր մատենագիրների մոտ հանդիպող այդ նույն կոնտեքստը, փաստորեն, հուշում է դրանց միջև գոյություն ունեցող աղբյուրագիտական ընդհանուր կապի մասին, որոնք ի վերջո հանգում են մեկ ընդհանուր սկզբնաղբյուրի: Այս անվան առաջին վկայությունները վերաբերում են XII դարին պատկանող երկու երկերի՝ «Քարթլիս Ցխովրեբայի» հին հայերեն թարգմանություն-խմբագրություն և Սամվել Անեցու «Ժամանակագրություն»:

Պատմաբանասիրական քննությունը ցույց է տալիս, որ Քաղրթականք անվան առաջին բաղադրիչը՝ Քաղըրթ, Քաղիրթ կամ Քաղարթ նույնանում է արաբական Խալիդ անվան հետ:

---

* *Հոդվածը ներկայացվել է 21.11.2020: Գրախոսվել է 27.11.2020:*

Սույն հոդվածում կատարելով աղբյուրագիտական քննություն, հաշվի առնելով այս անվան վերաբերյալ առկա մեկնաբանությունները և համեմատելով Քաղիրթ անունը հայերեն համանուն մյուս բառերի հետ՝ ցույց ենք տալիս Խալիդ < Քաղիրթ համապատասխանությունը, որ արդյունք է ասորերենից հայերեն կատարված յուրօրինակ փառադարձության: Ըստ այդմ, արաբական Խալիդ անունը հայերեն է ներթափանցել ներկայումս ոչ հայտնի ասորական մի աղբյուրից հավանաբար XII դարում:

Հայ մատենագրության մեջ արաբների վերաբերյալ կիրառվող ավանդական անվանումներից զատ (*արաբ, տաճիկ, սառակինոս, իսմայելացի, հագարացի*), վկայվում է ևս մեկ անվանում՝*քաղրթականք* (*քաղրթալեզուք, քաղրթաշուրթն ժողովուրդ, քաղրթաց ազգ, ժողովուրդ*): Այս վերջին ձևը, սակայն, ի տարբերություն մնացած անվանումների՝չունի լայն տարածում և հիշատակվում է միայն իսլամի ծագման վաղ շրջանի և Մուհամեդի մասին պատմող հատվածում: Այս անվանաձևի առաջին վկայությունները վերաբերում են XII դարին պատկանող երկու երկերի՝ «Քարթլիս Ցխովրեբայի» հին հայերեն թարգմանություն-խմբագրություն և Սամվել Անեցու «Ժամանակագրություն»: Ի. Աբուլաձեն ցույց է տալիս, որ «Պատմություն Վրաց» անունով հայտնի «Քարթլիս Ցխովրեբայի» հին հայերեն թարգմանությունը վրացերենից հայերեն փոխադրված պիտի լինի XII դարի երկրորդ կեսին[93], մինչդեռ վրացերեն բնագրի

[1] **Աբուլաձե 1941,** 37:

պահպանված ամենավաղ օրինակը վերաբերում է XV դարի վերջերին[94]: «Պատմության» ԺԶ գլխուը հեղինակը սկսում է VII դարի սկզբներին իսլամի տարածման սկզբնական շրջանում մուսուլմանների կողմից քրիստոնյաների նկատմամբ իրականացված դաժանությունների նկարագրությամբ՝ նշելով, որ մի որոշ ժամանակ *սառակինոսները* (իմա՝արաբները) կոչվեցին *քաղրթականներ*, քանի որ նրանց հզորացման սկիզբը կապվում է *Քաղրթ/Քաղարթ* իշխանի անվան հետ. «*Բայց ոչ ոք կարէ զաղէտս քրիստոնէիցս ընդ գրով արկանել՝ զոր կրեցին ի Սարակինոսացն, որք առժամանակ մի և Քաղրթականք կոչեցան. զոր ասէ իսկ աստուածային Գիրք, եթէ Քաղրթայ լեզուքն արբեսցին յարենէ անմեղաց: Քանզի սկիզբն զօրանալոյ ազգին Քաղրթն եղև, որ էր իշխան սակաւն Իսմայելականաց շրջաբնակաց*»[95]: Կարևոր է նշել, որ «Քարթլիս Ցխովրեբայի» վրացերեն բնագրում տվյալ հատվածը բացակայում է, ուստի, ամենայն հավանականությամբ, այն ներմուծվել է հայերեն տեքստի խմբագրի կողմից[96]: Մյուս աղբյուրում՝ Սամվել Անեցու «Ժամանակագրության» մեջ համապատասխան հատվածը հետևյալն է, հմմտ. «*Ասպանաւր նստի գլուխ ազգին Իսմայէլի նախ Քաղարթ անուն, զոր եւ Գիրն աստուածային պատմէ, թէ քաղարթաշուրթն ժողովուրդն յագեցուսցեն զսուրս իւրեանց յարենէ*»[97]: Եթե «Պատմութիւն Վրաց»-ում *Քաղրթ* անվան դիմաց ունենք

---

[2] **Thomson 1996:** XXXVIII.

[3] **Համառօտ Պատմութիւն Վրաց 1884,** 102:

[4] **Աբուլաձե 1941,** 36-37:

[5] **Սամուէլ Անեցի 2011,** 100:

Քաղրթայ լեզուքն, ապա Ս. Անեցու մոտ *քաղարթաշուրթն ժողովուրդ* արտահայտությունն է վկայվում: Ի. Աբուլաձեն «Պատմություն Վրաց»-ի վերաբերյալ իր ուսումնասիրությունում մեջբերում է մի շարք դրվագներ, որոնք բացակայում են վրաց բնագրում և, ընդհակառակը, առկա են հայերեն թարգմանության մեջ և ազդված են այլ հայ մատենագիրներից՝ ցույց տալով, որ «Քարթլիս Ցխովրեբայի» հայերեն թարգմանության հեղինակը հայ է և քաջածանոթ է հայերեն պատմական գրականությանը: Նա նշում է, որ Մահմետի երևալու մասին այս պատմությունը նույնպես հայկական աղբյուրներից է վերցված և շատ նման է Սամվել Անեցու ու Մխիթար Անեցու պատմածներին [98]:

Սամվել Անեցու կրտսեր ժամանակակից Մխիթար Անեցին (XII-XIII դդ.) Քաղրթի մասին պատմվող հատվածում գրում է. «*Առաջին ելանէ զայր յիսմայէլացւոց, ունելով գլուխ և առաջնորդ զՔաղրթ ումն*»[99]: Ակնհայտ է, որ Մխիթար Անեցին, այս հատվածը շարադրելիս օգտվել է իր համաքաղաքացի Սամվել Անեցու երկից: Թեև շարունակության մեջ բացակայում են աստվածաշնչյան տողերը, սակայն վերջինիս մոտ Սամվել Անեցու ազդեցությունը նկատելի է նաև հետևյալ հատվածում, հմմտ.

---

[6] **Աբուլաձե 1941,** 36:

[7] **Մխիթար Անեցի 1983,** 103:

Սամվել Անեցի	Մխիթար Անեցի
Բայց հասեալ Քղղրթ ի Դամասկոս Միջագետից եւ մինչեւ ի քաղաքն Ամիթ խանձեալ բազում աւարաւ: Ապա երիս սպայս մի ի Հռոմ արձակէ Յազ անուն եւ խրատտու Յովել, որք կոտորեցին ի Հռոմոց Հ հազար...Եւ փիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից եւ Ասորւոց, Եգիպտացւոց, Մարաց եւ Պարթեւաց եւ Պաղեստինացւոց:» (էջ 100):	*«Բայց հասեալ Քաղրթի ի Դամասկոս Միջագետից, մինչև ցքաղաքն Ամիթ և արձակէ երիս գլխաւորս. մի՝ ի կողմանս Հռոմոց՝ Յազու, որոյ խրատիչ ասեն զՅովէլ ոմն, որք կոտորեցին ի Հռոմոց ՀՌ: ... և փիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից, Մարաց, Պարթևաց և Պաղեստինացւոց:»* (էջ 103)[100]:

Դեպքերի և դեմքերի համադրությունը ցույց է տալիս, որ Քաղրթ/Քաղարթ իշխանը VII դարի արաբ հայտնի զորավար Խալիդ իբն ալ-Վալիդն է (585-642 թթ.): Հետևաբար ենթադրելի է, որ հայերեն *Քաղրթ*-ն արաբական *Խալիդ* անվան համապատասխանությունն է, ամենայն հավանականությամբ՝ մի յուրօրինակ տառադարձության արդյունքում առաջացած ձև: Այստեղ հիշատակվող Յազը, կարծում ենք, Խալիդի կողմնակից արաբ զորավար Ամր իբն ալ-Ասը պետք է լինի (արաբ. عمرو بن العاص- Amr ibn al-'Ās): Սա այն հատվածն է, որտեղ

[8] **Մխիթար Անեցի 1983,** 32 (տե'ս առաջաբանը):

պատմվում է արաբաբյուզանդական տևական պատերազմների հետևանքով արաբների կողմից Ասորիքի, Պաղեստինի և Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող այլ շրջանների գրավման ու խալիֆայության կազմի մեջ մտցնելու մասին:

Իսլամի ծագման և Մուհամեդի գործունեության վաղ շրջանում Մեքքայի Կուրեյշ ցեղից սերող բանու Մախզում ազնվական ընտանիքը, որին պատկանում էր Խալիդը, Մուհամեդի հակառակորդներից էր և պայքարում էր նրա դեմ: Ուհուդ լեռան մոտ տեղի ունեցած հայտնի ճակատամարտում (625 թ.) նույնիսկ Խալիդն աբու Սուֆիանի, Ամր իբն ալ-Ասի և մի քանի այլ զորավարների հետ՝ իր կողմնակիցներով հաղթանակ է տանում Մեդինա գաղթած մուսուլմանների նկատմամբ, որոնց առաջնորդում էր հենց իսլամի մարգարեն:

Մեքքացիների և Մուհամեդի հետևորդների միջև պատերազմներն ավարտվում են միայն մի քանի տարի անց, երբ 628 թ.-ին կնքվում է Հուդայբիայի խաղաղության դաշնագիրը: Արաբական աղբյուրներում զորավար Խալիդը տարբեր կերպ է հիշատակվում: Բուն Խալիդ անունից զատ, նա հոր անունով կոչվում է *իբն ալ-Վալիդ* (Վալիդի որդի), ավագ որդու անունով՝ *աբու Սուլեյման* (Սուլեյմանի հայր)[101]: Մուսուլմանություն ընդունելուց հետո նրան տրվում է նաև «Ալլահի թուր» (Saif-ullah) պատվանունը[102]: Ակնհայտ է, որ արաբերենից կատարված ուղիղ տառադարձության դեպքում *Խալիդ* անունը հայերենում չպետք է նման փոփոխության

[9] **Akram 2006:** chapter 2, 5.
[10] **Akram 2006:** chapter 6, 3.

ենթարկվեր, ինչպես *Խալիլ* < արաբ .خليل Xalil, *Խալաֆ* < արաբ. خلاف Xalāf, *Խալաթ* < արաբ. خلعت Xal'at[103]և այլ անձնանունների պարագայում է: Արաբերեն /خ/ - ն (x) համապատասխանում է հայերեն /խ/ - ին: Սա նշանակում է, որ անունը հայերեն է տառադարձվել միջնորդ լեզվից:

Քաղիրթ ձևով այս անունը բերված է նաև Նոր Հայկազյան բառարանում[104]: Վերջինիս բացատրության մեջ նշված է, որ այն հատուկ անուն է, բայց չի նշվում կապը *Խալիդ* անվան հետ: Սրանից առաջացած *քաղրթալեզու, քաղրթաշուրթ* բարդությունները նույնպես բերված են ՆՀԲ-ում, որտեղ նշված է նայել *Քաղիրթ* անվան տակ:

Քաղիրթ հայերենում նաև հասարակ բառ է և նշանակում է «որովայն, փոր, փորոտիք, աղիք, ընդերք, թափան» , հմմտ. *Մեծ պարկ՝ ի փոր կենդանւոյն՝ ճարպով պատեալ՝ կից ընդ աղիս՝ ընդունարան ապաւառի,* հմմտ. «հուն.՝ κοιλία, լատ.՝ intestinum»[105], (պրսկ.՝ šīrdān - شیردان , թրք.՝ şırdan): *Քաղիրթ* (փորոտիք) վկայվում է հիմնականում Աստվածաշնչի գրաբար տարբերակում (Ելք 29:13, 29:22, Ղեւտական 3:3, 3:9, 7:3, 8:21, 9:19), մինչդեռ ժամանակակից հայերեն թարգմանություններում փոխարինված է *փորոտիք* բառով (տե'ս նշյալ հատվածները):

Հայերենում այդ երկու բառերի ակնհայտ նմանությունը և, հավանաբար, այն հանգամանքը, որ ՆՀԲ-ում երկուսն էլ բերված են մեկ գլխաբառի տակ՝

---

[11] **Աճառյան հ. Բ, 1944,** 452-453:

[12] **Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի հ. II, 1981,** 972:

[13] **Նույն տեղում:**

առաջին և երկրորդ նշանակություններով, Բ. Կյուլեսերյանին հիմք է տվել Խալիդ անվան հայերեն *Քաղրթ* ձևը նույնացնել *քաղիրթ* (փորոտիք) բառի հետ՝ գրելով. «*Հայք, հաւանաբար, բառախաղ մը ըրած ըլլան Խալիփը հայացնելով իբրեւ Քաղիրթ, որ մեր լեզուին մէջ կը նշանակէ ընդերք, փարթ (շիրտէն, իշկէմպէ): Եւ ասյպէս քաղիրթէն ալ շինեցին Քաղրթանք, Քաղրթականք (Քաղրթի ազգակիցներ, արաբք, Իսմայէլացիք) բառերը, ինչպէս նաեւ Քաղրթալեզուք, Քաղրթաշուրթն ժողովուրդ բարդերն եւ բացատրութիւնները, անոնց արիւնախանձ եւ արիւնռուշտ նկարագրին համար*»[106]: Նախ պետք է նշել, որ հատուկ անունից առաջացած այս բարդություններն իրականում արհեստականորեն ստեղծված բառեր են: «Աստվածային Գիրքը», որին հղում են «Պատմություն Վրաց»-ի հայերեն խմբագիրն ու Սամվել Անեցին, ինչպես դիպուկ կերպով ցույց է տվել Ռ. Թոմսոնը, «Սիրաքի գիրքն» է, որտեղ բարեկամների և թշնամիների մասին խոսվող գլխում, մասնավորապես, գրված է. «*Նոյնպէս թշնամի քաղցր է շրթամբք, եւ ի սրտի իւրում խորհի կործանել զքեզ: Մզէ՛ զարտասուս առաջի քո, այլ թէ ժամ գտանէ՛ արեամբ քո ոչ յագի*» (ԺԲ: 15-17)[107]: Այս տողերի խմբագրությունն է, փաստորեն, ներկայացված «Պատմություն Վրաց»-ում և Սամվել Անեցու մոտ, որտեղ *քաղցր շրթունք*-ը (քաղցրաշուրթ) բառախաղի արդյունքում դարձել է

---

[14] **Կյուլեսերյան 1930,** 236:

[15] Այս կապակցությամբ Բ. Կյուլեսերյանը վկայակոչում է Սուրբ Գրքի մեկ այլ հատված, հմմտ. «*եւ կերիցէ սուր եւ յագեսցի եւ արբեսցի յարենէ նորա*» (Երեմիա ԽՉ: 10): Տե՛ս **Կիւլէսէրեան 1930,** 237:

քաղրթաշուրթ[108] («Պատմություն Վրաց»-ում՝ *քաղրթալեզու*)՝*քաղցր*-ը փոխարինվելով *քաղրթ*-ով, քանի որ նախորդ նախադասության մեջ գործածված է *Քաղրթ* (Խալիդ) անձնանունը՝ իբրև արաբների գլխավորի անվանում: Մեջբերված համատեքստից ակնհայտորեն երևում է, որ *Քաղրթ* կիրառվում է իբրև անձնանուն, և ակնարկ անգամ չկա առ այն, որ բառը գործածված է ծաղրական, հեգնական կամ արհամարհական նշանակությամբ: Հետևաբար *Քաղրթ* անունը *քաղիրթ* (փորոտիք, որովայն) բառի հետ նույնացնելու որևէ հիմք չկա:

Այնուամենայնիվ, Բ. Կյուլեսերյանի այս մեկնաբանությունը ընդունելություն է գտել նաև այլ ուսումնասիրողների մոտ: Սկզբում Հ. Անասյանը, Հովհաննես Կամենացու երկի հրատարակության մեջ ծանոթագրելով *Քաղիրթ* անունը, բառացիորեն կրկնում է վերջինիս[109]: Այնուհետև Հ.. Անասյանի միջոցով այս մեկնաբանությունը տարածում է գտնում Լ. Խանլարյանի և Վ. Առաքելյանի մոտ, ովքեր Կիրակոս Գանձակեցու և Առաքել Դավրիժեցու պատմությունների աշխարհաբար և ռուսերեն թարգմանությունների ծանոթագրություններում նույնությամբ կրկնում են Հ. Անասյանին՝ հղում կատարելով վերջինիս[110]:

Հետագա դարերի հայ մատենագիրներից Քաղրթի մասին հիշատակություններ հանդիպում են Վարդան Վարդապետի (XIII դ.)[111], Կիրակոս Գանձակեցու (XIII

---

[16] **Thomson 1996:** 250:

[17] **Յովհաննէս Կամենացի 1964, 86:**

[18] **Կիրակոս Գանձակեցի 1982,** ծան. 157, 304: **Առաքել Դավրիժեցի 1983,** ծան. 256, 552: **Аракел Даврижеци 1973:** прим. 9, 552.

[19] **Վարդան Վարդապետ 1862,** 66:

դ.)[112], Գրիգոր Տաթևացու (XIV-XV դդ.)[113], Հովհաննես Կամենացու (XVII դ.)[114], Գրիգոր Կամախեցու (XVII դ.)[115], Դավիթ Բաղիշեցու (XVII դ.)[116], Ամիրաս Երզնկացու (XVII դ.)[117] և Առաքել Դավրիժեցու (XVII դ.)[118] մոտ: Սամվել Անեցու օրինակին շատ մոտ է Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց»-ի «Ընդդէմ Տաճկաց» բաժնի ձեռագրերից մեկում (գրված՝ 1413 թվին) հանդիպող հետևյալ հատվածը, որ, սակայն, բացակայում է տվյալ բաժնի մյուս օրինակներում, հմմտ. «*Որ եւ ութ ամօք յառաջ քան զՄահմէտ, իշխան ոմն, անուն Քաղըրդ, առաջին նստեալ գլուխ Իսմայէլացոցն, եւ զօրացեալ աւերեաց զԴամասկոս, որ է Դմշխ, եւ ելեալ ի Հայս, բազումս ի Պարսից եւ ի Հայոց ի սուր սուսերի արկ. որպէս ասէ Սուրբ Գիրն. թէ Քաղրդաշուրթն ժողովուրդն յագեցուսցեն զսուսերս իւրեանց յարեան*»[119]: Մյուս մատենագիրներից Գր. Կամախեցու, Դ. Բաղիշեցու և Ամ. Երզնկացու ժամանակագրություններն իբրև աղբյուր են ծառայել Առաքել Դավրիժեցու «Պատմության» համար[120], ուստի նրանցում հանդիպող տեղեկությունները գրեթե բառացի կրկնում են միմյանց: Եթե ավելի վաղ աղբյուրներից մեզ ծանոթ չլիներ

---

[20] **Կիրակոս Գանձակեցի 1961,** 58:

[21] **Կյուլեսերյան 1930,** ծան. 3, 121:

[22] **Յովհաննէս Կամենացի 1964,** 38:

[23] **Մանր ժամանակագրություններ հ. II, 1956,** 263:

[24] **Մանր ժամանակագրություններ հ. II, 1956,** 330, 331:

[25] **Խանլարյան 1988,** 189:

[26] **Առաքել Դաւրիժեցի 1990,** 467:

[27] **Կյուլեսերյան 1930,** ծան. 3, 121:

[28] **Առաքել Դաւրիժեցի 1990,** ծան. 455, 534-535: **Խանլարյան 1988,** 189:

«*քաղրթաշուրթ ժողովուրդ*» արտահայտությունը, ապա գուցե նաև անհեթեթ ու անբացատրելի թվար վերոնշյալ աղբյուրներում առկա հետևյալ հատվածը, հմմտ. «*Թուին ՃԲ. **Քաղրդայ շրթունքն** էր գլուխ Իսմայելացւոց*» (Գր. Կամախեցի, էջ 263, Ամ. Երզնկացի, էջ 189, Առ. Դավրիժեցի, էջ 467), որտեղ *Քաղրդ* և *շրթունք* բառերի կապակցումը անհասկանալի ու ավելորդ պիտի թվար: Եվ ահա այդպիսի մի թյուրիմացություն էլ, ի դեպ, առաջացել է Առաքել Դավրիժեցու «Պատմության» ռուսերեն թարգմանության մեջ, որտեղ Լ. Խանլարյանը, առանց խորամուխ լինելու այդ բառերի կապի մեջ, նշյալ կապակցությունը չի թարգմանում, այլ բառացի տառադարձում է ռուսերեն, հմմտ. «*В 52 (603) году главою измаильтян был Кахирда-шртунк*»[121]:Մինչդեռ, եթե այս հատվածը համեմատվեր վաղ շրջանի աղբյուրներում առկա օրինակների հետ, ապա ակնհայտ կլիներ, որ *շրթունք* բառը հանգում է աստվածաշնչյան տողերին և հատուկ անուն չէ, ուստի ռուսերեն տարբերակում գուցե պետք է ներկայացվեր թարգմանությամբ և ծանոթագրվեր: Հետևաբար անվիճելի է, որ ուշ շրջանի այս բոլոր աղբյուրները պիտի բացատրվեն Սամվել Անեցու օրինակի հետ համեմատությամբ, քանի որ հանգում են վերջինիս: Այդպիսի մի ժամանակագրություն է պարունակում նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանի № 3701 ձեռագիրը, որը շատ ընդհանրություններ ունի Առաքել Դավրիժեցու և Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունների հետ[122]: Այդ

---

[29] **Аракел Даврижеци 1973:** 475.

[30] **Խանլարյան 1984,** 85-86:

ժամանակագրությունը հատվածաբար հրատարակել է Ն. եպս. Պողարյանը[123]: Նախաբանում հրատարակիչը նշում է, որ ձեռագրի սկիզբը պակասավոր է, և բացակայում են առաջին երեք պրակները՝ յուրաքանչյուրը հավանաբար 12 թերթից բաղկացած, հետևաբար ժամանակագրությունը սկսվում է Դ գլխից, որից ընդամենը չորս թերթ է մնացել: Ն. Պողարյանը նշում է նաև, որ ձեռագիրն իր նախնական մասերում նման է Սամվել Անեցու «Ժամանակագրության»-ը ապա ունի նմանություններ Սամվել Անեցու «Ժամանակագրության» տարբեր շարունակությունների հետ[124]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ *Քաղրթ* անվանը վերաբերող մեզ հետաքրքրող հատվածը հենց սկզբում պետք է եղած լիներ, ապա պիտի ենթադրել, որ այդ հատվածը մնացել է ձեռագրի փչացած և կորած էջերում:

Քանի որ Քաղրթի մասին պատմող դրվագը վերաբերում է իսլամի վաղ շրջանի և Մուհամեդի ի հայտ գալու մասին պատմությանը, ուստի ենթադրելի էր, որ այդ անվան մասին տեղեկություններ պետք էր որոնել նաև XII դարին նախորդող պատմիչների մոտ: Թեև Մուհամեդի և իսլամի տարածման վերաբերյալ տեղեկություններ հայ մատենագրության մեջ հայտնվում են՝ սկսած VII դարից, սակայն Քաղրթի մասին հիշատակություն չկա ո՛չ Սեբեոսի, ո՛չ էլ մինչև XII դարն ընկած ժամանակաշրջանի որևէ պատմիչի մոտ[125]:

---

[31] **Պողարյան 1969**, 257-282:

[32] **Պողարյան 1969**, 257:

[33] Քաղրթի մասին տեղեկություններ չի գտնում նաև «Պատմություն Վրաց»-ի ֆրանսերեն թարգմանիչ Մ. Բրոսսեն՝ նշելով միայն, որ արաբալեզու պատմիչ Աբու-լ Ֆիդայի մոտ (XIII-XIV դդ.)

Ն. Ակինյանը, խոսելով Ղևոնդի «Պատմության» մասին, կարծում է, որ գիրքը կորուստ ունի սկզբից, իբրև թե պակասում է գրքի ընծայականն՝ ուղղված Շապուհ Բագրատունուն և մեկ գլուխ՝ նվիրված «Մահմետի երևման»[126]: Իբրև փաստարկ՝ նա բերում է Մխիթար Անեցու տողերն արաբական արշավանքների մասին, այդ թվում՝ Քաղրթին վերաբերող հատվածը, որ, սակայն, բացակայում է Ղևոնդի մոտ: Թեև նա հակված է Քաղրթին վերաբերող հատվածը համարել Ղևոնդի կորած առաջաբանի մաս, սակայն ընդունում է, որ Մխիթարի առաջաբերությունն այնքան երկիմաստ ձևով է, որ դժվար է դրա վրա հիմնվելով՝ հանգել որոշ եզրակացության ի նպաստ Ղևոնդի[127]: Ըստ նրա, Անեցու մոտ Քաղրթի և Եմրանի հիշատակությունը ենթադրում են ուրիշ աղբյուր: Այս կապակցությամբ Ն. Ադոնցը ճիշտ կերպով նշում է, որ «*Մխիթարը առել է խորթ անուններն իր հայրենակից Սամուել Անեցուց, որի մոտ նույն անունները հնչում են Քաղրթ կամ Քաղարթ և Ամրան: Սրանք ոչ այլ ոք են, եթե ոչ Մահմետի անդրանիկ զորավարները՝ Խալիդ և Ամր (Օմար): Անունների խորթ փառադարձությունը մատնում է ասորական աղբյուր*»[128]:

Հայտնի չէ ասորական այն աղբյուրը, որից կատարվել է Քաղրթին վերաբերող այս հատվածի թարգմանությունը, սակայն այն, որ անձնանվան հայերեն *Քաղրթ/Քաղարթ/Քաղիրթ* ձևը ասորերեն

հիշատակություն կա խազրաջների մասին՝ հավանաբար ակնարկելով Քաղրթ և խազրաջ անունների նմանությունը՝ **Brosset 1851:** 49.

[34] **Ակինյան 1930,** 51:

[35] **Ակինյան 1930,** 49:

[36] **Ադոնց 2006,** 327:

ܟܠܕ[129] (Kāled) անվան տառադարձությունն է, կասկածի տեղիք չի թողնում, երբ երկու լեզուներում անվանական այս ձևերի համապատասխանությունը համեմատության մեջ ենք դնում հայերենում համանուն այլ բառերի և դրանց ասորական համարժեքների հետ: Ստորև բերվող ձևերի համեմատությունը ակնհայտ է դարձնում ասորերենից հայերենին անցած մի շարք բառերում տառադարձության միևնույն սկզբունքի օրինաչափ կիրառությունը: Այսպես, հայերենում անձնանուն և «փորոտիք» նշանակությամբ հասարակ բառ լինելուց զատ, *Քաղիրթ* նաև գետանուն է: Այդպես է կոչվում Տիգրիսի ձախակողմյան վտակը, որ այժմ հայտնի է Բաթմանսու անվամբ և հոսում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքով: Սկսած 387 թվից՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի սահմանն անցնում էր այս գետով: *Քաղիրթ* գետանունը վկայվում է «Աշխարհացույց»-ում Աղձնիքի նկարագրության մեջ, հմմտ. «*Աղձնիք յելից կայ Միջագետաց, եւ հիւսիսեաւ առ Դկղաթով, ունի գաւառս տասն. զՆփոեր, զԱղձն, ընդ որոց մէջն իջանէ գետն **Քաղիրթ**, զոր Շիթմա կոչեն Տաճիկք, այսինքն՝ արիւնարբու...*»[130]: Գետի այլ անվանումներ են *Բեշրկու գետ, Սասնո գետ, Նիկեփորիոս, Նիմփիոս,* արաբերեն՝ *Շիթմա, Շիթիթմա*[131], որ թարգմանաբար նշանակում է «Արյան գետ» (արաբ. شط الدم –Šaṭ al-dam): Գետի ասորական անվանումն է ܟܠܬ (Kalaθ, Քալաթ կամ Քալեթ)[132] : Այս

---

[37] **Gregorii Barhebraei 1890:** 101.

[38] **Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ Յաւելուածովք նախնեաց 2003,** 2152: **Հիւբշման 1907,** 159-160:

[39] **Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1986,** հ. 1, 549:

[40] **John of Ephesus 1853:** 416; **John Bishop of Ephesus 1860:** 447.

կապակցությամբ Հ. Հյուբշմանը նշում է, որ գետանվան *Քաղիրթ* ձևը դժվար թե առաջացած լինի *քաղիրթ* «փորոտիք, աղիք» բառից և հարցնում՝ արդյո՞ք բառն առհասարակ հայկական ծագում ունի[133]: Այն, որ գետանվան հայերեն *Քաղիրթ* ձևը տառադարձություն է ասորերենից, երևում է Աղծնիքի նկարագրության մեջ գործածված մի շարք ասորական անվանաձևերից: «Աշխարհացույց»-ի հեղինակը այս հատվածը շարադրելիս, բացի Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ից, հիմնվել է նաև սեմական աղբյուրների վրա: Այստեղ հիշատակվող տեղանունների մեջ քիչ չեն ասորական ձևերը, հմմտ. նույն Տիգրիս գետի ասորական Deqlaθ > հյ. Դկղաթ անվանումը և այլն [134]: Բացի այդ, ասորերեն *Քալեդ* անձնանունն ու *Քալաթ* գետանունը ներկայացնում են բաղաձայնական գրեթե նույն հնչյունախումբը. մի դեպքում՝ */ք/,/լ/,/դ/*, մյուս դեպքում՝ */ք/,/լ/,/թ/*: Պետք է նկատի ունենալ, որ այս պարագայում ձայնավորների առկայության հանգամանքը գրեթե որոշիչ դերակատարություն չունի, քանի որ ասորերենի, ինչպես և սեմական մյուս լեզուների համար գործածական է բաղաձայնական գիրը: Նշված երկու դեպքում էլ ասորերենում գրությամբ մոտ և բաղաձայնական միանման հնչյունախումբ ունեցող բառերի դիմաց հայերենում ունենք տառադարձության միևնույն սկզբունքի կիրառմամբ համանուն բառեր: Ասորական կոկորդային /ʿ/– (քաֆ) տառով նշվում է երկու բաղաձայն՝ պայթական */ք/* և շփական */խ/*: Բառասկզբում, ինչպես նաև բառամիջում՝ բաղաձայնից

---

[41] **Հյուբշման 1907,** 420:

[42] **Հյուբշման 1907**, ծան. 1, 76-77:

հետո այն հնչում է որպես /ք/[135], հմմտ. հյ. քեղեղին «պսակ» < ասոր. kəlīlā[136]: Այստեղ կարծես թե անբացատրելի է մնում վերջին բաղաձայնից առաջ հավելյալ /ր/-ի առկայությունը հայերենում, բայց այս շարքը չի սահմանափակվում միայն վերոնշյալ դեպքերով և լրացվում է ասորերենից հայերենին անցած մեկ այլ փոխառությամբ, հմմտ. *խլուրդ* < ասոր. ܟܘܠܕܐ (xūldā)[137], արաբ. خلد (xulud) բառը: Ինչպես տեսնում ենք, տվյալ պարագայում նույնպես ասորերեն համապատասխան ձևի դիմաց հայերենում առկա է վերջին բաղաձայնից առաջ հավելյալ /ր/ հնչյուն: Հ. Աճառյանն այս կապակցությամբ նշում է, որ այս ձևերը չեն կարող տալ հյ. ***խլուրդ***, որի մեջ /ր/ ձայնի համապատասխանը չկա: Հավանական է համարվում բառի՝ասորի գավառական մի ձևից առաջացած լինելը, որ ավանդված չէ, բայց որի գոյության իբրև ապացույց կարող է ծառայել ասոր. xaldūdā («դաշտային մուկ») բառը[138]: Այնուամենայնիվ պետք է նշել, որ վերջին տարբերակում նույնպես /ր/ հնչյուն չկա: Մինչդեռ նախորդ օրինակների համեմատությունը *խլուրդ* բառի հետ լրացնում է այդ բացը և ի ցույց դնում ասորերենից հայերենին անցած փոխառություններում այս անկանոնության օրինաչափությունը: Ինչ վերաբերում է *քաղիրթ* «փորոտիք» բառի ստուգաբանությանը, ապա Ս. Դերվիշյանն այն կցում է հուն. χολά(θ)ς և լատ. hira, hilla «փորոտիք» բառերին՝ *-իրդ* կամ *-իրթ* մասնիկով[139]:

---

[43] **Հակոբյան 2005,** 57:

[44] **Աճառյան 1979,** հ. Դ, 569:

[45] **Հյուբշման 1907,** 305:

[46] **Աճառյան 1973,** հ. Բ, 374:

[47] **Աճառյան 1979,** հ. Դ, 544: **Dervischjan 1877: 78.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հունարեն χολά(θ)-ն ունի բաղաձայնական գրեթե նույն հնչյունախումբն, ինչ Kaled և Kalaθ անունները ապա կարելի է ենթադրել, որ հունարեն այս բառը ևս հայերենին է անցել ասորերենի միջոցով՝ հավանաբար Աստվածաշնչի թարգմանության վաղ փուլում: Սա շատ հավանական է թվում, քանի որ «Աստվածաշնչի» առաջին թարգմանությունները հայերեն կատարվել են ասորական և հունական բնագրերի համեմատությամբ: Փաստորեն, հայերենում համանուն երեք *Քաղիրթ*-ներից երկուսի (անձնանվան և գետանվան) պարագայում առկա են ասորական միանման գրությամբ համապատասխան ձևերը, իսկ երրորդի (փորոտիք) դեպքում առկա է հունարեն համարժեքը, որ ներկայացնում է նույն հնչյունախումբն ինչ ասորականներինն է: Այս երեք բառերում հայերենում վերջին բաղաձայնից առաջ հավելյալ /ր/-ն էլ լրացվում է ասորերենից հայերեն կատարված մեկ այլ փոխառությամբ (*խլուրդ*՝ տե՛ս ստորի աղյուսակները):

1. Հայերեն և ասորերեն բառերի համապատասխանությունների աղյուսակ.

Հայերեն	Ասորերեն	Հունարեն
Քաղըրդ/Քաղիրթ (անձնանուն)	ܟܵܠܶܕ(Kāled)	
Քաղիրթ (գետանուն)	ܟܲܠܲܐ(Kalaθ)	
Քաղիրթ (փորոտիք)	-	χολά(θ)
Խլուրդ	ܟ݂ܘܠܕܵܐ(xūldā)	

2. Տառերի համապատասխանությունների աղյուսակ

Ասորերեն	Հայերեն
ܟ (k, x)	ք (k')
ܠ (l)	ղ (ł)
ܕ (d)	դ (d)
ܬ (t, θ)	թ (t')
ܫ (x)	խ (x)

Ինչպես պարզ է դառնում վերոշարադրյալից, հայ մատենագրության մեջ (սկսած՝ XII դարից) արաբների վերաբերյալ կիրառված *Քաղդթականք* անվանումը անձնանվանահիմք կազմություն է՝ առաջացած *Քաղդթ/Քաղարթ/Քաղիրթ* անձնանվանը (Խալիդ անվան ասորական ազդեցությամբ տառադարձված ձևը հայերենում) պատկանելություն ցույց տվող *-ական* վերջածանցի և *-ք* հոգնակիակերտ մասնիկի հավելմամբ: Սկզբնաղբյուրի հաղորդման համաձայն՝ այս անունը ոչ թե արաբների հիմնական անվանումներից էր, այլ «նրանք այդպես կոչվեցին մի որոշ ժամանակ»՝ ըստ էության նկատի ունենալով Խալիդ իբն ալ-Վալիդ զորավարի գլխավորությամբ արաբական հաղթական արշավանքների սկզբնական ժամանակաշրջանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբուլաձե Ի. 1941, «Քարթլիս Ցխովրեբայի կամ Վրաց Պատմության հին հայերեն թարգմանությունը», Մատենադարան, Գիտական նյութերի ժողովածու, 1, Երևան, էջ 31-40:

Ադոնց Ն. 2006, Ղեւոնդ եւ Խորենացի (Քննություն հայր Ն. Ակինյանի տեսության), Երկեր, հ. Բ, Երևան, էջ 323-351:
Ակինյան Ն. 1930, Մատենագրական հետազոտություններ, հ. Գ, Վիեննա:
Աճառյան Հ. 1973, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան:
Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան:
Աճառյան Հ. 1944, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան:
Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ Յաւելուածովք նախնեաց 2003, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Անթիլիաս, էջ 2123-2161:
Առաքել Դավրիժեցի 1990, Գիրք Պատմութեանց, Երևան:
Առաքել Դավրիժեցի 1983, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան:
Մանր ժամանակագրություններ 1956, XIII-XVIII դդ., հ. II, Երևան:
Խանլարյան L. 1988, Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունը, Պատմա-բանասիրական հանդես, 4 (123), Երևան, էջ 188-208:
Խանլարյան L. 1984, Առաքել Դավրիժեցու աղբյուրներից մեկը, Պատմա-բանասիրական հանդես, 2 (105), Երևան, էջ 82-86:
Կիրակոս Գանձակեցի 1982, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան:
Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն Հայոց, Երևան:
Կիւլէսէրեան Բ. 1930, Իսլամը հայ մատենագրութեան մեջ, Վիեննա:
Հակոբյան Ա. 2005, Դասական ասորերեն, Երևան:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1986, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան:

Համառօտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի 1884, Վենետիկ:

Հիւբշման Հ. 1907, Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա:

Մխիթար Անեցի 1983, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան:

Յովհաննէս Կամենացի 1964, Պատմութիւն պատերազմին Խոթինու, Երևան:

Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հ. II, 1981, Երևան:

Պողարյան Ն. 1969, Ժամանակագրություն (XI-XVIII դդ.), Բանբեր Մատենադարանի, 9, Երևան, էջ 257-282:

Սամուէլ Անեցի 2011, Համաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս Գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Երևան:

Վարդան Վարդապետ 1862, Համառումն պատմութեան, Վենետիկ:

Аракел Даврижеци 1973, Книга историй, перевод с армянского, предисловие и комментарий Л. А. Ханларян, Москва.

Akram A. I. 2006, The Sword of Allah: Khalid bin al-Waleed, His Life and Campaigns, India, https://archive.org/details/KhalidBinAl-waleedSwordOfAllah.pdf/page/n12/mode/1up

Gregorii Barhebraei 1890, Chronicon Syriacum, ed. P. Bedjan, Paris.

John of Ephesus 1853, The Third Part of The Ecclesiastical History, Oxford.

The Third Part of The Ecclesiastical History of John Bishop of Ephesus 1860, transl. by S. Payne, Oxford.

Thomson R. S. 1996, Rewriting Caucasian History, Oxford.

Brosset M. 1851, L'histoire de la Ge'orgie, St.-Pe'tersbourg.

Dervischjan S. 1877, Das Altarmenische, Wien.

Հայկազ Գևորգյան, *բ.գ.թ., Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան) Արևելագիտության բաժին, ավագ գիտաշխատող*
haykaz1605@gmail.com

K'AIRT'AKANK' - ATTESTATION OF ONE ETHNONYM REFFERING TO THE ARABS IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

Keywords: *K'alrt'akank', Kalirt, ethnonym, Arab, Armenian historiography, Khalid, anthroponym.*

The Armenian ethnonym *K'alrt'akank'* (arm. Քաղդեականք) referring to the Arabs is attested only in the historical context which contains the narration about the rise of Islam and Muhammad. The fact that the same context is encountered in different works of Armenian chroniclers, suggests that there is an ultimate common source. The first evidence of this name in the Armenian bibliography refer to two historical works of the XII century (Ancient Armenian translation of "The History of Georgians" and "Chronology" by Samuel of Ani).

Historico-philological examination shows that the first component of the name *K'alrt'akank'* (*K'alrt'*, *K'alirt* or *K'alart'*) is identical with the Arabic anthroponym *Khalid*.

In this article, based on source study and comparison of the name *K'alirt* with other Armenian words with the same pronunciation and same orthography, the correspondence of Arabic *Khalid* < Arm. *K'alirt* is represented. It is a result of a unique transliteration from Syriac into Armenian. Accordingly, the Arabic name *Khalid* entered into Armenian probably in the XII century from a currently unknown Syriac source.

Haykaz Gevorgyan - *PhD,*
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
(Matenadaran), Department of Oriental Studies
haykaz1605@gmail.com

«ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ»
(1960-2020 թթ.)

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
Հ. I

Խմբ. խորհուրդ.՝ Հ. Մ. Եգանյան, Հ. Գ. Ինճիկյան, Ե. Ղ. Սարգիսով: **ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտոր: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960 թ., 402 էջ:**

Սեկտորի կողմից - էջ 5-8:

Ինճիկյան Հ. Գ. - Վ. Ի. Լենինը և Արևելքի ժողովուրդները, էջ 9-38:

Եգանյան Հ. Մ. - Հողային ռենտան ժամանակակից իրանական գյուղում, էջ 39-75:

Саакян Р. Г. - К вопросу о Советско-турецком договоре 1925 года (Սահակյան Ռ. Գ., Սովետա–թուրքական 1925թ. պայմանագրի հարցի շուրջը), էջ 76-104:

Ավանեսով Ս. Ս. -Մերձավոր և Միջին Արևելքում ագրեսիվ բլոկներ ստեղծելու հարցի շուրջը (1953-1958 թթ.), էջ 105-139:

Թուրյանց Հ. Կ. -Նավթային նոր կոնցեսիաները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, էջ 140-158:

Կոնդակչյան Ռ. Պ. -Ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի ներխուժումը Թուրքիա, էջ 159-175:

Амине Авдал - Культура курдов Советской Армении (Ամինե Ավդալ, Սովետական Հայաստանի քրդերի կուլտուրան), էջ 176-189:

Саркисов Е. К. - Борьба народов Закавказья против турецких окупантов в 1918 году (Սարգիսով Ե. Ղ., Անդրկովկասյան ժողովուրդների պայքարը թուրքական օկուպանտների դեմ 1918 թվականին), էջ 190-242:

Аветян А. С. - Борьба Европейского монополистического капитала за военные поставки Турции накануне Первой мировой

войны (Ա. Ս. Ավետյան, Եվրոպական մոնոպոլիստական կապիտալի պայքարը ռազմական մատակարարման համար Թուրքիայում՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին), էջ 243-265:

Հակոբյան Տ. Հ. -Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIII դդ.), էջ 266-284:

Սաֆրաստյան Ա. Խ. - Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դարում (պատմական ակնարկ), էջ 285-302:

Чугасзян Б. Л. – Легенда о Бюраспи Аждахаке по Мовсесу Хоренаци (Չուգասզյան Բ. Լ., Առասպել Բյուրասպի Աժդահակի մասին ըստ Մովսես Խորենացու) էջ 303-330:

Балаян Б. П. - К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев (Բալայան Բ. Պ., Շահսեւանների և կաշկայցիների միասնական էթնոգենեզի հարցի շուրջը), էջ 331-378:

Հաղորդում

Սարգիսով Ե. Ղ., Սաֆրաստյան Ա. Խ. -Պատմության հակագիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին, էջ 379-400:

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ:
Հ. II

Խմբ. կոլ.՝ Հ. Գ. Ինճիկյան, Հ. Մ. Եգանյան, Ն. Հ. Հովհաննիսյան, Ե. Ղ. Սարգսյան, Հաջիե Ջենդի: ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության Սեկտոր: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ. 1964 թ., 380 էջ:

Հովհաննիսյան Ն.Հ. - Իրաքի աշխատավորների 1952 թվականի ելույթները և նրանց տեղը Իրաքի ազգային–ազատագրական շարժումների պատմության մեջ, էջ 5-23:

Միոյան Շ. Խ. -Իրաքում քրդական ազգային–ազատագրական շարժման ետպատերազմյան պատմությունից, էջ 24-43:

Թուրյանց Հ. Կ. -Նավթի արաբական կոնֆերանսները, էջ 44-64:

Թոփուզյան Հ. Խ. -Հայ աշխատավորության մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային դեմոկրատակ շարժումներին 1947-1952 թթ., էջ 65-86:

Կոնդակչյան Ռ. Պ. -Միջպարտիական պայքարը ետպատերազմյան Թուրքիայում և դեմոկրատական պարտիայի անցումը իշխանության գլուխ, էջ 87-110:

Դանիելյան Ռ.Ս. -Տարրական և միջնակարգ կրթության վիճակը ժամանակակից Թուրքիայում, էջ 111-128:

Սահակյան Ռ. Գ. -1920-1923 թթ սովետա-թուրքական հարաբերությունների մի քանի հարցերը ժամանակակից թուրք հեղինակների աշխատություններում, էջ 129-149:

Կիրակոսյան Ջ. Ս. -Իրանում անգլիական իմպերիալիստական քաղաքականության պատմությունից (1918-1921 թթ.), էջ 150-173:

Лудшувейт Е. - Конференция левых турецких социалистов в Москве летом 1918 года (Լյուդշուվեյտ Ե.Ֆ., Թուրքական ձախ սոցիալիստների կոնֆերենցիան Մոսկվայում 1918 թ. ամռանը), էջ 174-192:

Եգանյան Հ. Մ. -Իրանում վակֆային հողատիրության ինստիտուտի պատմությունից, էջ 193-215:

Инджикян О. Г. - К оценке Младотурецкого движения (Б. Кнунянц о младотурецкой революции) (Ինճիկյան Հ. Գ., Երիտասարդ թուրքերի շարժման գնահատականի շուրջը (Բ. Կնունյանցը երիտասարդ թուրքերի հեղափոխության մասին)), էջ 216-239:

Балаян Б. П. – К международным отношениям на Востоке накануне Русско-иранской войны (Բալայան Բ. Պ., Միջազգային հարաբերությունները արևելքում ռուս-իրանական երկրորդ պատերազմի նախօրյակին), էջ 240-261:

Հակոբյան Տ. Հ. -Ուշ ֆեոդալիզմի դարաշրջանում (XVII-XVII դդ.) Արևելքի երկրների զարգացման մի քանի առանձնահատկությունների մասին, էջ 262-282:

Սաֆրաստյան Ա. Խ. -XVII դարի թուրքական գիտական մտքի ներկայացուցիչներ Քյաթիբ Չելեբին և Էվլիա Չելեբին, էջ 283-300:
Թունչյան Հ. -XI-XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից, էջ 301-317:
Акопов Г. Б. - Некоторые аспекты проблемы происхождения курдов в свете данных древнеиранской мифологии (Ակոպով Գ. Բ., Քրդերի առաջացման պրոբլեմի մի քանի ասպեկտները հին իրանական դիցաբանության լույսի տակ), էջ 318-349:
Բուդաղյան Ա. Հ. -Սադեղ Հեդայաթի ռեալիզմը, էջ 350-365:
Մովսիսյան Հ. Հ. -Նոր հերոսի կերպարը Բոզորգ Ալավիի նովելներում, էջ 366-378:

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ:
Հ. III
Արաբական երկրներ

Խմբ. կոլ.՝ Հ. Գ. Ինճիկյան, Ն. Հ. Հովհաննիսյան (պատ. խմբագիր), Հ. Մ. Եգանյան, Ե. Ղ. Սարգսյան, Հաջիե Ջնդի: ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության Սեկտոր: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967 թ., 237 էջ:

Оганесян Н. О. - Борьба демократических сил Ирака за ликвидацию английского мандата (1920-1932) (Հովհաննիսյան Ն. Հ., Իրաքի դեմոկրատական ուժերի պայքարը անգլիական մանդատի վերացման համար (1920-1932 թթ.)), էջ 5-37:
Մհոյի Շ. Խ. -Ազգային անկախության համար պայքարը Հարավային Քուրդիստանում (1919-1920 թթ.), էջ 38-60:
Բայրամյան Ա. Ա. -Միջազգային դիվանագիտությունը և քաղաքական դրությունը Ալեքսանդրետի սանջաքում (Հաթայ) (1938 սեպտեմբեր - 1939 հուլիս), էջ 61-88:

Սարգսյան Հ. Ս. -Սիրիայի սոցիալ-տնտեսական դրությունը ֆրանսիական մանդատային ռեժիմի տարիներին (1920-1936 թթ.), էջ 89-109:

Թոփուզյան Հ. Խ. -Լիբանանի արաբ և հայ աշխատավորության համատեղ պայքարը աշխատանքային կոդեքսի համար 1945-1946 թթ., էջ 110-134:

Մարտիրոսյան Հ. Հ. -Երիտասարդ թուրքերի ազգային քաղաքականությունը արաբական երկրներում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1908-1914 թթ.), էջ 135-161:

Տեր-Ղևոնդյան Ա. Ն. -Արաբական խալիֆայության հյուսիսային փոխարքայությունը, էջ 162-174:

Акопов Г. Б. – Арабские источники по этнической истории курдов и версия их арабского происхождения (Ակոպով Գ. Բ., Արաբական աղբյուրները քրդերի էթնիկական պատմության մասին և նրանց արաբական ծագման վերսիաները) էջ 175-207:

Балаян Б. П. - Арабы Хузистана (Բալայան Բ. Պ., Խուզիստանի արաբները), էջ 208-228:

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Հ. IV

Իրան

Խմբ. կոլ.՝ Հ. Գ. Ինճիկյան, Հ. Մ. Եգանյան (պատ. խմբագիր), Ն. Հ. Հովհաննիսյան, Ե. Ղ. Սարգսյան, Հաջիե Ջնդի: ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտոր: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969 թ., 232 էջ:

Բայբուրդյան Վ. Ա. -Իրանում իմպերիալիստական Գերմանիայի քաղաքականության հարցի շուրջը 1905-1914 թթ., էջ 5-41:

Եգանյան Հ. Մ. -Մոլքադարային կալվածատիրության զարգացումը Իրանում XIX դարի երկրորդ կեսին, էջ 42-67:

Դանեղյան Լ. Գ. -Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը, էջ 68-92:

Балаян Б. П. - Некоторые особенности этнического развития луров Ирана (Բալայան Բ. Պ., Իրանի լորերի էթնիկական զարգացման մի քանի առանձնահատկությունները), էջ 93-116:

Акопов Г. Б. - Основной принцип классификации народов древнеиранской историко-эпической традицией (Ակոպով Գ. Բ., Ժողովուրդների դասաբաժանման հիմնական սկզբունքները հին իրանական պատմավիպերգային ավանդության կողմից) էջ 117-149:

Մարտիրոսյան Հ. Հ. -Հայերի տեղաբաշխումը Իրանում (դեմոգրաֆիկ տվյալներ), էջ 150-173:

Մովսիսյան Հ. Հ. -Էջեր պարսկական թատրոնի պատմությունից, էջ 174-190:

Шехоян Л. Г. - Сатирические газетные жанры в персидской прессе начале века и их значение для развития прозы нового типа (Շեխոյան Լ. Հ., Լրագրային երգիծական ժանրերը դարասկզբի պարսկական մամուլում և նրանց նշանակությունը նոր տիպի արձակի զարգացման համար), էջ 191-206:

Չուգասզյան Բ. Լ. -Հայ-Պարսկականք, էջ 207-218:

